Ա. Աղաջանյան

ԼԵՆԻՆԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ 1957

Հրատարակվում է
Հոկտեմբերյան Սոցիալիստական
Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի առթիվ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

К. С. КОЗМОЯН

ЛЕНИНАКАН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1957

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ-63
Ամաչ.
9(47.925)

Կ. Ս. ԿՈՋՄՈՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1981 թ.

ԼԵՆԻՆԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1957

Տպագրվում է Հայկական ՍՍՌ· Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ։

A 11/9443

Վ. Ի. Լենինի արձանը Լենինականում

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի սոցիալիստական քաղաքների պատմությունը դրվել մեր պատմագրության կարևորագույն խնդիրներից մեկն է։ Սկսելով դրանից, ձեռնամուխ եղանք և առաջին հերթին գրեցինք Հայկական ՍՍՌ-ի արդյունաբերության և կուլտուրայի խոշոր կենտրոններից մեկի՝ Լենինական քաղաքի պատմությունը։

Սույն աշխատությունը շարադրելիս օգտագործել ենք Հայաստանի պետական կենտրոնական, ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի, Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչության, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի և Հայրենական պատերազմի պատմության կաբինետի, Լենինականի Քաղաքային Սովետի Գործադիր Կոմիտեի բաժինների, քաղաքի տրստադրական, տրանսպորտի և ուսումնական հիմնարկ-ձեռնարկների արխիվների համապատասխան ֆոնդերի նյութերը։ Հետազոտել ենք ինչպես սովետական շրջանի («Կարմիր Շիրակ», «Բանվոր», «Մանածագործ», «Երկաթուղային», «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Մարտակոչ», «Լենինյան ուղի», «Նոր ուղի» և այլն), այնպես էլ նախասովետական շրջանի («Մշակ», «Արարատ», «Կուսակ Հայոց աշխարհի», «Փորձ» և այլն) թերթերն ու ամսագրերը։ Օգտագործել ենք պատմական, հնագիտական, ճարտարապետական, դեղարվեստական մի շարք աշխատություններ, ժողովածուներ և գիտական առանձին ուսումնասիրություններ, որոնք նվիրված են ՍՍՌՄ տարբեր քաղաքների պատմությանը։

Աշխատության առաջին բաժինը շարադրելիս օգտվել ենք ընկ. ընկ. Ա. Հովհաննիսյանի, Վ. Պարսամյանի, Մ. Աղայանի, Գ. Զարիբջանյանի, Հ. Էլչիբեկյանի, Ա. Հակոբյանի և Ա. Մելքոնյանի մենագրություններից մեր թեմային առնչվող էջերից։

Լենինական քաղաքի պատմությամբ զբաղվել են նաև ֆիլոլոգիական դիտությունների թեկնածու Հ. Հովհաննիսյանը և Ա. Մովսիսյանը։ Այդ առթիվ կա նրանց ձեռագիր աշխատությունը։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ

Լենինականը (Կումայրի, Գյումրի, Ալեքսանդրապոլ) Հայաստանի հնագույն բնակատեղիներից մեկն է, սկսած բրոնզի դարից։ Այդ են ապացուցում 1934 թ. այնտեղ կատարված պեղումները՝ հայտնաբերված շինատեղերը, բրոնզե կայենի քարե կապարները, ինչպես նաև այդ շրջանին վերաբերող այլ իրեր։ Բնակչության հիմնական զբաղմունքը եղել է երկրագործությունն ու անասնապահությունը։

Մեր թվարկությունից առաջ, VIII դարում հղած ուրարտական տարեգրքերում հիշատակվում է Երիախի (Շիրակի) Երկրում կատարված բազմաթիվ արշավանքների մասին։

Մեր թվարկությունից առաջ VII—III դարերում, երբ Հյուսիսային Կովկասից կիմերական և սկյութական քոչվոր ցեղերը գաղթում են փոքրասիական երկրներն ու Անդրկովկաս, նրանցից որոշ ցեղախմբեր բնակություն են հաստատում Շիրակի գաշտավայրում։ Այդ կապակցությամբ Գյումրի քաղաքի անվան մասին կա այն մեկնաբանությունը, թե այն ծագել է կիմեր ցեղի անունից, ապա հետագայում հնչյունափոխվել և դարձել է Գյումրի։

Ակադեմիկոս Հ. Սանանդայանը իր աշխատություններից մեկում, խոսելով Գյումնիաս քաղաքի տեղադրության մասին, ենթադրում է, որ Քսենոֆոնի ասած հազարանոց հելլենական զորքը, նահանջի ժամանակ, մեր թվարկությունից առաջ, 400-ական թվականներին, անցել է սկյութների բնակավայրերով, որոնք գանվելիս են եղել այժմյան Կարս-Լենինական շրջաններում։

Հ. Մանանդյանը, վերլուծելով Քսենոֆոնի վկայությունը, գրում է, որ «Սկյութենական երկրի գյուղերից, որոնք գտնվում էին Արարատյան դաշտում, ինչպես վկայում է Քսենոֆոնը, հույներն անցել էին շորս օրվա ճանապարհ, քսան փարասխ (մոտ 100 կիլոմետր) և հասել էին «մեծ, հարուստ և բազմամարդ» մի քաղաքի մոտ, որն անվանվում էր Գյումնիաս։ Ինձ թվում է, որ նահանջող զորքի այս ճանապարհը պետք է ենթադրել Արարատյան դաշտից դեպի Շիրակ, իսկ Գյումնիաս քաղաքը, համաձայն Քսենոֆոնի ցույց տված տարածության, պետք է լինի հին Կումայրին, այժմյան Լենինական-Գյումրին։ Քսենոֆոնի մոտ այս քաղաքի Գյումնիաս անունը պարզապես Կումայրի-Գյումրիի հին անվան աղավաղություն է...»[1]։

Կումայրիի մասին մեզ առաջին գրավոր տեղեկությունը տալիս է Ղևոնդ պատմիչը (VIII դար)։

Ղևոնդ պատմիչը, նկարագրելով հայ ժողովրդի պայքարն արաբական զավթիչների դեմ, գրում է. «Հայոց նախարարները, երբ տեսան իրենց վրա հասնող տագնապալի վտանգը, մահը աչքի առաջ ունենալով, ձեռնամուխ եղան այնպիսի գործերի, որ չէին կարող գլուխ բերել, որովհետև սակավաթիվ էին։ Սակայն, նախընտրելով քաջությամբ մեռնելը, քան վտանգալի կյանքը՝ ձեռնամուխ եղան ապստամբության գործին և մերժեցին Իսմայելի հպատակությունը։ Այս բանի սկզբնավորությունը տեղի ունեցավ Արտավազդի ձեռքով, որը Մամիկոնյան տնից էր։ Սա գնալով Դվին մայրաքաղաքը՝ զորքերից մեծ բանակ է պատրաստում և այնտեղ ստանում զենքեր ու հանդերձանք։ Զինվելով զրահներով ու սաղավարտներով և սմեն տեսակի զենքերով, իրեն մտերիմ էր ցույց տալիս Իսմայելի զորքին, իբր թե նրա թշնամիների դեմ կռվելու համար էր պատրաստվում, որից հետո, անջատվելով նրանց ընկերակցությունից, հասնում է Շիրակի գավառի Կումայրի գյուղը և սպանում հարկահանին և ինչ որ գտնում է նրա ձեռքում, առնելով դնում է իր ամրոցը

---

[1] Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Հայպետհրատ, 1944 թ., էջ 16—17.

կայքով դեպի վրաց աշխարհի կողմերը, իր հետ ունենալով երկրի բոլոր նախարարներին»[1]։

Ղևոնդ պատմիչի տեղեկության հավաստի լինելու մասին է վկայում 1867 թ. ռուս զինվորների կողմից Ալեքսանդրապոլի՝ Ջերբեկի Խորում օրի ճանապարհ բաց անելիս հայտնաբերված եկեղեցին երեք փոքր մատուռներով և մի քանի դերեզմաններ։ Եկեղեցու վրա կա Հայոց Ս Ե (—756) թվականը, իսկ դերեզմանաքարերի վրա՝ հայատառ մակագրություններ[2]։

Հայաստանը, գտնվելով Արևմուտքի և Արևելքի բախման կետում, շարունակ ենթարկվել է օտարերկրյա զավթիչների արշավանքներին։ Օտարերկրյա զավթիչները, հրով ու սրով անցնելով Հայաստանով, ավերել են նրա գյուղերն ու քաղաքները, կողոպտել երկրի հարստությունը, խոշտանգել ու բնաջնջել նրա բնակչության զգալի մասը։ Սակայն, հայ ժողովուրդը, բարձր պահելով իր հայրենիքի ազատության ու անկախության դրոշը, հերոսաբար պայքարել է արտաքին զավթիչների դեմ։

Հայ ժողովրդի պատմության մեջ ամենածանրն ու ամենամռայլը եղել է շահական Պարսկաստանի, սուլթանական Թուրքիայի տիրապետության ժամանակաշրջանը։ Տիրելով Հայաստանին, մասնատելով այն, Արևմտյան մասում իրենց դերիշխանությունն են հաստատել թուրքական զավթիչները, իսկ Արևելյանում՝ պարսկական խաները։

Թուրքիայի և Իրանի տիրապետության տարիներին, գյուղատնտեսության հետամնացության պատճառով, աշխատանքի արտադրողականությունը ցածր էր։ Երկրի արտադրողական ուժերը դեպի անկում էին գնում, արհեստների և առևտրի զարգացման հնարավորությունները սահմանափակ էին, ինչպես իրենց ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի տրն-

[1] Տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887 թ., էջ 137—138։

[2] Շիրակ, Տեղագրութիւն պատկերազոյդ, հավաքեց Հ. Ղևոնդ Վ. Ի. Սիլիշան, Վենետիկ—Ս. Ղազար, 1881, էջ 155։

տնտեսական-բաղաքական և կուլտուրական կյանքի զարգացումը արգելակվում էր։

Թուրքական փաշաներն ու իրանական խաները, կալվածատերերը, գյուղացիներին հարկատվելով, նրանց վրա ծանր հարկեր էին բռնադրում, հափշտակում էին նրանց ունեցվածքը, քամում նրանց աշխատանքի արդյունքը, իսկ անհնազանդներին ֆիզիկական խոշտանգումների էին ենթարկում։ Այսպես էր հայ բազմաչարչար ժողովրդի վիճակը XVII—XVIII դարերում։

Անդրկովկասի եղբայրական բախտակից ժողովուրդները, գտնվելով չափազանց ծանր պայմաններում, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, էլ ավելի են ուժեղացնում իրենց պայքարը պարսկական և թուրքական զավթիչների դեմ։ 1801 թ. Արևելյան Վրաստանի, իսկ 1805—1806 թթ. Ադրբեջանի միացումը Ռուսաստանին ավելի է ոգեշնչում հայ ժողովրդին՝ ազատագրվելու պարսիկների ու թուրքերի դաժան տիրապետությունից։

1826—1828 թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմում ռուսական զորքերը, Անդրկովկասի ժողովուրդների օգնությամբ, խոշոր հաղթանակներ են տանում պարսկական զավթիչների դեմ։ 1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական քաջարի բանակը, հայ խիզախ կամավորների հետ միասին, գրավում է Երևանի բերդը՝ պարսկական տիրապետության վերջին հենարանը Հայաստանում։ Այդ պատմական հաղթանակը տնտեսական, քաղաքական տեսակետից խոշոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա զարգացման համար։

1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով իրավականորեն ձևակերպվեց Ռուսաստանի հաղթանակը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։ Անդրկովկասյան ժողովուրդները՝ վրացիները, ադրբեջանցիները և հայ ժողովրդի մի մասը, անցան Ռուսաստանի տիրապետության տակ։ Դրանով հայ ժողովրդի այդ հատվածը փրկվեց ասիմիլյացիայի և ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից։ Ստեղծվեց Հայկական մարզը, որտեղ հայ ազգաբնակչության թիվը գգալիորեն աճեց արևմտահայերի և պարսկահայերի մի մասի ներգաղթի շնորհիվ։

Հայկական մարզը դարձավ հայ ժողովրդի համախմբման կենտրոնը, նրա հետագա տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման հիմնական օջախը։

Ռուսաստանը դանվելով տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակի վրա և իրեն միացնելով Արևելյան Հայաստանը, վերջինիս հետագա տարիներին ներգրավում է կապիտալիստական հարաբերությունների զարգացման ոլորտը, օբյեկտիվորեն նպաստում երկրի արտադրողական ուժերի զարգացմանը։

Վ. Ի. Լենինը խոսելով Անդրկովկասում ռուսական կապիտալիզմի կատարած դերի մասին, գրում է.

«...ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում։ Հետոնեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկանտների երկիր...»[1]։

Այդ բազայի վրա ամրապնդվում էին Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերը Անդրկովկասի ժողովուրդների, ինչպես նաև ռուս ժողովրդի հետ։

Կապիտալիստական հարաբերությունների ծավալման, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման, առևտրի աճման հետ միասին, ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում աճեցին մի շարք քաղաքներ, այդ թվում՝ Հայաստանի կարևորագույն քաղաքներից մեկը՝ Ալեքսանդրապոլը, որը մինչև Ռուսաստանի հետ միանալը, այսինքն՝ XIX դարի սկիզբը, տարբեր ժամանակներում ընկել էր մերթ պարսիկների, մերթ թուրքերի գերիշխանության տակ, որի պատ-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 3, էջ 771։

ճառով քաղաքը միշտ ոտնակոխ էր եղել, ավերվել ու թալանվել, իսկ բնակիչները հաճախ ստիպված են եղել դաղթել այլ վայրեր։

* * *

1804 թ. հունիսին գեներալ-մայոր Տուչկովը Գյումրիի մոտ պարտության է մատնում պարսկական զորքերին[1]։ 1805 թ. մարտի վերջերին գեներալ-մայոր Նեսվետաևի հրամանատարությամբ գործող միավորումները գրավում են Շորագյալը (Շիրակը) և ամրոցջոջվին հնթարկում իրենց[2]։

Գյումրին ռուսական բանակի կողմից գրավվելուց հետո, այնտեղ պահվում էր կողակներից կազմված մշտական կայազոր։

1817—1820 թթ. Ռոբերտ Կեր Փորտերը իր ուղեգրություններում գրում է. «Մենք հասանք Գյումրի քաղաքը, թուրքական սահմանի դիմաց ռուսական մի զորավոր կայան։ Դա դասավորում է քիչ բարձր հողատեսի վրա, լավ դիրքով, ունի բավական մեծաթիվ պահակազոր և արագորեն ամրացվում է»[3]։

Այսպիսով, 1826—1828 թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ, Գյումրին ռուսական զորքերի համար ծառայում էր որպես առաջապահ դիրք, որտեղ զորային միավորումների համար սարքարում էին զինամթերք և սննդամթերք։

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, արևելահայերն ազատագրվելով պարսիկների տիրապետությունից, իրենց բախտը կապեցին ռուս մեծ ժողովրդի հետ։ Արևմտահայերը նույնպես չցանկանալով մնալ Թուրքիայի տիրապետության տակ, նրանց մի մասը ռուս-թուրքական պատերազմից հետո, թողնելով իր մշտական բնակավայրերը, կրելով աննկարագրելի զրկանքներ ու տառապանքներ, ռու-

---

[1] „Кавказский календарь" за 1865 г., Тифлис, отд. III, стр. 14.

[2] Նույն տեղում։

[3] Հովհ. Հախոբյան, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, «Ուղեգրություններ», հատ. Զ, ԺԹ դարի առաջին քառորդակ (1800—1820), Երևան, 1934 թ., էջ 742։

սական զորքի հետ անցնում է գրավված քաղաքներն ու գյուղերը։ Երբ եղավ գաղթի թույլտվությունը, 1829—1830 թթ. Էրզրումից, Կարսից, Բայազետից, Արդահանից 90 հազար հայեր գաղթեցին ռուսական տիրապետության շրջանները։ Կարսեցի, Էրզրումցի 2500 ընտանիքների մի մասն անցնելով Ախուրյան գետը, բնակություն հաստատեց Գյումրիում, իսկ մնացած մասը՝ Թալինի, Ապարանի, Լոռի-Փամբակի շրջաններում։ Գաղթածները մեծ մասամբ արհեստավորներ, գյուղացիներ և մասամբ առևտրականներ էին։ Գյումրի գաղթածները իրենց համար բնակության վայր ընտրեցին քաղաքի հարավային մասում գտնվող ընդարձակ դաշտը, որի մի կողմից անցնում էր Ախուրյան գետը, իսկ մյուս կողմում՝ հեռվից երևում էր քառադագաթ Արագածը։

Ժամանակակից Մարտիրոս քահանա մահտեսի Կարապետյանը գրում է, որ 1837 թ. հոկտեմբերի 3-ին Ախալցխայից Ախալքալաքի վրայով Գյումրի ժամանեց կայսրը՝ Նիկոլայ I-ը, որի ներկայությամբ ամրոցում կառուցվելիք ռուսական եկեղեցու հիմքը դրվեց[1]*։ Նույն օրն էլ Նիկոլայ I կայսրը Գյումրին վերանվանեց կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անվամբ՝ Ալեքսանդրապոլ*[2]*։*

Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու առաջին տարիներին Գյումրիում կառուցվեց ռազմական խոշոր նշանակություն ունեցող բերդ՝ քաղաքի և Ախուրյան գետի միջև ընկած բարձունքի վրա։ Սա իր ժամանակի ամենաամուր

---

[1] *Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարան, ձեռագիր N 8223, էջ 138 բ։*

[2] К. Ф. Ган. Опыт объяснения кавказских географических названий, Тифлис, 1909 г., стр. 8.

Ալեքսանդրապոլ անվան մասին դրականության մեջ կան նաև ուրիշ բացատրություններ։ Ըստ Ա. Երիցյանի Գյումրի քաղաքը Ալեքսանդրապոլ է կոչվել առաջին եկեղեցու Սրբուհի Ալեքսանդրայի անունով (տե՛ս «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում», մասն Բ, էջ 434)։ Իսկ ըստ Վ. Պոտտոյի, քաղաքը Ալեքսանդրապոլ է կոչվել ի պատիվ Ալեքսանդր I-ի, որի ժամանակ Ճորագյալը միացել է Ռուսաստանին։ (Տե՛ս В. Потто, Памяти старых кавказцев, Тифлис, 1897, стр. 4.)

բերդերից էր և կարող էր տեղավորել մոտ 15 հազար հոգի։ Բերդի շուրջը լայն իրամատներ էին փորված՝ թշնամու համար անանցանելի դարձնելու նպատակով։ Բերդի աջ ու ձախ կողմերին կառուցված էին երկու մեծ աշտարակներ՝ մեկը կարմիր, մյուսը՝ սև քարից, դրա համար էլ կոչվում էին կարմիր և սև դուլաններ։ Բերդից արևելք ընկած էր Ալեքսանդրապոլը, որը 1845—1846 թթ. ուներ 16337 բնակիչ, որից 15297 հայ, 575 ռուս և հույն, 430 թուրք և 35 հրեա[1]։ Ալեքսանդրապոլի տների դիրակշռող մասը մի հարկանի էր։ Քաղաքի կենտրոնում էր գտնվում շուկան։ Շուկայի շուրջը կային միաձև կառուցված բազմաթիվ խանութներ։

Փողոցները շախմատային տախտակի նման ուղիղ էին ու երկար, բիչ նրբանցքներով, հյուսիսից հարավ ձգվում էին հարթ տարածության վրա, իսկ արևելքից արևմուտք ներկայացնում էին բազմաթիվ այիքավորումներ։ Մի շարք փողոցներ սալահատակված էին։ Փողոցներում և տների բակերում շատ բիչ ծառեր կային։ Տները, մեծ մասամբ, շինված էին քաղաքի շրջակայքում գտնվող սև տուֆից, որոնք տարիների ընթացքում հողմահարվելով՝ գորշ գույն էին ստացել։ Ալեքսանդրապոլի շենքերն ունեին քանդակազարդ քիվեր (կարնիզներ), լուսամուտների և դռների վերևում զարդաբարեր, որոնք ճարտարապետական տեսակետից բարձր արժեք են ներկայացնում։ Ալեքսանդրապոլի արհեստավորները՝ սրճաղիրները, քարտաշները, հիանալի ճանաչելով իրենց ունեցած շինանյութերը՝ քար, ավազ, կիրն ու խիճը՝ դրանցով կերտել են կոթողներ։ Դրա լավագույն վկայությունն է Ալեքսանդրապոլի ս. Փրկիչ եկեղեցին, որի կառուցմանը ոչ մի ինժեներ չի մասնակցել։

Քաղաքի տարբեր մասերում տների միջից բարձրանում են Ալեքսանդրապոլի եկեղեցիները։ Դրանցից ամենամեծը ս. Ամենափրկիչ եկեղեցին է, շինված 1859—1873 թթ. Անիի մայր եկեղեցու ձևով[2], ապա Յոթվերքը կամ Աստվածածինը,

[1] „Кавказский календарь" за 1849 г., отд. III, стр. 27.

[2] Եկեղեցին կառուցել են սրճաղիր-վարպետներ Պապիկ Կարապետյանը (Բալասաշյանց) և Թադեոս Կարապետյանը (Անտիկյանց)։

ս. Նշանը կամ Սև ժամը, Գեղացոց ժամը, կաթոլիկների, հույների, ռուսների եկեղեցիները։

Աշուղ Ջիվանին, միանգամայն իրավացիորեն ծաղրի ենթարկելով այդ եկեղեցամոլությունը, ասել է.

Մի նոր քաղաք տեսա ժամի սիրահար,
Բնակիչները հայ՝ մոտ քսան հազար,
Իրանք անունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցեք։

Քաղաքի արևմուտյան կողմում Ջերբեզի ձորն է, արևելյան մասում, հարթ ատրածության վրա երկաթուղային կայարանը։ Քաղաքի երեք կողմերում ընկած են զորանոցները, արևմուտքում Ախուրյանի ափին՝ Սեվերսկին, հյուսիսում՝ Պոլիգոնը, հարավում՝ Կազաչի պոստը։ Քաղաքում հյուսիսից հարավ զուգահեռ հոսում են Գյումրի-չայն ու Բոշի-չայը։ Քաղաքի արևմուտքում և հարավ-արևմտյան կողմումն են գտնվում բանջարանոցները։

Ռուսական տիրապետության ժամանակ երկրի տնտեսական կյանքի աշխուժացման, արհեստների և առևտրի ծավալման հետևանքով կառուցվեցին մի շարք խճուղիներ՝ ճանապարհներ, որոնք ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի գլխավոր կենտրոնները կապեցին Ռուսաստանի հետ։

1898 թ. կառուցվում են Թիֆլիս—Ալեքսանդրապոլ, 1903 թ. Ալեքսանդրապոլ—Երևան, այնուհետև Ալեքսանդրապոլ—Կարս—Սարիղամիշ, Երևան—Ջուլֆա երկաթուղագծերը, որոնք նոր հնարավորություններ են ստեղծում ռուսական և եվրոպական կապիտալիստների՝ մասնավորապես գործելու Անդրկովկաս՝ նրա բնական հարստությունները շահագործելու նպատակով։ Հայաստանի ուրիշ քաղաքների հետ միասին, աճում էր նաև Ալեքսանդրապոլը, որը XIX դարի վերջերին ուներ 3825 տուն, մոտ 25 հազար բնակիչով։ Ալեքսանդրապոլի բնակչության մեծ մասը հայեր էին. կային նաև 60 տուն հույներ, 100 տուն թուրքեր, որոնք զբաղվում էին առևտրով, 100 տուն ռուս դին-

վորականների ընտանիքներ։ Քաղաքում արհեստներով, առևտրով և հողագործությամբ զբաղվողները գլխավորապես հայերն էին։

Ռուս զինվորականները երկար տարիներ ապրելով Ալեքսանդրապոլում, Գորկա գյուղավայրի հարավային կողմում իրենց համար բնակարաններ են կառուցում և հաստատվում այդ թաղում, որը կոչում են Սյարոդկա։ Քաղաքի հարավ-արևելքում, բլրակի վրա, իրենց բնակությունն են հաստատում թուրքերը, այդ թաղն անվանում են Թուրքի մահլա (թաղ), իսկ դրանից հյուսիս, շհասած թուրքերի մահլին, հույն բնակիչների թաղը կոչում են Ռումնոց մահլա, հայ կաթոլիկների թաղը կոչում են Ֆրանկների մահլա։ Հողե բարձունքից հյուսիս, ձորակում հավաքվում են դաղթական հայ բոշաները, որոնց թաղը կոչում են Բոշի մահլա։ Գյումրիի կենտրոնական մասում խմբվում են Արևմտյան Հայաստանի քաղաքներից դաղթած հարուստները։ Երբ բերդը շինվում է, Գյումրին ընդարձակվում է դեպի քաղաքի հյուսիս արևելյան ձորակի շուրջը, նորանոր տներ են շինվում և այդ նոր շինված թաղն էլ կոչում են Ձորի-բողաղ կամ Ռանչպարների մահլա։

Ալեքսանդրապոլը հիմնականում արհեստավորական քաղաք էր, բնակչության ճնշող մեծամասնությունը արհեստավորներ էին՝ որմնադիրներ, քարտաշներ, ատաղձագործներ, անագագործներ, դարբիններ, պղնձագործներ, կոշկակարներ և այլն։ Արհեստավորները համախմբված էին համքարական կազմակերպությունների մեջ և զբաղեցնում էին առանձին փողոցներ։

1840-ական թվականներին Ալեքսանդրապոլը վրացիներեթյան նահանգի կազմում էր, կային մեծ թվով արհեստավորներ, իսկ 1850-ական թվականներին, երբ Ալեքսանդրապոլը դառնում է Երևանի նահանգի գավառային քաղաք, արդեն կար 28 համքարություն, որոնց մեջ ընդգրկված էին 2602 արհեստավորներ՝ վարպետներ, վարպետացուներ և աշկերտներ։

Քաղաքի բնակիչներն զբաղվում էին արհեստներով, առևտրով և հողագործությամբ։ Հողը շափալանց բերրի էր,



Ալեքսանդրապոլը 1850-ական թվականներին

ստացվում էր առատ և ընտիր ցորեն, դարի, հաճար[1]։ Գյուղատնտեսությունից ստացվող արտադրանքի մեծ մասը հանվում էր շուկա։ Շնորհիվ կայազորի, երկաթուղային հանդույցի, քաղաքում առևտուրը մեծ չափերի էր հասնում, որը խոշոր տեղ էր լնում նրա տնտեսական կյանքում։ 1895—1900-ական թվականներին Ալեքսանդրապոլում եղել են 435 առևտրական միավորներ, որոնք տարեկան կատարել են 3,5 միլիոն ռուբլու շրջանառություն։ Դրանցից մինչև 500 ռուբլու առևտուր անողները եղել են 336 հոգի, մինչև 20 հազար ռուբլու՝ 78, մինչև 50 հազար ռուբլու՝ 10, իսկ 50 հազարից ավելի բարձր առևտուր անողները եղել են 11 հոգի։ 1902 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում բացվում է քաղաքային բանկը, որը նոր հնարավորություններ է ստեղծում քաղաքի վաճառականների և առևտրականների համար։ Հարուստներն իշխող դիրք ունեին, նրանց ձեռքին էր գտնվում հողերի մի մասը, առևտրի մեծ մասը և արտադրական ձեռնարկությունները։ Այդ հարուստների մեջ աչքի էին ընկնում Տիգրանյանները, Գորոյանները, Բաբայանները, Ալմոյանները, Ծալիկյանները, Չիթոզյանները, Հարությունյանները, Դրամբյանները և ուրիշները։ Սեյլանովները գործարան ունեին Թիֆլիսում, կալվածքներ՝ Ալեքսանդրապոլում, Անդրկովկասում և Թուրքիայում։ Լուցկու և մոմի առևտուրը արանց միջոցով էր կատարվում։ Բալդասարյանները և Խալաթյանները Ալեքսանդրապոլում իշխաններ (խաներ) ունեին, նրանք մանուֆակտուրային խոշոր առևտուր էին անում Կարսում, Երևանում, Թիֆլիսում։ Հակոբյանները երկաթի առևտրով էին զբաղվում։ Դրամբյանները Ալեքսանդրապոլում ունեին կալվածքներ, իշխաններ, ջրաղացներ և բազմաթիվ խանութներ տարբեր քաղաքներում։

---

[1] Ժողովրդի երկրագործությամբ զբաղվելու, Շիրակի բնբրիությանն, առատությանն մասին է վկայում V դարի պատմիչ Մ. Խորենացու ասացվածքը, որ «Եթե քո սրտիցը Շաբաթինն է։ մեր ամբարները Շիրակի ամբարները չենք» (Տես «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 40։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, կապիտալիզմի զարգացման շնորհիվ Ալեքսանդրապոլը ևս դուրս է գալիս իր նահապետական պարփակվածությունից, դառնում է Հայաստանի արհեստավորա-առևտրական կարևորագույն քաղաքներից մեկը, որն Ալեքսանդրապոլ—Թիֆլիս, Ալեքսանդրապոլ—Երևան, Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղու միջոցով կապվում է թե՛ Անդրկովկասի և թե՛ Ռուսաստանի քաղաքների հետ։ Տարեցտարի աճում է քաղաքի բնակչությունը, զարգանում են արհեստները ու առևտուրը։

1905 թ. Ալեքսանդրապոլում գործում էին հետևյալ արտադրական ձեռնարկությունները։

Հարպահատոցի	1	ձեռնարկ.	11	բանվոր,	1800	ռ.	արտադր
Օճառի	4	»	19	»	8500	»	»
Կաշվի	3	»	29	»	3700	»	»
Գարեջրի	[illegible]	»	28	»	52000	»	»
Այրարարց	3	»	18	»	4000	»	»
Չիթահան	1	»	13	»	3600	»	»
Ադյուռի	3	»	25	»	2350	»	»
Բրուտագործության	5	»	12	»	2000	»	»
Կ ր ի	3	»	18	»	4150	»	»
Հանրային ջրերի[1]	3	»	8	»	7000	»	»

Այդ 31 ձեռնարկություններում աշխատում էին 181 բանվոր, որոնց տարեկան արտադրանքը կազմում էր մոտ 90 հազար ռուբլի։ Մինչև 1912 թ. այդ ձեռնարկությունների վրա ավելանում է մի ջուլհականոց, սպիրտի երեք ձեռնարկություն, մեկ լուցկու ձուլարան[2] և մեխանիկական գործարան։ Դրանց արտադրանքը հասնում էր ավելի քան երկու հարյուր հազար ռուբլու։

XX դարի սկզբներին Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառում խոշոր գործարաններ չկային. ամբողջ արդյունաբեր-

[1] Обзор Эриванской губернии за 1905 г., т. № 4.
[2] Обзор Эриванской губернии за 1911 г., Ереван, вед. № 4

բական արտադրանքը ստացվում էր մանր ձեռնարկություններից և բազմաթիվ արհեստանոցներից, որոնք ոչ միայն բավարարում էին քաղաքի և գավառի պահանջները, այլև արտադրանքի մի մասը արտահանվում էր այլ գավառներ։

* * *

Ալեքսանդրապոլում 1850—1860-ական թվականներին գործել են Ալիքսան, Խորեն, Մկրտիչ, Կարապետ ուսուցիչների (իսալիֆաների) մասնավոր դպրոցները, ուր երեխաներին դրագիտություն են սովորեցրել։ Ինչպես մասնավոր, այնպես էլ ծիսական դպրոցները չեն ունեցել համապատասխան հարմարությամբ դպրոցական շենքեր, դասավանդման համար դիդակտիկ պանագան նյութեր և այլն։

1870—80-ական թվականներին քաղաքի դպրոցների վիճակը զգալիորեն բարելավվում է, շնորհիվ մի շարք մարդկանց, որոնք կրթություն ստանալով, գալիս են Ալեքսանդրապոլ։ Դրանցից են՝ Ս. Բեկնազարյանցը, Ա. Բաբայանցը, Ղ. Աղայանցը, Հ. Ղուկասյանցը, բժ. Գ. Հովհաննիսյանցը, Ա. Եղիկյանցը, Հ. Մաամակյանցը և ուրիշները։ Գրոզմանիավարժ Ղ. Աղայանը, այդ տարիներին գտնվելով Ալեքսանդրապոլում, «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» աշխատությունում գրում է. «Ամբողջ Կովկասում ոչ մի դպրոց չկար, որ Ալեքսանդրապոլի դպրոցների բարեկարգությունն ուներ։ Մանկավարժական ամեն տեսակ խնդիրներ այդտեղ սկսեցին մշակվել, ամեն տեսակ հոդվածներ այդտեղ սկսեցին գրվել, մանկավարժական ամեն մի խելացի պահանջ, որ միայն գրքերումն էին, այստեղ իրագործություն էին ստանում»[1]։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Ալեքսանդրապոլում գործել են մի շարք դպրոցներ, այդ թվում առևտրա-

---

1 Ղ. Աղայան, երկեր, հատ. Գ, Պետհրատ, Երևան, 1940 թ., էջ 150—152։

կան դպրոցը, քաղաքային ուսումնարանը, վիճակային հոգևոր դպրոցը, Արղությյան և Սահականուշյան օրիորդաց ուսումնարանները, կանանց գիմնազիան, Կովկասյան հայ կաթոլիկների ուսումնարանը[1] և տասից ավելի ծխական դպրոցներ։ Ծխական դպրոցներից ամենամեծը Պետրոս քահանա Սատնիշյանցինն էր։ Քաղաքի դպրոցներում սովորողներից բացի, 64 հոգի սովորել են Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Էջմիածնում, Խարկովում, ինչպես նաև արտասահմանում։

Ցարական կառավարությունը մի քանի անգամ փակել է հայկական դպրոցները, արգելել մայրենի լեզվով տարվող պարապմունքները։ Այդ կապակցությամբ ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Ալեքսանդրապոլում եղել են մասսայական դժգոհություններ և ուժեղ շարժումներ։ Դպրոցները նորից բացվել են, բայց որոշ առարկաներ հանվել են, որոշ առարկաներ էլ ավելացվել։

Ալեքսանդրապոլում գործել է քաղաքային հիվանդանոցը մի քանի բժիշկներով և բուժաշխատողներով։ Եղել են նաև տարբեր մասնագիտությամբ բժիշկներ, բայց բնակչությունը միաժամանակ դիմել է հեքիմների։

Նախասովետական շրջանում Ալեքսանդրապոլում գործել են Սանոյանի, Մալխասյանի, Ղասաբյանի, Միքայելյանների և Ափինյանի տպարանները, որոնք սկզբներում դանդաղ մանր պատվերներ են կատարել, իսկ հետագայում տպագրել են թերթեր, հանդեսներ, օրացույցներ, գրքեր և այլն։

1899 թ. Կ. Ափինյանի խմբագրությամբ լույս է տեսել «Շիրակի օրացույցը», որը լայն տարածում է ունեցել։ Այնուհետև 1902 թ. լույս է տեսել «Հայ կանանց օրացույց» հանդեսը։ 1912 թ. «Արադած», 1913 թ. «Գավառի ձայնը», 1919 թ. «Գյուղացիական միություն» շաբաթաթերթերը, իսկ 1919 թ. կեսերից՝ «Ալեքսանդրապոլի լրաբեր» գրական-քաղաքական-հասարակական օրաթերթը և մի շարք ուրիշ թեր-

[1] Обзор Эриванской губернии за 1897 г., прилож. № 8.

թեր, ամսագրեր և գրական-գեղարվեստական տալմանախներ[1]։

Ալեքսանդրապոլում մշտական գործող թատերախումբը հնարավորություն է ստեղծել այնտեղ այցելելու բազմաթիվ ականավոր դերասանների, որոնք ելույթներ էին ունենում քաղաքի աշխատավորության համար։ Ալեքսանդրապոլում տարբեր ժամանակամիջոցում ելույթներ են ունեցել Գ. Զմշիկյանը, Պ. Ադամյանը, Հ. Զարիֆյանը, տիկին Սիրանույշը, Վ. Փափազյանը, Հ. Աբելյանը, Օ. Սայսուրյանը, Ա. Խարազյանը, Ա. Արմենյանը, Ե. Դուրյան-Արմենյանը, Շարա Տալյանը և ուրիշներ։

Ալեքսանդրապոլում այդ տարիներին կային աշուղներ Ջիվանին, Ֆահրադը, Խաչատը, Շերամը, Ջամալին և ուրիշներ։

Քաղաքում գործել են մի շարք կինոթատրոններ, ինչպես նաև ակումբը, ուր կայացել են համերգներ, պարի երեկոներ, զվարճալի խաղեր և այլ ելույթներ։

Ալեքսանդրապոլում եղել է ջերմային մի էլեկտրակայան, որն էներգիա է մատակարարել ինչպես արտադրական ձեռնարկություններին, այնպես էլ քաղաքի ունևոր բնակիչներ։

Քաղաքում եղել են բազմաթիվ հյուրանոցներ, իջևաններ, պանդոկներ, ինչպես նաև մի քանի հրաշալի բաղնիքներ։

*

Ալեքսանդրապոլի երկաթուղային և արտադրական ձեռնարկությունների բանվորներից ու արհեստավորներից առաջավորները, սերտ կապերի մեջ գտնվելով Անդրկովկասի բանվորական վայրերի, Ալեքսանդրապոլի ռուսական բանակի զորային միավորումներում գտնվող բոլշևիկների քաղաքական պայքարի մեջ ներգրավված առաջավոր գինվորականների

[1] Տե՛ս Գ. Լեոնյան, Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934 թ.։

հետ, կրելով նրանց ազդեցությունը, ռևոլյուցիոն պայքար են ծավալել ցարիզմի և բուրժուական կարգերի դեմ։

1902 թ. Ալեքսանդրապոլի կայազորում, իսկ 1903 թ. քաղաքում ստեղծվել են սոցիալ-դեմոկրատական խմբեր, որոնք սերտորեն կապված են եղել Բաքվի, Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ։

1905 թ. ծայր առած ռևոլյուցիոն շարժումներին ակտիվ մասնակցություն են ունենում նաև Հայաստանի բանվորներն ու գյուղացիները։ Նրանց ռևոլյուցիոն պայքարը գլխավորում էին բոլշևիկյան կազմակերպությունները։ Բանվորների և գյուղացիների պայքարը ռուսական ցարիզմի դեմ քանի գնում, ուժեղանում էր, մասսաների ռևոլյուցիոն շարժումն անընդհատ ծավալվում էր, հաճախակի տեղի էին ունենում գործադուլներ, ցույցեր։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Ալեքսանդրապոլը հանդիսանում էր Հայաստանի քաղաքական պայքարի կենտրոններից մեկը։ Քաղաքի աշխատավորները և կայազորի զինվորները, ՌՍԴԲՊ տեղական կազմակերպության ղեկավարությամբ, արձագանքում էին ռևոլյուցիայի իրադարձություններին։

1904 թ. դեկտեմբերին Բաքվի բանվորների և 1905 թ. սկզբներին Պետերբուրգի Պուտիլովյան գործարանի բանվորների գործադուլներն իրենց ազդեցությունն են ունենում Հայաստանի, մասնավորապես Ալեքսանդրապոլի բանվորների վրա։ Այդ օրերին գրված ՌՍԴԲՊ Ալեքսանդրապոլի կազմակերպության կոչերից մեկում ասվում է, որ 1905 թ. հունվարի 9-ին առաջին անգամ լսվեց ռևոլյուցիայի թմբկահարությունը, որն ամբողջ Ռուսաստանին արթնացրեց իր ձմեռային քունը։

1905 թ. մարտին տեղի է ունենում Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա երկաթուղային դեպոյի բանվորների գործադուլը։ Նրանց են միանում Ալեքսանդրապոլի դեպոյի բանվորները, որոնք պահանջում են կրճատել աշխատանքի ժամերը, բարձրացնել աշխատավարձը։ Գործադուլը ճնշվում է։ Ապրիլի սկզբներին Անդրեևիաթուղու բանվորները ընդհանուր գործա-

դուլ են սկսում, որին ակտիվ կերպով մասնակցում են Հայաստանի, մասնավորապես Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ Գործադուլավորները դադարեցնում են դնացքների երթևեկությունը։ Նրանք պայմանավորվում են չաշխատել մինչև չբավարարեն իրենց պահանջները։

Հոկտեմբերյան Համառուսաստանյան քաղաքական գործադուլին միանում են Թիֆլիսի և Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։

Հոկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլի բոլոր գծամասերում դադարում է դնացքների երթևեկությունը։ Կազմակերպվում է գործադուլային կոմիտե, որը բանվորական վերահսկողություն է հաստատում ամբողջ ուղեմասի վրա։

Հոկտեմբերի 16-ին գործադուլային կոմիտեն հրապարակում է թռուցիկ, որտեղ առաջադրված են բանվորների պահանջները. «Մենք, դեպոյի և Ալեքսանդրապոլի կայարանի ծառայողներս,— ասված է այդ թռուցիկում,— միանալով ռուսական երկաթուղայինների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք, որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների ընդհանուր որոշումը՝ գործի չանցնել, մինչև չբավարարվեն մեր ներբրոհիշյալ պահանջները, որոնք դրավական են հանդիսանում Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության...»[1]։

Հոկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլում իրենց աշխատանքները դադարեցնում են փոստ-հեռագրատան և մի շարք ուրիշ ձեռնարկությունների աշխատողներ։ Հոկտեմբերի 29-ին լույս է տեսնում Ալեքսանդրապոլի կազմակերպության կոչը, որի մեջ բացահայտված է 1905 թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստի նպատակը։ Այդ մանիֆեստը բիում էր բուրժուազիայի ու կալվածատերերի շահերից և ուղղված էր բանվորների դեմ։

Ռևոլյուցիոն շարժումն ու դինված ելույթները մեծ չափով տարածվել էին նաև Ալեքսանդրապոլի կայազորում, որտեղ

---

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 201, թ. 4։

գործում էր ՌՍԴԲՊ Ալեքսանդրապոլի զինվորական խումբը։ Կայազորում հաճախ կայանում էին միտինգներ, ուր զինվորներին բացատրում էին ռևոլյուցիայի նպատակները և դերի դերը նրանում։ Այդ միտինգները վերջանում էին ցարական կարգերի տապալման պահանջով։

Ռևոլյուցիոն հուզումներն ավելի են ուժեղանում հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ընդհանուր ռևոլյուցիոն վերելքի ժամանակաշրջանում։ Հենց այդ օրերին Ալեքսանդրապոլում ձևավորվում է զինվորների դեպուտատների սովետը, որը նշանաբան է ընդունում պայքարել ժողովրդի շահերի համար, դեկավարել նրանց պայքարը, որպես ռևոլյուցիոն օրգան և տապալել ցարական դաժան և ատելի տիրապետությունը։

1905 թ. նոյեմբերին ամբողջ Ռուսաստանում տեղի է ունենում փոստ-հեռագրատան ծառայողների գործադուլը, որին արձագանքում են Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի փոստի ծառայողները։

1905 թ. դեկտեմբերին Մոսկվայում սկսված զինված ապստամբության ժամանակ գործադուլ են հայտարարում երկրի բոլոր երկաթուղայինները, որին ակտիվ մասնակցություն են ունենում նաև Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ Նրանք կազմում են գործադուլային կոմիտե, որն իր հսկողության տակ է առնում ամբողջ հանգույցը։ Կոմիտեն կազմակերպում է ընկերական դատարան, փոփոխվում են ցարական պաշտոնյաները՝ դեպոյում, կայարանում։ Այնքպոլի բանվորները ձեռնամուխ են լինում զինված գրուժինների կազմակերպմանը։ Նրանք զինված ընդհարումներ են ունենում ոստիկանության հետ։

1905—1907 թթ. ինչպես ողջ Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում, բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժումները պլիսավորում էին բոլշևիկյան կազմակերպությունները։ Ալավերդում, Սանահնում, Ջալալ-օղլում (այժմ Ստեփանավան), Երևանում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում, այդ կազմակերպությունները հետևողական անհաշտ պայքար էին մղում կոնտրռևոլյուցիոն պարտիաների, մասնա-

վարպետս հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիայի՝ դաշնակցության դեմ, որոնք փորձում էին մթագնել բանվորների և գյուղացիների գիտակցությունը և նրանց ծառայեցնել բուրժուազիայի շահերին։

Ռուսական առաջին ռևոլյուցիան խոշոր փորձ հանդիսացավ և նախապատրաստեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան։

Վ. Ի. Լենինը գրել է. «Առանց 1905 թվականի «գլխավոր փորձի» 1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթությունն անհնարին կլիներ»[1]։

Ռեակցիայի ծանր տարիներից հետո բանվորական շարժման վերելքը ռևոլյուցիոն պայքարի մեջ դրավեց գյուղացիական մասսաներին և բանակի մեջ հուզումներ առաջացրեց։

1913—1914 թթ. արձագանքելով Մոսկվայի և Պետերբուրգի բանվորներին, գործադուլներ բռնկվեցին Դափանում, Ալեքսանդրապոլում, Լուլա տեսան պրոդրեսով թեղթեր։ Կազմակերպվեցին գյուղացիական միություններ, որոնց աշխատանքները գլխավորում էին բոլշևիկյան կազմակերպությունները։

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո, Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոնների օրինակով, Ալեքսանդրապոլում ևս ստեղծվում են բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետներ։ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը դուրս գալով ընդհատակից՝ պարտիական, քաղաքական լայն գործունեություն է ծավալում։ Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի դրվագումներով և պարտիայի տպրիլյան կոնֆերանսի որոշումներով, Ալեքսանդրապոլի բոլշևիկները անողոք պայքար են մղում դաշնակների, մենշևիկների, էսեռների կոնտրռևոլյուցիոն քաղաքականության դեմ։

1917 թ. հուլիսի 16-ին տեղի է ունենում Ալեքսանդրապոլի բոլշևիկների համաքաղաքային ժողովը, որտեղ Ալեքսան-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 131

դրապոյի բոլշևիկները կազմակերպչորեն անջատվում են մենշևիկներից և ձևավորվում ինքնուրույն կազմակերպության մեջ։ Ժողովը ընտրում է ՌՍԴԲՊ(բ) Ալեքսանդրապոլի կազմակերպության բյուրո, որի նախագահ է ընտրվում Պ. Արվելաձեն, իսկ քարտուղար Բ. Ղարիբջանյանը։ Սրանց խմբագրությամբ օգոստոսից լույս է տեսնում ՌՍԴԲՊ-ի Ալեքսանդրապոլի կոմիտեի օրգան «Պրավդա ժիզնի» թերթը[1], որը ռևոլյուցիոն պայքարի էր կոչում աշխատավորությանը։

Ինչպես առաջին համաշխարհային պատերազմի, այնպես էլ հետագա տարիներին խոշոր ռևոլյուցիոն աշխատանք կատարեցին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները Կոմունիստական պարտիայի սկանավոր գործիչ Ստ. Շահումյանի ղեկավարությամբ։

1917 թ. հոկտեմբերի 7-ին Ալեքսանդրապոլ է ժամանում Ստ. Շահումյանը, հոկտեմբերի 8-ը հայտարարվում է «Բոլշևիկների օր» և այդ օրը մեծ բաղմության առաջ հանդես է գալիս Ստ. Շահումյանը, ընթացիկ մոմենտի մասին զեկուցումով։ Ստ. Շահումյանի ցուցումով Ալեքսոլի կազմակերպությունը վերադասավորում է պարտիական ուժերը կայազորում, գեղոյում, բնակչության մեջ աշխատանք ծավալելու համար։

Հոկտեմբերի 9-ին նա նյութ է ունենում քաղաքի կայազորի զինվորների առջև և կոնկրետ ցուցումներ տալիս Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպությանը՝ հետագա աշխատանքների համար։ Հայաստանի բոլշևիկները, Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, պարզաբանելով համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դավթողական, թալանչիական բնույթը, աշխատավորներին ռևոլյուցիոն պայքարի էին կոչում և ապացուցում, որ հայ ժողովրդի աղատագրումը սերտորեն կապված է Ռուսաստանի պրոլետարիատի ռևոլյուցիայի հաղթանակի հետ։

---

1 Գ. Բ. Ղարիբջանյան, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917—1920 թվականներին, Հայպետհրատ, 1953 թ., էջ 41։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը նոր դարաշրջան բացեց մարդկության համաշխարհային պատմության մեջ։ Տապալելով կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը, Հոկտեմբերյան ռևոլյուցիան այդ ճնշումից ազատագրեց լայնատարած երկրի բոլոր ճնշված ժողովուրդներին։

Այդ մեծադույն պատմական հաղթանակը փրկեց ինչպես եղբայրական մյուս ճնշված ժողովուրդներին, այնպես էլ կործանման եզրին կանգնած հայ ժողովրդին, որն իր բախտը սերտորեն կապեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի հետ։

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիան ջերմ արձագանք գտավ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների մեջ։ Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի բանվորները, գյուղացիները և զինվորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հերոսական պայքար ծավալեցին սովետական կարգերի հաղթանակի համար։ Անդրկովկասի բազմաթիվ քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև Երևանում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Կարսում, Սարիղամիշում, Լոռիում և այլ վայրերում տեղի ունեցած միտինգներում ողջունելով սովետական կարգերի հաղթանակը Ռուսաստանում, միահամուռ կերպով պահանջում էին Անդրկովկասում ևս ստեղծել Սովետական իշխանություն։

Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն պարտիաները՝ դաշնակները, մուսավաթականներն ու մենշևիկները, նրանց կառավարական օրգանները, հենվելով գերմանա-թուրքական և ամերիկա-անգլիական իմպերիալիստների ուժերի վրա, Անդրկովկասը կտրեցին Սովետական Ռուսաստանից, հաստատեցին իրենց բուրժուա-նացիոնալիստական տիրապետությունը և կատաղի պայքար սկսեցին Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի համար ծավալված ռևոլյուցիոն շարժման դեմ։

Իմպերիալիստական պետություններն իրենց գավթողական պլաններն իրականացնելու նպատակով՝ Անդրկովկասի Եղբայրական ժողովուրդների դիտակցությունը թունավորում էին նացիոնալիզմի թույնով։ Այդ ժողովուրդների միջև հրահրում էին ազգամիջյան կոտորածներ և ավերիչ պատերազմներ։ Դաշնակների տիրապետության տարիներին հայ ժողովուրդը կործանման սպառնալիքի առաջ կանգնեց. երկրում թագավորում էր սուրն ու սովը, համաճարակն ու մահը։ Դաշնակ մասուլերիստները, խմբապետները, իրենց ապօրինի բոլոր գործողություններին օրենքի ուժ տալով, զբաղվում էին թալանով և մարդասպանությամբ։

Դաշնակների տիրապետության շրջանում Հայաստանը փաստորեն դարձել էր իմպերիալիստական պետությունների գաղութը, որին թալանում էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամիները։ Ճնշում էին բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժումները, կատարում բոլոր տեսակի կամայականություններ։ Դրա համար էլ «Հայաստանը դաշնակների ժամանակ,— ասում է Ա. Ի. Միկոյանը,—որբերի երկիր էր, արցունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականության երկիր»[1]։

Դաշնակների կառավարության մղած անվերջ պատերազմները, նրանց կազմակերպած ջարդերն ու ավերումները բայքայեցին ժողովրդական տնտեսությունը, անկման հասցրին գյուղատնտեսությունը, սովի ու համաճարակի մատնեցին Հայաստանի աշխատավորությունը։

1918 թ. մայիսին թուրքական զավթիչները սկսեցին իրենց հարձակումը Արևելյան Հայաստանի վրա։ Մայիսի 15-ի որոշակածումից հետո գրավեցին Ալեքսանդրապոլը նրա գավառի գյուղերի հետ միասին, ավերեցին, սովի ու զոհերի մատնեցին բնակչությանը։ Թուրքական զավթիչները շարժվեցին մի կողմից Երևանի, մյուս կողմից՝ Դարաքիլիսայի (այժմ Կիրովա-

---

[1] Ա. Ի. Միկոյան, Հաս Երևանի Սասյինյան ընտրական օկրուգի ընտրողների մոտ, 1937 թ. դեկտեմբերի 9, Բազմաբան, Երևան, 1939 թ., էջ 10։

կան) վրա։ Այդ ժամանակ հայ ժողովրդի ոչնչացման դիվային ծրագիր էին կազմել թուրքական պալթիշները։

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, հետևելով Ռուսաստանի աղաստակրված պրոլետարիատի օրինակին, ՌԿ(բ)Պ ղեկավարությամբ պայքար ծավալեցին սովետական կարգերի հաղթանակի համար։ 1918—1919 թթ. Հայաստանի մի շարք քաղաքներում և շրջաններում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Լոռում, Էջմիածնում, Շամշադինում, Դարալագյազում տեղի ունեցան բազմաթիվ ռևոլյուցիոն ցույցեր ու գործադուլներ դաշնակների տիրապետության դեմ, որոնք հրթեմն վերջանում էին զինված ընդհարումներով։

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում սովետական կարգեր հաստատվեցին, որն ավելի ևս ոգևորեց Հայաստանի աշխատավորներին՝ դաշնակների տիրապետության դեմ ուղղված նրանց պայքարում։

Դաշնակցական կառավարության տապալման, սովետական կարգերի հաղթանակի համար Հայաստանի բանվորների ու գյուղացիների առաջին մասսայական ռևոլյուցիոն շարժումը բռնկվեց 1920 թ. մայիս ամսին։

Հայաստանի քաղաքներում և շրջաններում տեղի ունեցած Մայիսամեկյան ցույցերը ուղղված էին դաշնակների տիրապետության դեմ։

1920 թ. մայիսի մեկը՝ բանվորների միջազգային օրը տոնվեց Հայաստանի բոլոր վայրերում, մասնավորապես Երևանում, Ալեքսանդրապոլում, Դարաքիլիսայում, Կարսում, Ալավերդում, Բայազետում, Սարիղամիշում։ Հայաստանի բանվորները, զինվորները և գյուղացիները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, կազմակերպեցին միտինգներ, ցույցեր՝ «Կորչի՛ անպլո-ամերիկյան իմպերիալիստների գործակալ, հայ ժողովրդի սոսկիմ թշնամի դաշնակների կառավարությունը», «Կենցե՛ Սովետական Հայաստանը» լոզունգներով։

1920 թ. մայիսին, ՀԿ(բ)Պ-ի ղեկավարությամբ, տեղի ունեցավ զինված ապստամբություն, դաշնակների արյունոտ տիրապետությունը տապալելու, Սովետական իշխանություն հաստատելու համար։ Մայիսմեկյան ցույցերը բոլոր վայրերում անցան ռևոլյուցիոն մարտական լոզունգներով։

Մայիսի մեկի առավոտյան Ալեքսանդրապոլ կայարանում անդի ունեցած միտինգում ելույթներ են ունենում կոմունիստ հռետորները։ Ապա միտինգի մասնակիցները շարժվում են քաղաքի կենտրոնը։ Մինչև կենտրոն հասնելը, քաղաքային այդու մոտ հռետորները հանդես են գալիս կրակոտ ելույթներով։ Ցուցարարները շարժվում են դեպի զորանոցները. այստեղ հանդես է գալիս Ալեքսանդրապոլի կայարանում կանգնած «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար կապիտան Ս. Մուսայելյանը։ Նա զինվորների կողմից պատրաստակամություն է հայտնում պայքարելու սովետական կարգերի հաստատման համար։ Ցույցեր են տեղի ունենում Կարսում, Սարիղամիշում, ուր մասնակցում են նաև կայազորի զինվորները։

Մայիսի 7-ին Ալեքսանդրապոլում կայացած խորհրդակցությունը զինված ապստամբություն սկսելու համար ընտրեց Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն մայիսի 10-ին հատուկ կոչով դիմում է Հայաստանի աշխատավորներին, որ դաշնակների կառավարությունը տապալված է և հռչակված է Սովետական իշխանություն։

Ալեքսանդրապոլի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն, ձեռնամուխ է լինում Սովետական իշխանության մարմինների ստեղծման, ինչպես նաև ընակչությանը կենսամթերքներով ապահովելու հարցերին։

Ապստամբում են Ալեքսանդրապոլի շրջակա գյուղերը։ Քյաֆթարուի շրջանի գյուղացիները գյուղերում հայտարարում են Սովետական իշխանություն։ Կարսում ապստամբություն տեղի է ունենում մայիսի 10-ին, ուր ՌԿ(բ)Պ Հայաստանի կոմիտեի անդամ Գ. Դուկասյանը քաղաքում հայտարա-

ռում է Սովետական իշխանություն։ Կարսի Բոլշևիկ-ռևոլյուցիոն Կոմիտեն դրավում է քաղաքի կայարանը և ամրոցը։

Մայիսյան ապստամբությունը ծավալվում է նաև Հայաստանի բազմաթիվ վայրերում՝ Նոր Բայազետում, Սամշադինում, Քարվանսարայում, Դիլիջանում, ինչպես նաև Զանգեզուրում։

Ալեքսանդրապոլում ապստամբությունը ճնշելուց հետո, դաշնակներն իրենց ուժերն ուղղում են մյուս վայրերի ապրստամբ բանվորների և գյուղացիների դեմ, առանձին առանձին ճնշում այդ ապստամբությունները։ Մայիսյան ապրստամբությունը Հայաստանի բանվորների և գյուղացիների կողմից, սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարի հերոսական էջերից մեկն է։ Հայաստանի աշխատավորները, անցնելով քաղաքացիական պատերազմի բովով և հաշվի առնելով ապստամբության փորձը, համառ ու հետևողական պայքար ծավալեցին դաշնակների տիրապետությունը տապալելու և սովետական կարգեր հաստատելու համար։

Մայիսյան ապստամբության ճնշման գործում իրենց ստոր դերը կատարեցին անգլո-ամերիկյան իմպերիալիստները, Հայաստանի բոլոր կոնտրռևոլյուցիոն պարտիաներն ու կազմակերպությունները։

Սակայն, Մայիսյան ապստամբությունը խոշոր պատմական նշանակություն ունեցավ։ Այդ օրերին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ապատագրական պայքարի հարուստ փորձ ձեռք բերին, կրկին համոզվեցին, որ իրենց միակ փրկությունը սովետական կարգերի հաղթանակի մեջ է։ «Իսկ քաղաքացիական պատերազմի դպրոցը, — գրում է Վ. Ի. Լենինը,— իզուր չի անցնում ժողովուրդների համար։ Այդ մի ծանր դպրոց է,... այդ դպրոցը սովորեցնում է ճնշված դասակարգերին քաղաքացիական պատերազմ վարելը, սովորեցնում է հաղթական ռևոլյուցիա...»[1]։

---

1 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 15, էջ 217։

Դաշնակները սկսում են դաժան դատաստան տեսնել Մայիսյան ապստամբության ղեկավարների և մասնակիցների հետ։ Սակայն ոչ բանտային սոսկալի պայմանները, ոչ արտակարգ դատարանները և ոչ էլ տանջամահ անելու սպառնալիքները չէին ընկճում Ալեքսանդրապոլի կոմունիստների աննկուն կամքը։ Նրանք շարունակում էին ղեկավարել ծավալվող ռևոլյուցիոն աշխատանքները։

Դաշնակ դահիճները 1920 թ. օգոստոսի 14-ին Քանաքեռ տանող ճանապարհի վրա դաղտագողի, դաղանային խոշտանգումների ենթարկելուց հետո, դնդակահարում են Բ. Ղարիբջանյանին, Ս. Ալավերդյանին, Ս. Սուսայելյանին, մինչ այդ Ալեքսանդրապոլում դաղտնաբար սպանել էին Եգոր Սկյանին, Արշալույս Փանյանին և ուրիշների։

Դաշնակների այդ բարբարոսությունները մեծ դայրույթ են առաջացնում ոչ միայն Հայաստանի, Անդրկովկասի, այլև Ռուսաստանի աշխատավորների մեջ։

Չնայած օտարերկրյա իմպերիալիստների և նրանց կամակատար դաշնակների կողմից Հայաստանի ապստամբ բանվորների, դյուղացիների և կոմունիստների դեմ ուղղված ամենադաժան հալածանքներին, ռևոլյուցիոն պայքարը սովետական կարդերի հաղթանակի համար ծավալվում էր։ Հայաստանի աշխատավորները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, իրենց պայքարը հասցնում են վճռական հաղթանակի։

Դաշնակների ավանտյուրիստական և թուրքերի զավթողական քաղաքականության հետևանքով, որ հրահրում էին իմպերիալիստական պետությունները, 1920 թ. սեպտեմբերին նոր պատերազմ է սկսվում դաշնակցականների և քեմալական Թուրքիայի միջև։ Թուրքական զորքերը սկսում են զավթել Հայաստանի հողերը, նրանք գրավում են Սարիղամիշը, Կարսը, իսկ 1920 թ. նոյեմբերին՝ Ալեքսանդրապոլն ու նրա դավառը։

Ալեքսանդրապոլը և նրա դավառի գյուղերը անտանելի ծանր վիճակում էին դտնվում։ Թուրքական զավթիչները բարբարոսաբար ավերում էին բնակավայրերը, տանջամահ անում



Ալեքսանդրապոլ քաղաքի տեսքը 1860-ական թվականներին

թալանում, սովի ու համաճարակի մատնում բնակչությանը, որբերին ու գաղթականներին։ Ալեքսանդրապոլը բացառիկ ծանր վիճակում էր գտնվում, որովհետև այնտեղ կենտրոնացված էին տասնյակ հազարավոր գաղթականներ ու որբեր։

Թուրքական զավթիչները այդ ժամանակաշրջանում երզրում հարկադիր աշխատանքի են ուղարկում Ալեքսանդրապոլ քաղաքից և գավառի գյուղերից հազարավոր աշխատավոր ձեռքեր։ Նրանց մեծ մասը չի վերադառնում՝ անհայտ կորչում են ու սպանվում։ Թուրքական զավթիչները թալանում են պարենային բոլոր պաշարները։ Տանում են այն, ինչ հնարավոր էր։

Չնայած ծանր տառապանքներին, Հայաստանի աշխատավորները շարունակում էին հերոսական պայքար մղել սովետական կարգերի հաղթանակի համար։

ՌԿ(բ) պարտիայի կենտկոմի ցուցումով, 11-րդ փառապանծ բանակի զորամասերը, Ս. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի ղեկավարությամբ, օգնեցին Հայաստանի ապստամբ բանվորներին և գյուղացիներին տապալելու հայ ժողովրդի ոխերիմ թշնամի՝ դաշնակների բուրժուա-նացիոնալիստական տիրապետությունը և 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատեցին սովետական կարգեր։ Տանջված ու բաղմաշարչար, սովի ու գաղթի մատնված Հայաստանի աշխատավորները, ասում է Ի. Վ. Ստալինը, իրենց փրկությունը գտան այն բանի մեջ, որ նրկրում հայտարարեցին սովետական կարգեր։ Սովետական իշխանությունը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն։

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում կատաղի դիմադրության էր հանդիպում տապալված դասակարգերի և օտարերկրյա իմպերիալիստների կողմից։

1920 թ. դեկտեմբերի 2-ին դաշնակները Ալեքսանդրապոլում Անկարայի կառավարության հետ ապօրինի կերպով կնքեցին Հայաստանը անդամահատող և ստրկացնող հաշտության ամոթալի մի պայմանագիր։ Դաշնակները ստորադրություն անելով թուրքական զավթիչների առաջ, նրանց օգնությամբ ցանկանում էին վերականգնել իրենց

տիրապետությունը։ Սովետական Հայաստանի կառավարությունն այդ պայմանագիրը չեղյալ հայտարարեց։

1921 թ. փետրվարին գաշնակները կոնտրռևոլյուցիոն զինված ելույթ են կազմակերպում Սովետական իշխանության դեմ։ Սակայն, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս և անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների օգնությամբ, ջախջախում են նրանց կոնտրռևոլյուցիոն ելույթները և Երևանի վրա նորից ծածանվում է հաղթանակի կարմիր դրոշը։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում սովետական կարգեր էին հաստատվել, սակայն Ալեքսանդրապոլը դեռևս գտնվում էր թուրքական զավթիչների տիրապետության տակ։ Քեմալականների կատարած բարբարոսությունները չկարողացան խանգարել Ալեքսանդրապոլի աշխատավորներին՝ սերտ կապ պահպանելու սովետականացած Հայաստանի հետ, ապրելու նրա հաջողություններով։ Նրանք օգնություն էին խնդրում ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի կառավարություններից։ Սովետական Ռուսաստանը ջեմալական կառավարությունից պահանջեց օկուպացված շրջանները մաքրել թուրքական զորքերից և այդ տերիտորիաները տրամադրել Հայաստանի Սովետական իշխանությանը։

Սովետական կառավարության հանձնարարությամբ Կարմիր Բանակի հրամանատարությունը պահանջ է ներկայացնում թուրքական բանակի հրամանատարությանը՝ Ալեքսանդրապոլի դավառը ազատելու մասին։

Սովետական Ռուսաստանի կառավարության վճռական միջամտությամբ 1921 թ. ապրիլի 22-ին թուրքական զորքերը հեռացվում են Ալեքսանդրապոլից։ Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակի զորամասերը մտնում են Ալեքսանդրապոլ։ Ալեքսանդրապոլի գավառն ազատագրվելով թուրքական զավթիչներից, մտնում է Հայկական ՍՍՌ-ի կազմի մեջ։

Կարմիր Բանակի զորամասերը, ջախջախելով գաշնակների բանդաները, ազատագրում են Զանգեզուրը։ 1921 թ. հուլիսի կեսերին Հայաստանում քաղաքացիական կռիվները վերջանում են սովետական կարգերի լիակատար հաղթանակով։

Երկար տարիներ ընդհուպ մինչև Սովետական իշխանության հաղթանակը, տաղանդավոր հայ ժողովուրդը գտնվում էր ռուսական ցարիզմի կրնկի տակ։ Մանր են հիշողությունները ցարական ինքնակալության ճնշման մասին, որին ենթարկվեց հայ ժողովուրդը ռուսական կալվածատերերի կողմից։ Նրանց տիրապետության տարիներին տառապանքների ու ռուսական ցարիզմի ճնշման տակ գտնվող բազմաչարչար հայ ժողովուրդը, Անդրկովկասի բախտակից եղբայրական ժողովուրդների հետ, ռևոլյուցիոն պայքար ծավալելով երկրի ներսում, իր բախտը կապեց ռուս մեծ ժողովուրդի հետ։ Ռուս ժողովուրդը կրկին ձեռք մեկնեց և Անդրկովկասի ժողովուրդներին փրկեց կործանման սպառնալիքից՝ ցարական կառավարության դաղութային քաղաքականությունից, ազգամիջյան կոտորածներից, սովից, համաճարակից։

Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ Մ. Օրջոնիկիձեն Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի համար մղվող պայքարում Ռուսաստանի ցույց տված օգնության մասին գրում է. «Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը, չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Հայաստանը և Սովետական Վրաստանը...»[1]։ Անդրկովկասի ժողովուրդները սովետական կարգերի հաստատման համար ամբողջովին պարտական են եղբայրական ռուս մեծ ժողովրդին։

---

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր 1918—1937. Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 111։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵՆԻՆԱԿԱՆԸ ՆԱԽԱԳԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1921—1941)

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության մեկ-ընդմիշտ ազատագրեց հայ ժողովրդին սոցիալական և ազգային ճնշումից։

Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս ռեսպուբլիկաների սիստեմատիկաբար ցույց տրվող նյութական և բարոյական օգնությունը նոր եռանդ ներշնչեց Հայաստանի աշխատավորներին սովետական կարգերն ամրապնդելու, սովի ու համաճարակի ծանր հետևանքները լիկվիդացնելու և ժողովրդական տնտեսության վերականգնման ընթացքում առաջացող դժվարությունները հաղթահարելու գործում։

Վ. Ի. Լենինը, 1921 թ. ապրիլի 14-ի պատմական նամակում, վերլուծելով նոր տնտեսական քաղաքականության խնդիրները Անդրկովկասում, միաժամանակ պահանջում էր ստեղծել Կովկասի եղբայրական ժողովուրդների բարեկամություն, որը կօգնի լուծելու ինչպես սովետական կարգերի ամրապնդման, այնպես էլ տնտեսական շինարարության հարցերը։

«Ջերմագին ողջունելով Կովկասի Սովետական ռեսպուբլիկանները,— գրում է Վ. Ի. Լենինը,— ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սիրա դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուր-

Բնակելի շենքեր Կալինինի պողոտայում

ժուաղիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակակարգում»[1]։

Անդրիովիկասի բոլշևիկները, Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ա. Ֆ. Մյասնիկյանի, Ս. Մ. Կիրովի ղեկավարությամբ, կենսագործելով Վ. Ի. Լենինի ծրագրային ցուցումը, հետևողական պայքար մղելով տեղական նացիոնալիզմի, մեծապետական շովինիզմի դեմ, 1922 թ. մարտին կազմեցին Անդրկովկասյան Ֆեդերացիան, որն ավելի ամրապնդեց մեր երկրի տնտեսական-քաղաքական հզորությունը։ Անդրիովիկասյան Ֆեդերացիայի, ինչպես նաև 1922 թ. դեկտեմբերին ՍՍՌՄ կազմակերպումը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության խոշոր հաղթանակը։ Դրանով նորանոր հնարավորություններ ստեղծվեցին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և սովետական մյուս ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման համար։

ՍՍՌՄ կազմակերպումով իրականացավ Վ. Ի. Լենինի այն պահանջը, որ «Մենք սպասելի կամավոր միություն ենք ուզում, այնպիսի միություն, որը ո՛չ մի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմնված լիներ սմենալրիվ վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա»[2]։

Նոր ժամանակաշրջանում Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը իրենց բոլոր ուժերը լարեցին արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը վերականգնելու համար։

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին մեր երկիրը դեռևս հետամնաց գյուղացիական երկիր էր. անհրաժեշտ էր ոչ միայն վերականգնել ժողովրդական տնտեսու-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 368։

թյան նախատեսությունը մակարդակը, այլև վերակառուցել այն սոցիալիստական սկզբունքներով, լիկվիդացնել մեր երկրի տեխնիկա-տնտեսական հետամնացությունը, այդպիսով նրան աղքատային երկրից վերածել ինդուստրիալ երկրի, որն ընդունակ կլինի իր սեփական ուժերով արտադրելու ժամանակակից արդյունաբերության պարագայման համար անհրաժեշտ տեխնիկա և սարքավորում։

Դեռևս 1922 թ. Վ. Ի. Լենինը խոսելով ծանր արդյունաբերության մասին, ասել է, որ առանց ծանր արդյունաբերությունը վերականգնելու մենք չենք կարող կառուցել ոչ մի արդյունաբերություն, իսկ առանց ծանր արդյունաբերության մենք ընդհանրապես կկործանվենք որպես ինքնուրույն երկիր։

Պարտիայի XIV համագումարը դիրեկտիվ տվեց «...վերցնել երկրի ինդուստրացման, արտադրության միջոցների արտադրության պարագայման և տնտեսական մանևրումներ անելու համար ռեզերվներ ստեղծելու կուրսը»[1]։

Սովետական ժողովուրդը ակտիվ ստեղծագործական աշխատանքով կենսագործելով պարտիայի XIV համագումարի պատմական որոշումը, կարճ ժամանակամիջոցում ստեղծեց ծանր ինդուստրիա, որը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի պարագայման համար արտադրում էր արտադրության միջոցներ՝ մեքենաներ, սարքավորումներ և այլն։

Մեր երկրում սոցիալիստական ինդուստրացումը իրականացվեց արտաքին և ներքին թշնամիների դեմ մղված վճռական պայքարում։

Թշնամիները փորձում էին ձախողել մեր երկրի ինդուստրացման գործը, խանգարել ինդուստրացման պլանների կատարումը, վերականգնել կապիտալիզմը։

Սովետական ժողովուրդը մեծ զրկանքների գնով, դեռևս միջնպատերազմյան հնգամյակների տարիներին, ստեղծեց առաջնակարգ սոցիալիստական ինդուստրիա՝ արտադրության նոր բազմաթիվ ճյուղերով, որն ապահովեց մեր երկրի տնտե-

[1] ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, 7-րդ հրատ., Հայպետհրատ, 1955 թ., մաս II, էջ 218։

տական անկախություն։ Արդյունաբերության արտադրանքը 1940 թ. 1913 թ. համեմատությամբ աճել է 12 անգամ, իսկ մեքենաշինությունը՝ 50 անգամ։ Մեր հայրենիքը հաղթահարեց իր գաղութային հետամնացությունը, ագրարային երկրից վերածվեց ինդուստրիալ երկրի։ Գյուղատնտեսական անհատական, մանր տնտեսությունները վերափոխվեցին մեքենայացված խոշոր տնտեսությունների՝ կոլտնտեսությունների։ Ստեղծվեցին սովխոզներ և ՄՏՏ կայաններ։ Միաժամանակ հսկայական չափերով բարձրացավ մեր երկրի աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակը։

Դեռևս պարտիայի X համագումարը նշել էր, որ ազգային ռեսպուբլիկաներում փաստական անհավասարությունը վերացնել հնարավոր է միայն այն դեպքում, երբ կվերացվի նրանց տեխնիկա-տնտեսական հետամնացությունը, կստեղծվի սեփական բանվոր դասակարգ և ազգային ինտելիգենցիա ու դրանց միջոցով ամրապնդվի կերպով այդ ռեսպուբլիկաները կհասնեն կենտրոնական Ռուսաստանի մակարդակին։

Պարտիայի X և XII համագումարների որոշումների կենսագործումով լիկվիդացվեց ազգային ռեսպուբլիկաների տեխնիկա-տնտեսական և կուլտուրական հետամնացությունը, այն զուգակցվեց մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր տեմպերի հետ։

Սովետական կառավարությունն ազգային բոլոր ռեսպուբլիկաներում ժողովրդական տնտեսության զարգացման համար խոշոր ներդրումներ կատարեց, որի շնորհիվ նրանց արդյունաբերության զարգացման տեմպերը գերազանցեցին ՍՍՌՄ արդյունաբերության զարգացման ընդհանուր տեմպերին։ Այսպես, եթե 1940 թ. ՍՍՌՄ արդյունաբերության համախառն արտադրանքը աճել էր 1913 թ. համեմատությամբ 12 անգամ, ապա նույն ժամանակաշրջանում՝ Բելոռուսական ՍՍՌ-ինը աճել էր 23 անգամ, Հայկական ՍՍՌ-ինը՝ 21 անգամ, Վրացական ՍՍՌ-ինը՝ 26,5 անգամ և այլն։

Սովետական պետությունը 1920—1940 թթ. ժամանակաշրջանում Հայկական ՍՍՌ-ի ժողովրդական տնտեսության զարգացման համար ներդրեց մոտ 2,3 միլիարդ ռուբլի, որից

միայն արդյունաբերության և էլեկտրաշինության համար՝ 908 միլիոն ռուբլի, իսկ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և նրա հետագա զարգացման համար՝ 559,6 միլիոն ռուբլի[1]։

Այդ գումարներով նախապատերազմյան հնգամյակների տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ՝ գործարաններ, ֆաբրիկաներ, էլեկտրակայաններ։ Հայաստանի արդյունաբերության հին ճյուղերից արագ տեմպերով զարգացավ լեռնահանքային և սննդի արդյունաբերությունը։ Դրա հետ միաժամանակ ստեղծվեցին մի շարք նոր՝ քիմիական, էլեկտրամեքենաշինական, շինանյութերի, սեղմատիպ, թեթև արդյունաբերության և այլ ճյուղեր։ 1940 թ. Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը 1913—1914 թթ. համեմատությամբ ավելացավ վեց անգամ, համապատասխան չափերով աճեց նաև արդյունաբերության մեջ ինժեներա-տեխնիկական աշխատողների անձնակազմը։

Հայկական ՍՍՌ արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. կազմեց 430 միլիոն ռուբլի 1913 թ. 50 միլիոն ռուբլու դիմաց, այսինքն՝ ութ անգամ ավելի։

Հայաստանի աշխատավորները, հետևելով Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի պատմական ցուցումից, սովետական կարգերի առաջին իսկ տարիներից ծավալեցին էլեկտրիֆիկացման և ոռոգման խոշոր աշխատանքներ։ Ամենաարագ կերպով իրար հետևից շահագործման հանձնեցին լաղմաթիվ ջրանցքներ, որոնց շնորհիվ ռեսպուբլիկայում ոռոգվող հողերի տարածությունը 1913 թ. համեմատությամբ 1940 թ. համարյա կրկնապատկվեց, իսկ ցանքատարածությունը 1919 թ. համեմատությամբ 1940 թ. հինգ անգամ ավելացավ[2]։

Մեր երկրում սոցիալիստական ինդուստրացման բնագավառում ունեցած հաջողությունները հիմք ծառայեցին

[1] „Социалистическое строительство Армянской ССР" (1920—1940 гг.). Статистич. сборник, Ереван, 1940 г., стр. 19.

[2] Там же, стр. 62, 64.

գյուղում սոցիալիստական արտադրական հարաբերություններ ստեղծելու, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ու նրա հետագա զարգացման համար։ Ինդուստրացման շնորհիվ կազմակերպված մեքենա-տրակտորային կայանները հաստատուն բազա դարձան կոլտնտեսությունների կազմակերպական, տնտեսական ամրապնդման համար։

Ժողովրդական տնտեսության արագ զարգացման շնորհիվ, օրեցօր բարգավաճող ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանից բացի, զարգացան արդյունաբերական նոր կենտրոններ՝ Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Ղափանը, որոնք դարձան սոցիալիստական բարեկարգ քաղաքներ։

Այսպիսով, Սովետական իշխանության տարիներին, Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային ճիշտ քաղաքականության շնորհիվ, ազգարարային հետամնաց Ռուսաստանի ծայրամասային գավառը՝ Հայաստանը դարձավ առաջավոր ինդուստրիալ-կլտնտեսային ռեսպուբլիկա, որը ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների հետ մի ընտանիքում կառուցում է սոցիալիստական հասարակարգ։

1921 թ. ապրիլի 22-ին ռուսական փառապանծ 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի՝ Վելիկանովի հրամանատարության գործող միավորման մասերիկները մտան Ալեքսանդրապոլ։ Քաղաքի աշխատավորները ջերմորեն ընդունեցին իրենց թուրքական զավթիչներից ազատագրող զորային միավորման մասերիկներին ու հրամանատարներին։ Ալեքսանդրապոլում և նրա գավառում կարգ ու կանոն ստեղծելու համար արտակարգ կոմիսար նշանակվեց Պ. Մակինցյանը։ Պարտիական կազմակերպության ղեկավարությամբ առաջին ձեռնարկումները կատարվեցին նորմալացնելու կյանքը քաղաքում, ինչպես նաև գավառում։

ՀԿՊ Ալեքսանդրապոլի կազմակերպության Գավառային Կոմիտեի և Ալեքսանդրապոլի ռևոլյուցիոն Կոմիտեի

օրդան «Կարմիր Շիրակ» թերթն այդ օրերին իր առաջնորդող-ներից մեկում գրում է՝ «Այն բանվորը, որը, դիմանալով անասանելի դրությանը, չի ընկճվում, չի շեղվում, այլ անշեղ կատարում է իր ծանր աշխատանքը, նա ամենամեծ հեղափոխականն է։ Այն ուսուցիչը, գրագիրը կամ գործավորը, որը, հասկանալով գործի էությունը, անմասնակ ուանում է իր ծանր լուծը, հուսալով մոտիկ ապագայի վրա՝ հերոսություն է գործում։ Ահա այդ աշխատանքն է, որ մեզ համար ամենամեծ գրավականն է պարենավորման և անիծյալ վիճակից դուրս գալու համար»[1]։

1921 թ. հուլիսին, Ալեքսանդրապոլի գավառի 145 գյուղերի ռևկոմների նախագահների առաջին համագումարում զեկուցումով հանդես եկավ Ալեքսանդրապոլի ռևկոմի նախագահ Սերո Սանուցյանը։ Նա ցույց տվեց սովի ու համաճարակի մատնված քաղաքի և գավառի բնակչության ողբերգական վիճակը, որ անիծյալ անցյալի ծանր ժառանգությունն էր, ապա կանգ առնելով այդ օրգանների անելիքների վրա՝ նշեց միջոցառումներ ծանր վիճակից դուրս գալու համար։

Համագումարը ողջույնի հեռագիր ուղարկեց Մոսկվա, Վ. Ի. Լենինին, ապա ընկ. ընկ. Ա. Մյասնիկյանին, Ֆ. Մախարաձեին և Ն. Նարիմանովին.

Վ. Ի. Լենինին ուղղված ողջույնում գրված է.

«...Համագումարը հանձին Ձեզ՝ ողջունում է Ռուսաստանի Մեծ հեղափոխության ռահվիրային, բանվորա-գյուղացիական մասսաների դաստիարդային շահերի պաշտպանին։

Մենք Ալեքսանդրապոլի գավառի փաշաների ու բեկերի թալանից հոգոպրած ագրաս գյուղացիներս ներկա խորհրդային կարգերում՝ վայելում ենք ռուսական մեծ հեղափոխության բարիքները...»

Կեցցե մեր Լենինը։

Պրեզիդիումի նախագահ՝ Սերո Մանուցյան»[2]։

[1] «Կարմիր Շիրակ», 1921 թ., 10 հունիսի, № 5։
[2] Նույն տեղում, 8 հուլիսի, 1921 թ., № 10։

Ալեքսանդրապոլի աշխատավորները, քաղաքը թուրքական զավթիչներից ազատագրելուց հետո, ռեսպուբլիկայի աշխատավորների հետ անցան խաղաղ շինարարական աշխատանքներին։ Կազմակերպված բազմաթիվ շաբաթօրյակներով մաքրեցին և հարթեցին փողոցները։ Ռևկոմն իր ունեցած միջոցների պերակշռող մասը տրամադրեց քաղաքի բնակչության, զաղթականության ու որբերին սովամահությունից փրկելու համար։

Տեղական օրգանները բազմաթիվ տներ վերանորոգման ենթարկեցին և սկսեցին օգտագործել ըստ կարիքի։ Քաղաքացիները ևս վերանորոգեցին հին տները, շինեցին նոր բնակարաններ։ Երկաթուղայինները, արհմիության նախաձեռնությամբ, քաղաքում առաջինը երկաթուղային բանվոր-ծառայողների համար կառուցեցին երկու բնակելի շենք։ Վերականգնվեց քաղաքի բերդը, որը կիսավեր վիճակում էր, և այնտեղ տեղավորվեցին կայազորի միավորումները։ Կաղաչի պոստի, Պոլիգոնի ու Սևերսկու զորանոցներում տեղավորվեցին իմպերիալիստական պատերազմից և դաշնակներից ժառանգություն մնացած որբանոցները։

Վերադառնալ օրգանների որոշմամբ 1921 թ. դեկտեմբեր ամսին Ալեքսանդրապոլի ռևկոմին կից ստեղծվեց մի հանձնաժողով, որը նախապատրաստեց սովետների ընտրությունները։

1921 թ. դեկտեմբերի սկզբից Հայաստանում սկսվում են սովետների ընտրությունները։ Ընտրական կենտրոնական հանձնաժողովը այդ առթիվ կոչ է ուղղում Հայաստանի բոլոր աշխատավորներին, որտեղ ասվում է, որ Հայաստանի պետական ապագան ընտրական իրավունքներով կազմելու նկատառումով ռևկոմների փոխարեն ստեղծվելու են գործադիր կոմիտեներ և սովետներ։ Կոչում նշվում է, որ երկիրը վերականգնելու համար հարկավոր է մասսաների լայն ինքնագործունեություն տեղերում, նրանց առանցքային մասնակցություն պետական ապարատի աշխատանքներին։

Այդ կոչն ավարտվում է այսպես.

Ընկերներ, բանվորներ, գյուղացիներ և Հայաստանի ազնիվ աշխատավորներ! խորհուրդների ընտրական կենտրոնա-

կան հանձնաժողովը կոչ է անում Ձեզ՝ հավաքվելու խորհուրդների գրոշի շուրջը, մասնակցելու նրա ընտրություններին, ամրապնդելու սոցիալիստական հեղափոխությունը մեր երկրում։

Սկսվում են Ալեքսանդրապոլի գավառային Գործկոմի և քաղաքային Սովետի ընտրությունները։ Քաղաքային Սովետի կազմում ընտրվում են 193 պատգամավոր, որից 124 կոմունիստ, իսկ 69՝ անպարտիական։ Քաղաքային Սովետի կազմում ընտրվում են Վ. Ղազանչյանը, Գ. Հանեսոզյանը, Ա. Աղամալյանը, Ն. Կուրղինյանը, Ս. Արշակունին, Ա. Հովսեփյանը, Ա. Թորմաչյանը, Ա. Շահգելդյանը, Հ. Գաբրիելյանը, Մ. Ղոլիմաղյանը, Թ. Մանդալյանը, Հ. Հայկազունին և շատ ուրիշներ։

1921 թ. դեկտեմբերի վերջին բացվեց Ալեքսանդրապոլի բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների պատգամավորների Սովետի անդրանիկ նիստը։ Նիստում լսվում են զեկուցումներ ընթացիկ մոմենտի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման մասին։ Քաղաքային Սովետի Գործկոմի անդրանիկ նախագահ է ընտրվում Գավգործկոմի նախագահ Արսեն Նազարյանը։

1922 թ. հունվարի 12-ին ժողովանը բացվում է Ալեքսանդրապոլի գավառի սովետների առաջին համագումարը։ Գավառային ռևկոմը բանվորներին, գյուղացիներին և զինվորներին համախմբելով սովետների շուրջը, գավառում իշխանությունը հանձնում է սովետներին և նրա Գործադիր Կոմիտեին։ Գավառային ռևկոմը այդ առթիվ հատուկ կոչ է ուղղում, որի մեջ գրված է. «...Հեղկոմներն այլևս չկան, ամբողջ Շիրակում խորհուրդներն անցել են իրենց գործին։ Խորհուրդները շարունակելու են այն գործը, որ սկսեցին հեղկոմները, ավելի մեծ չափով, ավելի խորը կերպով, ավելի շատ մասսայի միջոցով»[1]։

Քաղաքային Սովետի Գործադիր Կոմիտեի ղեկավարությամբ աշխատավորները կարգավորում են փողոցները, սա-

[1] Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվ, ֆ. 112, գ. 320, թ. 14։



Մեխանիկական գործարանի ցեխում

լահատակում են կայսրան տանող 16-րդ փողոցը, կանոնավորում են քաղաքային այգին։ Գործադիր Կոմիտեի որոշմամբ քաղաքի կենտրոնում մաքրելով ավերակների կույտերը և քանդելով խարխուլ խանութների բազմաթիվ շարքերը, բաց են տնում կենտրոնական հրապարակը։ Այնուհետև սկսվում են արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման աշխատանքները։

Քաղաքային Սովետի Գործադիր Կոմիտեն պետականացնում է նախկին Թատուրյանների օճառի գործարանը, որն ուներ տարեկան 1500 փութ օճառ արտադրելու կարողություն։ Գործադիր Կոմիտեի կոմունալ տնտեսության բաժինը սկսում է կազմակերպել օճառի արտադրության գործը։ 1917—1920 թթ. դաշնակների տիրապետության տարիներին այդ գործարանը չէր աշխատում հում նյութ չունենալու պատճառով։ 1924 թ. նա հարստանում է նոր սարքավորումներով, ստեղծվում են նոր ցեխեր։ Արտադրանքը տարեցտարի սկսում է աճել։ Այսպես, 1924—1925 թթ. տնտեսական տարում գործարանը արտադրում էր 18 հազար փութ օճառ, իսկ 1926—1927 թթ.՝ 30 հազար[1]։

1921 թվականին պետականացվում է Ալեքսանդրապոլի Մադիկյանների գարեջրի գործարանը։ 1924—1925 թթ. տընտեսական տարում տրվեն նա արտադրում էր 5400 դույլ գարեջուր, իսկ 1926—1927 թթ.՝ 30 հազար։

Մեխանիկական գործարանը շահագործման է հանձնվում 1924 թ., ուներ ձուլման, փականագործական, խառատի ցեխեր և դարբնոց։ Գործարանի համախառն արտադրանքը 1924—1925 թթ. տնտեսական տարում հասնում է 20 հազար, իսկ 1926—1927 թթ. 50 հազար ռուբլու։

1926 թ. շահագործման է հանձնվում տոմեստի գործարանը, որն ուներ երկու մամլիչ։ Գործարանում աշխատում էին 12 բանվոր[2]։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվ, ֆ. 11., գ. 295, թ. 8։

[2] Նույն տեղում, գ. 295, թ. 8։

Այնուհետև շահագործման են հանձնվում լիմոնադի գործարանը, էլեկտրակայանը, սղոցարանը և երկու էլեկտրաաղացները։ 1923 թ. նոյեմբեր ամսին Գործադիր Կոմիտեն մոտ 30 հազար ռուբլի է հատկացնում և շահագործման հանձնում 190 ձիու ուժանոց նոր էլեկտրակայանը, որն էլեկտրաէներգիա էր մատակարարում պետական հիմնարկ-ձեռնարկներին, խանութներին և քաղաքի փողոցներին։

Նախքան համաշխարհային առաջին պատերազմը քաղաքում կային մի քանի տպարաններ։ 1918—1920 թթ. նրանց մի մասը թալանվել էր։ Նրանց մնացորդների բազայի վրա 1921 թ. ստեղծվեց առաջին տպարանը։ Հնագույն բանվորներ Ա. Հանեսօղլյանի, Վ. Խաչիկօղլյանի, Գ. Ջրաղացսլանյանի, Գ. Հարությունյանի, Մ. Ավետիսյանի, Կ. Սարգսյանի և ամբողջ կոլեկտիվի նվիրված աշխատանքի շնորհիվ տպարանը բավարարում էր տեղական կազմակերպությունների պահանջները։

Այսպիսով, քաղաքի համար որոշակի նշանակություն ունեցող 35 արդյունաբերական ձեռնարկություն 1923 թ. գտնվում էին Քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի տրամադրության տակ։ Այդ ձեռնարկություններում աշխատում էին 311 բանվոր։

Մասնավոր ձեռնարկություններից գործում էին միայն մի ձուլարան, կրի՝ երկու, աղյուսի՝ մեկ և օճառի մի քանի մանր գործարաններ, ջրաղացներ, ձիթհաններ։

Քաղաքի մնացած արտադրական գործունեությունը կենտրոնացված էր արհեստանոցներում, որոնք 1923 թ. 270-ի էին հասնում[1]։ Այդ մասնավոր արհեստանոցներում աշխատում էին 521 հոգի[2]։

Ալեքսանդրապոլցիները պարտիական և սովետական օրգանների անմիջական օգնությամբ ու ղեկավարությամբ, իրենց անձնվեր աշխատանքով, շահագործման հանձնեցին մի

[1] Ս. Համբարձումյան, Ալեքսանդրի գավառի տնտեսությունը, «Բանվորի գրադարան», 1924 թ., № 4, էջ 53։

[2] ՀՍԽՀ կենտվիճակագրություն, Վիճակագրական տեղեկատու, պրակ № 6, Երևան, 1925 թ., էջ 49։

շարք ձեռնարկություններ։ Քաղաքում աշխուժացավ առևտուրը, բացվեցին ժողովրդական կրթության, առողջապահության և կուլտուր-լուսավորական հիմնարկներ, կամաց կամաց սկսվեց նաև աշխատավորների նյութական պայմանների բարելավումը։

1923 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի բանվորների, դյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Քաղաքային Սովետի նիստը արձանագրեց, «որ երեք տարվա խաղաղ աշխատանքով ազատվեցինք սովից, համաճարակից, վերականգնեցինք մեր գավառի ավերակները, ներկայումս նվիրված աշխատում ենք զարգացնել մեր տնտեսությունը։ Այս բոլոր հաջողություններին մենք հասել ենք միայն ու միայն Խորհրդային իշխանության շնորհիվ, կռվել ենք նրա համար և պատրաստ ենք միշտ կռվելու նրան պաշտպանելու համար»[1]։

Նորընտիր Սովետը Քաղաքային Սովետի Գործկոմի նախագահ է ընտրում Գեորգ Հանեսոզյանին։

Լենինականի Քաղաքային Սովետի Գործկոմի նախագահ Գ. Ս. Հանեսոզյանը տպարանի նախկին բանվոր էր, երկար տարիների ընդհատակյա աշխատող։ Նա իբրև ալեքսանդրապոլցի բոլշևիկ, մեծ հեղինակություն էր վայելում ինչպես բանվոր ծառայողների, այնպես էլ արհեստավորների շրջանում։ Իր հաճեստությամբ, աշխատասիրությամբ ու նվիրվածությամբ Հանեսոզյանը դարձել էր բոլորի համար սիրելի և իր կազմակերպական ընդունակությամբ խոշոր գործեր կատարեց քաղաքի բարգավաճման գործում։

Գ. Ս. Հանեսոզյանը հետագա տարիներին դառնում է ռեսպուբլիկայի արհմիութենական, պարտիական և սովետական օրգանների դեկավար աշխատող։

1923 թ. դեկտեմբերի կեսերին Ալեքսանդրապոլ ժամանեցին անդրկովկասյան պարտիական և սովետական դեկավար աշխատողներ՝ Անդրերիոմի քարտուղար Ա. Մյասնիկյա-

---

[1] «Մարտակոչ», օրգան Ռկ(բ)կ Անդրերիոմի, 1923 թ. նոյեմբերի 29, № 231։

նի գլխավորությամբ։ Նրանք այցելեցին Ամերկոմի և Սեբեռկու որբանոցները, ծանոթացան նրանց պայմաններին։ Այդ այցելության բերդը՝ կարմիրբանակայիններին, նրանց հետ դրույց ունեցան։ Ծանոթացան Շիրջրանցքի կառուցման աշխատանքներին։ Նույն օրը, երեկոյան, թատրոնի շենքում արհմիության անդամների ընդհանուր ժողովում զեկուցումով հանդես եկավ Ա. Ց. Սյանիկյանը, որը նոր խնդիրներ դրեց Ալեքսանդրապոլի արհմիության կազմակերպությունների առաջ։

* * *

1924 թ. հունվարի 21-ին վախճանվեց Վլադիմիր Իլյիչ Լենինը՝ սովետական պետության հիմնադիրը, Կոմունիստական պարտիայի կազմակերպիչն ու ղեկավարը, ամբողջ աշխարհի պրոլետարիատի մեծ առաջնորդը։ Վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու նպատակով Ալեքսանդրապոլի աշխատավորները ցանկություն հայտնեցին իրենց քաղաքը վերանվանել նրա անունով։

Հայաստանի և Անդրկովկասի կառավարությունների միջնորդությամբ Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն 1924 թ. փետրվարի 26-ի նիստում, ընդառաջելով Ալեքսանդրապոլի աշխատավորության ցանկությանը, որոշում ընդունեց Հայկական ՍՍՌ Ալեքսանդրապոլ քաղաքը վերանվանել Լենինական։

«Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը, լսելով Ալեքսանդրապոլ քաղաքը Լենինական վերանվանելու մասին, որոշեց նկատի ունենալով, որ ՀՍԽՀ Կենտգործկոմը Վ. Ի. Լենինի մահվան օրն Ալեքսանդրապոլ քաղաքը վերանվանել է Լենինական, իրրև բացառություն այդ վերանվանումը հաստատելու»։

«Բանվոր», 1924 թ., մարտի 14, № 132։

Հայաստանի կառավարությունը, շնորհավորելով Լենինականի աշխատավորներին, գրում է.

«Հեռագիր ընկ. ընկ. Եսայանին և Բակունցին[1].

Կենտգործկոմի և ժողկոմխորհի նախագահության որոշումով Ալիքպոլի անունը փոխվում է Լենինական:

Հայտնեցեք բանվորներին և աշխատավորական մասսաներին, որ իրենց հեղափոխական գործով նրանք պետք է քաղաքի հռչակը հավատարմորեն պահեն Լենինի անվանը։

Հավերժ հիշատակ ընկեր Լենինին։

Ընդմիշտ կեցցե Լենինականը։

ՀԿԳԿ *նախագահի տեղակալ* Հ. Ազատյան

ՀԺԿՆ նախագահի տեղակալ՝ Ա. Մռավյան»[2]:

Լենինականի աշխատավորները 1924 թ. մայիսի 10-ին նշեցին Հայաստանում Մայիսյան ապստամբության 4-րդ տարեդարձը։ Այդ օրերին ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանում տեղի էր ունենում Հայաստանի Կոմունիստական պարտիայի III համագումարը, որի նախագահությունը Լենինականի աշխատավորությանը ողջույնի հեռագիր է ուղարկում Լենինականի Գավկոմի անունով։ «Հայտնեցեք Լենինականի բանվորներին Հայաստանի Կոմունիստական կուսակցության III համագումարի ողջույնը Մայիսյան ապստամբության 4-րդ տարեդարձի առթիվ։ Համագումարը ուրախ է արձանագրել, որ Լենինականի բանվորները հավատարիմ են մնացել Մայիսյան ապստամբության հեղափոխական ավանդներին և անդուլ եռանդով շարունակում են պաշտպանել և ամրացնել Հոկտեմբերյան հեղափոխության դիրքերը Հայաստանում։

Մեր անմահ առաջնորդ Լենինի պանծալի անունը կրող քաղաքի բանվորներից ՀԿ կուսակցության III համագումարը պահանջում է *նորանոր նվաճումներ։ Այդ նվաճումները*

[1] *Լենինականում որպես Գավկոմի քարտուղարներ աշխատել են ընկ. ընկ. Հ. Հովսեփյանը, Ե. Բակունցը, Վ. Դաստակյանը, Գ. Հանիսոգլյանը, Լ. Ղազարյանը, Ռ. Վարդապետյանը, Հ. Բաննահյանը, Գ. Քալաշյանը։*

[2] *«Բանվոր», 1924 թ., 3 փետրվարի, № 111։*

կնպաստեն Հայաստանի ընդհանուր քաղաքական, տնտեսական, կուլտուրական կյանքի ամրապնդմանը, բարգավաճմանը, որի հետևանքով 1920 թվի մայիսին պայքարեցին Լենինականի ապստամբած բանվորները, ապրով հսկայական զոհեր հանուն ժողովրդի ազատագրման վեհ գործին։

Հավերժ հիշատակ Մայիսյան ապստամբության նահատակներին։

Կեցցե Լենինականի բանվորությունը

Կեցցե Խորհրդային Հայաստանը»[1]։

Լենինականի աշխատավորները ՀԿ պարտիայի III համագումարի ցուցումներով, մեծ ոգևորությամբ, մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին իրենց քաղաքը բարեկարգելու, զարգացնելու համար, որպեսզի այն դարձնեն Վ. Ի. Լենինի անվան արժանավայել քաղաք։ Գործադիր Կոմիտեի Կոմունալ տնտեսության տնօրինության տակ գտնվող գործարաններում արտադրության տեխնոլոգիան կատարելագործվում էր, աճում էր բանվորների քանակը։ Շահագործման հանձնված օճառի, գարեջրի, լիմոնադի, տոմատի, մեխանիկական և այլ գործարաններում աշխատող բանվորներն ու բանվորուհիները, պարտիական կազմակերպությունների օգնությամբ, հերոսական գործեր էին կատարում՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, յուրաքանչյուր ամսվա արտադրանքը ավելացնելու համար։

Լենինականի աշխատավորները դեռ նոր էին սկսել քաղաքը բարեկարգելու, արժանավայել սոցիալիստական քաղաք դարձնելու առաջին քայլերը, երբ 1926 թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժը ավերեց քաղաքի գրեթե մասը։

Ռեսպուբլիկական արտակարգ հանձնաժողովին նկարագրած զեկուցման մեջ տեխնիկական հանձնաժողովը ար-

---

[1] «Բանվոր», 1921 թ., 11 մայիսի, № 177։

* Այնքանդրապոլի բնակիչները անցյալում մեծ փնտռներ են կրել, մարդկային զոհեր են տվել 1846 թ. մարտի 22-ի երկրաշարժի, ինչպես նաև 1830, 1862, 1878, մասնավորապես 1908 թ. հունիսին տեղի ունեցած ջրհեղեղների ժամանակ։

ձանագրել է, որ Լենինականում երկրաշարժից տուժել են 8800 տուն, որից 5517 տուն ավերված է. իսկ Լենինականի գավառի 44 գյուղերում տուժել է 6018 տնտեսություն[1]։

Երկրաշարժի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 23-ին Լենինական ժամանեց արտակարգ հանձնաժողովը Արամայիս Երզնկյանի նախագահությամբ։ Ա. Հ. Երզնկյանը մեծ ուժ ներդրեց և խոշոր ծառայություն մատուցեց Լենինականի և նրա գավառի աղետյալներին ամենաարագ օգնություն կազմակերպելու, հնարավոր շտապ աջակցություն ցույց տալու, ինչպես նաև քաղաքում շինարարական աշխատանքների առաջին ձեռնարկումները կատարելու գործում։

Լենինականի աղետի մատնված աշխատավորությանն իսկույն օգնության հասան ՍՍՌՍ եղբայրական բազմազգ ժողովուրդները, որոնք իրենց նյութական ու բարոյական օգնությունը ցույց տվեցին Լենինականի և նրա գավառի բնակչությանը։

Մեր անծայրածիր երկրի բոլոր կողմերից Լենինական ուղարկվեցին վագոններ, շինափայտ, տաք հագուստ, սննդամթերք, դեղորայք, գրասմ և այլն։

Աշխատավորներին խոշոր օգնություն ցույց տվեց Լենինականի բերդապահ զորքը։ Մարտիկները երկրաշարժից անմիջապես հետո, քաղաքում խանութների, հիմնարկների, քաղաքացիների բնակարանների վրա հսկողություն սահմանեցին։ Կարմիրբանակայինները ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում անձնազոհություն և հերոսություն ցուցաբերելով, փլատակների տակից հանում էին մարդկանց։ Նրանք պաշտպանում էին հասարակական կարգը, աշխատավորների ունեցվածքը։ Նրանց ուժերով վերականգնվեց հեռագրական հաղորդակցությունը Լենինական — Երևան և Լենինական — Թիֆլիս գծով։ Նրանք դույլերով, սննդամթերքով օգնեցին բնակչությանը, առաջին բուժօգնություն կազմակերպեցին։ Վտանգավոր տեղերում զորամասերի մարտիկների և

[1] Հայկական ՍՍՌ Գլխավոր կենտրոնական արխիվ, ֆ. 112, գ. 483, թ. 73։

հրամանատարների ներկայությունը քաջալերում էր բնակչությանը, կասեցնում խուճապը։

Սովետական բանակի մարտիկների և հրամանատարների այդ մարտական ծառայությունը բարձր գնահատվեց։ Այն ժամանակվա Զինվորական և ծովային կոմիսար Կ. Ե. Վորոշիլովը, 1926 թ. նոյեմբերի 9-ի հատուկ հրամանով շնորհակալություն հայտնեց Լենինականի բերդապահ զորքի ամբողջ անձնակազմին՝ Լենինականի ապստամբ աշխատավորությանը ցույց տված բացառիկ հոգատարության համար։ Միաժամանակ Կ. Ե. Վորոշիլովը իր շնորհակալական հրամանում նշեց, որ աշխատավորների և ՍՍՌՄ կառավարության կամքով պետք է վերականգնվի Լենինականը[1]։

Թիֆլիսից Լենինական ժամանած Անդրկովկասյան ժողկոմսովետի կողմից առանձնացված տեխնիկական հանձնաժողովը պարզել է, որ երկրաշարժի պատճառած վնասը նախնական հաշվով կազմում է՝ Լենինականի գավառում՝ 25 միլիոն ռուբլի, որից քաղաքին պատճառված վնասը՝ քսան միլիոն ռուբլի[2]։

Մի շարք գյուղեր ամբողջովին ավերվել էին, ինչպես, օրինակ՝ Դահռլուն (այժմ՝ Գետը), Բայանդուրը, Խ. Ղարաքիլիսան (այժմ Աղատան) և այլն, իսկ 15 գյուղեր մասնակի վնասներ էին կրել։ Վիրավորներին առաջին օգնություն էր ցույց տալիս Երևանից և Թիֆլիսից ժամանած ռանիտարական դնացքների բժշկական անձնակազմը։

Հոկտեմբերի 22-ի երկրաշարժը ծանր հարված հասցրեց Լենինականի և նրա գավառի որոշ գյուղերի բնակիչներին, տասնյակ հազար քաղաքացիներ ու գյուղացիներ զրկվեցին բնակարաններից, գույքից։ Հարյուրավոր աշխատավոր ձեռքեր դարձան հաշմանդամ։ Հարվածն առանձնապես զգալի էր այն պատճառով, որ իմպերիալիստական պատերազմի ավերումներից մեծապես տուժած Լենինականն ու նրա գավառի գյու-

---

[1] «Իզվեստիա», 1926 թ., Նոյեմբերի 11-ի № 440։

[2] Հայկական ՍՍՌ Գլխավոր կենտրոնական արխիվ, ֆ. 112, գ. 828, թ. 85։

Մի տնարան Լենինական քաղաքից

դերը, որոնք միայն նոր էին շունչ առել Սովետական պետության օգնությամբ, նոր էին ձեռնամուխ եղել շինարարական խոշոր աշխատանքների, նորից ավերվեցին։

Աղետից հետո Լենինականում էին գտնվում անդրկովկասյան և այլ ռեսպուբլիկաների սովետական ու պարտիական օրգանների ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայաստանի ռեսպուբլիկական արտակարգ հանձնաժողովը։ Սրանք գործոն օգնություն էին կազմակերպում աղետյալներին։

Լենինական ժամանեց Թիֆլիսից բանվորների ներկայացուցչությունը՝ Անդրիենտգործկոմի նախագահ Միխա Ցխակայայի գլխավորությամբ։

Անդրկովկասյան Կենտգործկոմը հատուկ նամակ ուղարկեց Լենինականի և նրա շրջանի աշխատավորներին, որի մեջ ասված էր.

«...Կարմիր Լենինականի բանվորներ և գյուղացիներ, դուք չէ որ պիտի վհատվեք։ Դուք, որ կոփված եք կռվում, դուք, որ սովոր եք անցյալ տարիների փոթորիկներին և զրկանքներին։ Այն արագ և արտաքուստ օգնությունը, որ ցույց տվին ձեր եղբայրները, վկայում է այն մասին, որ դուք փորձության ահավոր ժամին մենակ չեք...»[1]։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը, ժողկոմսովետը և ԿԳԿ-ն Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին ուղղած կոչում գրում են. «Տասնյակ հազարավոր աղետյալների թիկունքում կանգնած է 140 միլիոն բնակչություն ունեցող Խորհրդային Միությունը, որը ձեռք կառնի բոլոր միջոցները Լենինականի աշխատավորության ծանր վերքերը բուժելու համար։ Ընդհանուր ուժերով կվերականգնենք Լենինականն ու նրա գավառը, կվերականգնենք մեր անմահ ուսուցիչ Լենինի անունը կրող այն քաղաքը, որը Խորհրդային Հայաստանի բանվորության սիրտն է, նրա հեղափոխական ավանգարդը»[2]։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 112, գ. 28, թ. 125։

[2] Նույն տեղում, թ. 124։

1926 թ. նոյեմբերի 18-ին Լենինգրադի «Красная газета» թերթը, Լենինականի վերաշինման համար օգնություն կազմակերպելու նպատակով, տպագրում է Ս. Օրջոնիկիձեի հոդվածը, ուր ասված էր, որ Լենինականը վերածնվող Հայաստանի ավանգարդն է։ Քաղաքը 1920 թ. թուրքերի վերջին արշավանքների ժամանակ քայքայված ու կողոպտված լինելով, դարձել էր ավերակ։ Այժմյան տեքստիլ գործարանը, գիրակի ջրանցքը, էլեկտրակայանը, վերականգնված գյուղերը Լենինականի և Սովետական Հայաստանի պարծանքն են։ Ավերված ու քանդված Լենինականին անհապաղ օգնություն ցույց տալը Սովետական Միության բանվորների և գյուղացիների սրբազան պարտքն է։

Լենինականի վերաշինման համար օգնության ֆոնդեր ստեղծեցին Ստալինգրադի «Голос пахаря», Ղրիմի «Красный Крым», Անդրկովկասի «Заря Востока», «Коммунист», «Մարտակոչ», «Красное знамя» և այլ տասնյակ թերթեր, որոնք իրենց հավաքած գումարները ուղարկում էին Լենինականի վերաշինման կոմիտեի անունով։

Թիֆլիսի և Բաքվի քաղաքային սովետներին կից ստեղծվել էին Լենինականի վերաշինմանը օգնող կոմիտեներ, որոնք այդ նպատակի համար խուզոր միջոցներ ստեղծեցին և բազմատեսակ օգնություն ցույց տվեցին Լենինականի աշխատավորներին։

Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Խարկովի, Մինսկի, Ստալինգրադի, Օդեսայի, Դոնի Ռոստովի, Արխանգելսկի, Տաշքենդի, Կրասնոյարսկի, Նովոսիբիրսկի և Սովետական Միության բազմաթիվ երկրի աշխատավորները իրենց լուման մտցրին Լենինականի վերաշինման համար հավաքված ֆոնդի մեջ։

Մեր երկրում ժողովուրդների բարեկամության, նրանց շահերի ընդհանրության, եղբայրական համագործակցության ու փոխադարձ օգնության մեծ ուժը կրկին դրսևորվեց Լենինականի աշխատավորներին ցույց տրված մեծ օգնությամբ։

1927 թ. հունիսի 29-ին Լենինական ժամանեցին ՍՍՌՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը և ՀՍՍՌ Կենտգործկոմի նախագահ Ա. Բ. Կարինյանը։ Նրանք Լենինականում զրույց ունեցան տեղի սովետական և պարտիական աշխատողների հետ, ապա շրջելով քաղաքը, ծանոթացան երկրաշարժի պատճառած վնասների, ինչպես նաև վերաշինման կոմիտեի կատարած որոշ աշխատանքներին։ Մ. Ի. Կալինինը, Ա. Բ. Կարինյանը և Քաղաքային Սովետի Գործկոմի նախագահ Գ. Ս. Հանեսօղլյանը այցելեցին երկրաշարժից ավերված Ղարաքիլիսա, Դահանլու և Բայանդուր գյուղերը։ Մ. Ի. Կալինինը զրույց ունեցավ գյուղացիների հետ։ Նրանք այցելեցին նաև Շիրշրանցքը և նոր կառուցվող էլեկտրակայանը։ Նույն օրը Մ. Ի. Կալինինը հանդես գալով Լենինական քաղաքի աշխատավորների բազմամարդ միտինգում աշխատավորությանն ուղղված ճառում ասաց, որ Սովետական Միությունը կօգնի ձեզ, բայց դուք ձեր բազուկների ուժով, մեր երկրի եղբայրական ժողովուրդների օգնությամբ պետք է կառուցեք ձեր քաղաքը և նրա ավերված գյուղերը։ Դուք օր-ավուր ուժեղացնելով քաղաքում կատարվող շինարարական աշխատանքները, կարճ ժամանակում պետք է լիկվիդացնեք երկրաշարժի հետևանքները։

ՍՍՌՄ ժողկոմսովետը 1927 թ. փետրվարի 22-ին կայացած հատուկ նիստում քննարկում է Լենինականի դավառի աշխատավորներին ցույց տրվող օգնության և Լենինական քաղաքի վերականգնման հարցերը։ Ժողկոմսովետը իր ընդունած ընդարձակ որոշման մեջ նշում է կոնկրետ միջոցառումներ Լենինականի վերականգնման համար։ ՍՍՌՄ-ի ժողկոմսովետը այդ նպատակի համար 1926—1929 թթ. հատկացնում է 18 միլիոն ռուբլի[1]։

Լենինականի աշխատավորների առաջ խնդիր էր դրված օգտագործել Սովետական կառավարության հատկացրած ֆինանսական միջոցները և վերականգնել քաղաքը, որի հա-

1 Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվ, ֆ. 11, գ. 328, թ. 59։

մար կազմվեց քաղաքի վերակառուցման և ընդարձակման նախագիծ։

Այսպիսով, միայն Սովետական հասարակարգի գոյության, մեր երկրի բազմազգ ժողովուրդների եղբայրական բարեկամության պայմաններում ամենաարագ կերպով լիկվիդացվեցին Լենինականին և նրա գավառին երկրաշարժի պատճառած ծանր հետևանքները՝ մեծ ավերումներն ու անտեսական վնասները։

1922 թ. վերջերին Սովետական Ռուսաստանի՝ Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքից Հայաստան եկած մի խումբ բանվորներ, ծանոթանալով Հայաստանի քաղաքների և գյուղերի աշխատավորության կյանքին ու պայմաններին, վերադարձան իրենց քաղաքը։ Վ. Ի. Լենինի ցուցումով, շուտով նրանք Սովետական Հայաստանին, իբրև նվեր, ուղարկեցին 2172 իլիկ ունեցող մանող մեքենաներ և գործող 30 հաստոցներ՝ տեքստիլ արդյունաբերություն հիմնադրելու համար։

Սովետական կառավարությունը որոշում ընդունեց Լենինականում կառուցվելիք տեքստիլ գործարանի համար տրամադրել նյութական միջոցներ։

1924 թ. սկզբին Լենինականի նախկին «Զիբոզցոնց զարոս» կոչված տեղամասում հիմք դրվեց նոր գործարանի շինարարությանը։ Իվանովո-Վոզնեսենսկու բանվորների կոլեկտիվը մասնագետների մի խումբ ուղարկեց, որոնց թվում էին էլեկտրատեխնիկ-մեխանիկ Մ. Ի. Սարգովը, մանող վարպետ Ց. Վ. Վիրսովը, վերանորոգողներ Ի. Վ. Զոլոտովը, Ե. Վ. Կոզմիչևը, Լ. Վ. Վիրսովը։ Նրանք ոչ միայն տեղադրեցին ֆաբրիկայի սարքավորումները, այլև պատրաստեցին ջուլհակների և մանողների մի ամբողջ խումբ։ Նրանց օգնությամբ 1924 թ. ապրիլի 15-ին Լենինականի նորակառույց դպրոց-արհեստանոցում սարքվեց առաջին գործվածքը։ Կառավարության որոշ-

[1] „Опыт текстильщика", 1934 г., № 12, стр. 16.

մամբ, Լենինականի աշխատավորների առաջ հրատապ հարց դրվեց ունենալ մանվածքային ֆաբրիկա։ Ահա նրա կառուցմանը ձեռնամուխ եղան քաղաքի բոլոր կազմակերպությունները և համենակարճ ժամկետում ոչ միայն շահագործման հանձնեցին ֆաբրիկան, այլև ստեղծեցին տեքստիլագործների երիտասարդ կոլեկտիվ։ 1924 թ. հունիսի 15-ին մեծ հանդիսավորությամբ Լենինականի տեքստիլագործները թողարկեցին առաջին մետր կտավը։ Այդ օրը եղավ Լենինականի տեքստիլ արդյունաբերության ստեղծման օր։

Լենինականի տեքստիլ արդյունաբերության զարգացմանը մեծ օգնություն ցույց տվին եղրայրական Ադրբեջանից եկած բամբաթիվ տեքստիլագործ մասնագետներ և որակյալ բանվորներ։ Նրանք պատրաստեցին ու որակավորեցին երիտասարդ բանվորներին։ 1928 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում սովետական կարգերի հաստատման VIII տարեդարձի օրը Անդրիոմկոմի և Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կատարվեց նորակառույց տեքստիլ ֆաբրիկայի հանդիսավոր բացումը։

Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի անունից Ա. Մռավյանը ողջունեց Լենինականի աշխատավորությանը նոր մանարան ֆաբրիկայի բացման առթիվ։ Ա. Մռավյանը ցանկություն հայտնեց Լենինականում էլ ավելի զարգացնելու տեքստիլ արդյունաբերությունը։

Ա. Ի. Միկոյանը, Տեքստիլ դարձարանի և Շիրջրանցքի վրա կառուցված հիդրոկայանի բացման առթիվ ողջունելով Լենինականի աշխատավորությանը, գրում է. «Ցանկանում եմ, որ հնարավորություն չունեմ ներկա գտնվելու Խորհրդային Հայաստանի ութերորդ տարեդարձի տոներին, Լենինականի առաջին կարեորագույն ինդուստրիալ օջախների բացմանը։ Տեքստիլ գործարանի և հիդրոկայանի բացումը ամենալավ նուշարձանն է Հայաստանի հոկտեմբերի համար։ Շնորհավորում եմ ձեզ՝ Լենինականի պրոլետարիատի տնտեսական սոցիալիստական ֆրոնտում տարած իսկապես որ խոշորագույն հաղթանակի համար։ Ջերմապես ցանկանում եմ ձեզ այսուհետև նույնպես նման փայլուն հաղթանակներ և նվաճումներ

ինդուստրացման ասպարեզում։ Կեցցե Լենինականի պրոլետարիատը և Լենինական քաղաքը՝ Հայաստանի նոր պրոլետարական կենտրոնը»[1]։ Մինչև 1930 թ. Լենինականի աշխատավորները համառ ու հերոսական աշխատանք ծավալելով, շահագործման հանձնեցին նորակառույց գործվածքային ֆաբրիկան, որի սարքավորումը տեղադրվեց միանգամայն հաջող։ Մանարան և գործվածքային ֆաբրիկաներում հաստոցների տվելացմամբ աճեց բանվորների ու բանվորուհիների քանակը, որոնք տարեցտարի բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը, ավելացրին ֆաբրիկաների տարեկան արտադրանքը։ Եթե այդ ֆաբրիկաների տարեկան համախառն արտադրանքը 1928 թ. ընդունենք 100%, ապա 1933 թ. համախառն արտադրանքը հասնում է 320%, այդ թվում գործվածքինը՝ 300%, մանվածքինը՝ 289%, իսկ 1938 թ. համախառն արտադրանքը 420%, գործվածքինը՝ 408%, մանվածքինը 316%։ Ֆաբրիկաներում առաջավոր բանվորներ են եղել ջուլհակուհիներ Ս. Դավթյանը, Ա. Պետրոսյանը, վարպետներ Ս. Ղազարյանը, Ա. Ահարոնյանը, մանողներ Ն. Ախտիսյանը, Ա. Ավագյանը, Մ. Համբարձումյանը, Ա. Արսենյանը, փականագործներ Ա. Հակոբյանը, Ա. Մկրտչյանը և ուրիշներ։ Ֆաբրիկանների աշխատանքներին մեծ ուժ ու էներգիա են ներդրել առաջին դիրեկտորները՝ Հ. Գասպարյանը, Գ. Գողթունին, Հ. Բազդասարյանը և ուրիշներ։

Լենինականի տեքստիլ արդյունաբերության համար որակյալ մասնագետ կադրեր պատրաստելու նպատակով 1929 թ. կազմակերպվեց առաջին ֆաբդործուսը, իսկ 1930 թ.՝ տեքստիլ տեխնիկումը։ 1933 թվականին տեխնիկումը տեքստիլ արդյունաբերության ձեռնարկություններին տվեց իր առաջին շրջանավարտները։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը Հայաստանում Սովետական կարգերի հաստատման XII տարեդարձի առթիվ ողջունելով Լենինականի աշխատավորներին, գրում է՝

[1] «Բանվոր», 1928 թ., 29 նոյեմբերի, № 120։

«Լենինականի՝ Քաղիսա ընկ. Գումեղինին
Քաղխորհուրդ ընկ. Գևորգյանին

Խնդրում եմ հազորդել Լենինականի ընկերներին, երկաթուղու և տեքստիլի հարվածայիններին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ջերմագին ողջույնը Նոյեմբերյան հաղթանակի 12-րդ տարեդարձի առթիվ։

Բանվորական Լենինականը դիմավորում է 12-րդ տարեդարձը մի շարք նվաճումներով։ Գործարկվում է Լենինականի հիդրոկայանի նոր ագրեգատը, տեքստիլը ցույց է տալիս արդեն առողջացման վերելքի նշաններ, երկաթուղու հարվածայինները հաջողությամբ շարունակում են պայքարն առողջ տրանսպորտի համար, զգալի չափով բարեկարգվում է քաղաքը։

Կենտկոմը լիահույս է, որ Լենինականի բանվորները, կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ էլ ավելի կլարեն իրենց ուժերը ամրացնելու և լիակատար դարձնելու հաղթանակը ամեն տեսակետից Լենինականը բանվորական օրինակելի քաղաք դարձնելու համար։

Ջերմ կոմունիստական ողջույն Մայիսյան ապստամբության հերոս քաղաքին, մեր պրոլետարական Լենինականին՝ Հայաստանի բանվորների և աշխատավորների մեծագույն հաղթանակի 12-րդ տարեդարձի առթիվ»[1]։

ՍՍՌՄ-ի ինդուստրացման բազայի վրա Հայաստանում տարբեցտարի ընդարձակվեց տեքստիլ արդյունաբերությունը, որը գերազանցապես կենտրոնացած էր Լենինականում։ Լենինականի տեքստիլագործ բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, եղբայրական ռեսպուբլիկաների օգնությամբ, 1939 թ. շահագործման հանձնեցին միութենական նշանակություն ունեցող Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը՝ ռեսպուբլիկայի ամենախոշոր ձեռնարկություններից մեկը, որը սարքավորված էր հայրենական առաջավոր տեխնիկայով։ Կոմբինատի մանարան ֆաբրիկայում աշխա-

---

1 «Խորհրդային Հայաստան», 1932 թ., 28 նոյեմբերի, № 277։

տում էին 76 հազար մանող իլիկներ, իսկ գործվածքային ֆաբրիկայում՝ 2264 գործող հաստոցներ, որոնք 1940 թ. մյուս ֆաբրիկաների 1930 թ. համեմատությամբ հինգ անգամ ավելի մանվածք տվին և 18 անգամ ավելի գործվածք։

Այսպիսով, Լենինականի աշխատավորները ՍՍՌՄ-ի եղբայրական ժողովուրդների օգնությամբ, իրենց հերոսական աշխատանքով, 1923 թ. Ռուսաստանի տեքստիլագործների կողմից նվեր ուղարկած իլիկների և գործող հաստոցների բազայի վրա Հայաստանում տեքստիլ արդյունաբերության հիմքը դրեցին։ Քաղաքում ստեղծեցին Մոլոտովի անվան մանարան և զուգահեռաբարիկատաժ ֆաբրիկաները՝ Հայաստանի տեքստիլ արդյունաբերության խոշոր ձեռնարկությունները, ինչպես նաև Սայիսյան ապոտամբության անվան տեքստիլ կոմբինատը, որը միավորում է մանվածքային և գործվածքային երկու խոշոր ֆաբրիկաներ։ Դրա հետ միաժամանակ ռեսպուբլիկայի մի քանի քաղաքներում ստեղծվեցին տեքստիլ արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ։ Այսպիսով, Լենինականը դարձավ Հայկական ՍՍՌ-ի տեքստիլ արդյունաբերության կենտրոնը։

Լենինականի աշխատավորները 1934 թ. օգոստոսին, շահագործման հանձնեցին մսի-պահածոների կոմբինատի սառցարանը, սպանդի և ալիքի ցեխերը։ Կոմբինատի կառուցման աշխատանքներն սկսվել էին 1930 թվականից իսկ 1937 թ. վերջերին կոմբինատն իր բոլոր ցեխերով շահագործման հանձնվեց։ Կոմբինատի կառուցման և սարքավորման վրա ծախսվել է 17 միլիոն ռուբլի։ Այդ կոմբինատը ռեսպուբլիկայի խոշոր ձեռնարկություններից մեկն է, որը մեր երկրին տալիս է հաղարավոր տոննաներով երշիկեղեն և բարձրորակ պահածոներ։

Կոմբինատի բազմահարկ շենքի շուրջը կառուցված են նրա օժանդակ ցեխերը, վարչական հիմնարկները, բանվորական լուսավոր բնակարանները և բազմահարկ գեղեցիկ հասարակական շենքերը։

Լենինականի հացի գործարանի կառուցման աշխատանքներն սկսվել են 1933 թ., շահագործման հանձնվել 1936 թ.

Դուլլաս-տրիկոտաժ ֆաբրիկայի կազմակերպումը ցնծում է

սպրիլի 1-ին։ Գործարանն ունի շուրջ մեքենայացված վառարան, որոնք օրական արտադրում են 40 տոննա մի քանի տեսակի հաց։ Գործարանի վրա ծախսված է մեկ միլիոնից ավելի գումար։ Հետագայում Լենինականում շահագործման հանձնվեցին նաև հացի երկրորդ, խոշոր մեքենայացված գործարանը և հրուշակարանը։

Լենինականում վաղուց ի վեր գործում էին լիմոնադի և գսրեջրի գործարանները, որոնք Սովետական իշխանության տարիներին հիմնովին վերափոխվեցին, վերակառուցվեցին։ Գարեջրի արտադրման տեխնոլոգիան կատարելագործվեց։ Տարեցտարի ավելացավ այդ գործարանի արտադրական կարողությունը։ 1940 թ. Գարեջրի գործարանը տվեց 850 հազար ռուբլու արտադրանք։ Շահագործման էին հանձնված ասլակու, կրի, տոմատի, փայտամշակման գործարանները։ Տպարանի բանվոր-ծառայողները հս Սովետական իշխանության տարիներին անընդհատ բարձրացնում էին իրենց ցեխերի արտադրական կարողությունը։

Լենինականի պարտիական կազմակերպության ոգնությամբ սկսեց զարգանալ տեղական արդյունաբերությունը։ Քաղաքի մեխանիկական գործարանը, որը պատրաստում էր գյուղատնտեսական գործիքներ, տեքստիլի մանվածքային և գործվածքային ֆաբրիկանների համար մեքենաների պահեստային մասեր, 1929 թ. նոյեմբերին տեղափոխվեց իր նորակառույց շենքը։ Գործարանի նոր ցեխերի արտադրական պրոցեսների որոշ մասը մեքենայացվեց հայրենական սարքավորումների տեղադրման շնորհիվ։

1925—1932 թթ. ընթացքում Լենինականում կոոպերացնելով արհեստավորներին, կազմակերպվեցին 16 արհեստագործական արտելներ՝ կարի, կոշիկի, նալ ու մեխի, բամբակյա գործվածքի, գորգագործության, մետաղամշակման, փայտամշակման, շինանյութերի և այլն։ Լենինականի պարտիական ու սովետական օրգանները ծավալուն պայքար կազմակերպեցին դասակարգային թշնամու դեմ, որը պիմադրում էր արհեստավորների կոոպերացմանը։ Տեղական օրգանները մեծ օգնություն ցույց տվին արհեստագործական

կոոպերացիային՝ հումք ձեռք բերելու, արտադրությունը կազմակերպելու և արտադրանքն իրացնելու գործում։ Արհեստագործական արտելները որոշ դեր խաղացին բնակչության կարիքները լայն սպառման առարկաներով ապահովելու գործում։ Այդ արտելները 1930 թ. տվեցին մեկ միլիոն ռուբլու, 1936 թ. 6 միլիոն ռուբլու, իսկ 1940 թ. արդեն 10 միլիոն ռուբլու համախառն արտադրանք։

1918—1920 թթ. Ալեքսանդրապոլում մի կողմից գաղթականների քայքայիչ քաղաքականության, մյուս կողմից՝ թուրքական զավթիչների կողոպուտների ու ավերումների պատճառով քայքայման դպրոցական համակարգին հասավ երկաթուղային տնտեսությունը։ Երկար տարիներ չնորոգելով գիծը, կոճերի մի մասը փտել էր, մի մասն էլ թալանվել։ Ալեքսանդրապոլի շոգեքարշային դեպոյում կանգնած էին մի քանի տասնյակ փչացած շոգեմեքենաներ։

Երկաթուղին ծանր դրությունից դուրս բերելու միակ ելքը Վրաստանի և Ադրբեջանի երկաթուղայինների հետ կապ ստեղծելն էր, որպեսզի գնացքների երթևեկության համար տեխնիկական տեսակետից երկաթուղագիծը անվնաս դարձվեր, հանդուցյալ ապահովվեր վագոններով, շոգեմեքենաներով, վառելանյութով, կանոնավորվեր երթևեկությունը։

1921 թ. հունիսին կայացավ Ալեքսանդրապոլի հատվածի երկաթուղայինների համագումարը։ Համագումարը լսեց երկաթուղու կոմիսարի տեղակալ Ռ. Ոսկանյանի զեկուցումը՝ երեք հարիսան ռեսպուբլիկաների երկաթուղիների միացման մասին։ Զեկուցողը նշեց, որ ազգամիջյան ավերիչ պատերազմներից հետո, երկիրը թալանվել ու ավերվել, երկաթուղին քայքայվել, ճանապարհները քանդվել են, բազմաթիվ մարդիկ հաշմանդամ են դարձել։ Այս ծանր վիճակից դուրս գալու համար պետք է դիմել հերոսական աշխատանքի, ամեն տեսակ դժվարություն հաղթահարելու, քայքայված տնտեսությունը վերականգնելու և վերաստեղծելու համար։ Զե-

կուղղը միաժամանակ նշեց, որ այդ գործում խոշոր դեր ունեն կատարելու երկաթուղայինները։

1921 թ. ապրիլի վերջերին երեք ռեսպուբլիկաների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի երկաթուղայինների միացում կատարվեց, որով Անդրկովկասում երկաթուղային տնտեսության զարգացման նոր հնարավորություններ ստեղծվեցին։

Լենինականի երկաթուղայինները, օգտագործելով ստեղծված այդ նոր հնարավորությունները, 1922—1923 թթ. կատարեցին վագոնների և շոգեմեքենաների միջին նորոգում։ 1922 թ. վերջերին նրանք շահագործման հանձնեցին 20 շոգեմեքենա, այդ թվում դեպոյում Մայիսյան ապստամբության ղեկավար Եդոր Սեյանի անվան շոգեմեքենան, և բազմաթիվ ապրանքատար և մարդատար վագոններ։

Այդ աշխատանքներում ուշի են ընկնում կաթսայագործ Տ. Յալովկինը, փականագործներ Հ. Տեր-Գրիգորյանը, Ս. Խաչատրյանը, խառատներ Գ. Գաբրիելյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Պետրոսյանը, դպրին Ա. Զաքյանը, հյուսներ Ա. Գրիգորյանը, Ե. Ջուլֆալյանը, վարպետներ Գ. Սահակյանը, Գ. Արաջյանը, Ա. Տիանյանը, Ա. Թոքմաջյանը և ուրիշներ։ Երկաթուղայինները բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը, վերականգնեցին հանգույցի աշխատանքները։

1928—30-ական թվականներին երկաթուղային բանվործառայողների առաջ խնդիր էր դրված՝ ապահովել ծանրաքաշ ղնացքների փոխադրումը, կատարել և շահագործման հանձնել նոր դեպոներ, լայնացնել շոգեքարշային դեպոն և վագոնային ցեխը, որպեսզի լավագույն ձևով բավարարեին մեր ռեսպուբլիկայի արագ տեմպերով զարգացող ժողովրդական տնտեսության պահանջները։

Սովետական իշխանության տարիներին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման ու շահագործման հետ միասին մեծացավ, ընդարձակվեց դաշնակների տիրապետության տարիներին քայքայված և ավերված Լենինականի երկաթուղային հանգույցը։ Շահագործման հանձնվեցին նոր ցեխեր։ Շոգեքարշային դեպոյում կազմակերպվե-

ցին կութեայագործական, միջին նորոգման և մեխանիկական ցեխեր։ Կրկնապատկվեց բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների անձնակազմը։ Նոր սարքավորման շնորհիվ մի շարք աշխատանքներ մեքենայացման ենթարկվեցին։ 1929 թ. նոյեմբերի 29-ին շահագործման հանձնվեց Լենինական—Արթիկ երկաթուղին 25 կիլոմետր երկարությամբ, ապա՝ Անի—Անիպեմզա 7 կիլոմետր և Արթիկ—Մահմուդջուղ 8 կիլոմետր երկարությամբ երկաթուղագծերը։ Սրանք խթանեցին Լենինականում նորակառույց ֆաբրիկաների, գործարանների, բանվորական ավանների շինարարությանը, ինչպես նաև շահագործման հանձնված արտադրական օբյեկտների աշխատանքներին, որոնց համար համապատասխան բեռներ էին փոխադրում։ Դեպոյի կութեայագործ Մելիք Կիրակոսյանը իր լավագույն աշխատանքի համար Հայկական ՍՍՌ Կենտգործկոմի կողմից ռեսպուբլիկայում առաջիններից մեկը ստացավ։ Աշխատանքի Հերոսի կոչում։ Լենինականի երկաթուղային հանգույցում առաջավոր մեքենավարներ էին Ս. Գրիգորյանը, Ի. Կոլիվիցկին, Վ. Կուզնեցովը, Ս. Թարոսյանը, Գ. Գայֆաճյանը, Հ. Սադոյանը։ Փականագործ Պ. Կուզնեցովը շոգեքարշային դեպոյի առաջին կոմիսարն էր, իսկ հետագա տարիներին դարձավ արհմիության ղեկավար աշխատող։ Մեքենավար Բ. Պողոսյանը նախաձեռնեց մի ճախարակումից մինչև մյուս ճախարակումը աշխատել առանց նորոգման, որի համար 1934 թ. աշնանը առաջինը Լենինականի երկաթուղային հանգույցում Լենինի շքանշան ստացավ։

Շոգեքարշերի միջին նորոգումը կատարելու նպատակով դեպոյում կազմակերպվեց միջին նորոգման ցեխ։ Լվացման ցեխում տեղադրվեցին նոր սարքավորումներ, որոնց միջոցով կատարելագործվեց և արագացվեց շոգեքարշերի լվացման պրոցեսը։ Վագոնային պարկում կազմակերպվեցին փականագործական և խառատային ցեխեր, դարբնոց։ Այդ նոր ցեխերը հայրենական առաջավոր սարքավորում ստացան։ Ամբողջովին վերակառուցվեց կայարանի շենքը։

Այսպիսով, 1921—1940 թթ. Լենինականի երկաթուղային հանգույցը իր տեխնիկական սարքավորմամբ Անդրկովկասյան

երկաթուղային հանգույցի լավագույն օբյեկտներից մեկը դարձավ։ Այդ հանգույցի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, հավատարիմ մնալով իրենց ռևոլյուցիոն տրադիցիաներին, ոչ միայն ամեն տարի սիստեմատիկ կատարել ու դերակատարել են իրենց տարեկան պլանները, այլև Անդրկովկասյան երկաթուղիների մրցության մեջ լավագույն շահել են առաջնություն։

* * *

Ալեքսանդրապոլի գավառի աշխատավորները վաղուց էին երազում Ախուրյանի ջուրը օգտագործել իրենց հողերը ոռոգելու համար։ Դեռ 1904 թ. Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի նախահաշվում նախատեսվում է 500 ռուբլի՝ Ախուրյան գետից ջրանցք անցկացնելու նախնական աշխատանքների համար։ Ջրանցքը պետք է սոռոդեր 300 դեսյատին հող, գլխավորապես քաղաքապատկան հողերը, բայց մինչև 1906 թ. ոչ մի աշխատանք չի կատարվում։ 1906 թ. թույլտվություն են խնդրում համապատասխան օրգաններից՝ նախնական աշխատանքների և տեղի ուսումնասիրության համար։ 1912 թ. մի քանի հարյուր հոգու ստորագրությամբ դիմումներ են գրում մի շարք օրգանների այդ աշխատանքներն սկսելու համար։ 1912 թ. համապատասխան օրգանները որոշում են՝ թույլատրել Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությանը՝ սկսելու նախնական աշխատանքներ, իսկ նախագիծ կազմելու համար տալ երեք տարի ժամանակ։

1912 թ. նոյեմբերին քաղաքային վարչությունը որոշում է ընդունում սկսել նախնական աշխատանքները, որի համար կազմվում է հատուկ հանձնաժողով։ Ի վերջո, 1914 թ. մարտին հաստատվում է նախահաշիվը։ Տրվում է չորս տարի ժամանակ աշխատանքներն ավարտելու համար։ Վրա է հասնում համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմը, նրան հաջորդող դաշնակների տիրապետության տարիները և այդ պլանները չեն իրագործվում։

1921 թ. ապրիլին, երբ Թուրքական զավթիչները հեռացվեցին Ալեքսանդրապոլի գավառից, այդ օրերին Կոմսարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Ա. Ֆ. Մյասնիկյանի միջոցով ստացվեց Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի պատմական նամակը՝ ուղղված Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին, որի մեջ Վ. Ի. Լենինը գրում է. «Իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ։ Ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[1]։

Լենինականի աշխատավորները Հայաստանի Կոմսարտիայի ղեկավարությամբ առաջինը նախաձեռնեցին կատարելու Վ. Ի. Լենինի ցուցումները։ Նրանք դրին իրականացնել քաղաքի աշխատավորության դարավոր երազանքը՝ կառուցել Շիրջրանցքը։

1921 թ. Ալեքսանդրապոլում սովետական կարգեր հաստատվելուց երկու ամիս հետո, ջրանցքի կառուցման հարցը քննարկվելով սովետական և պարտիական օրգաններում, ստանում է համապատասխան լուծում։

1922 թ. նոյեմբերից սկսվում են ջրանցքի կառուցման աշխատանքները։ Թունելի սկզբնավորման տեղում լսվում են առաջին պայթյունները։

Շիրակի ջրանցքի կառուցման առթիվ 1922 թ. հոկտեմբերին Լենինականի Գավգործկոմը հատուկ կոչ է ուղղում Հայաստանի աշխատավորներին, ուր ասվում է, որ Շիրակի աշխատավորությունը սկսել է այդ մեծ գործը այն խորին համոզմունքով, որ մենակ չի մնալու, իրեն օգնության ձեռք կմեկնեն Հայաստանի բանվորներն ու գյուղացիները։ Այդ կոչին Հայաստանի աշխատավորները պատասխանեցին կոնկրետ գործով, ստեղծեցին հատուկ ֆոնդեր Շիրջրանցքի կառուցման համար։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 404։

Շիրջրանցքի կառուցման աշխատանքները ղեկավարում էր Ալեքսանդրապոլի Գավդործկոմի նախագահ Արսեն Նազարյանը՝ իրեն Շիրջրանցքի կառուցող վարչության նախագահ։ Փոխնախագահ էր աշխատում Արմենակ Հովսեփյանը, իսկ գլխավոր ինժեներ՝ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը։ Վերջինս գլխավորում էր այն հերոսական աշխատանքները, որ երկուսուկես տարի կատարեց ջրանցքի բանվորությունը։

Ինժեներ Հ. Տեր-Աստվածատրյանը ցույց տվեց իր արտակարգ ընդունակությունները Շիրջրանցքի կառուցումներում։ Այդ ջրանցքը հիացմունք էր պատճառում իր հոյակապությամբ։ Հ. Տեր-Աստվածատրյանը Սովետական իշխանության հետագա տարիներին խոշոր ծառայություն մատուցեց Հայաստանի մի շարք էլեկտրակայանների, ջրանցքների կառուցման գործին։ Շիրջրանցքի կառուցման գործում աշքի ընկան ինժեներա-տեխնիկական աշխատողներից տեխնիկական բաժնի ավագ ինժեներ Նատալիա Մարտիրոսյանը, ինժեներներ Ա. Ցակիմովը, Լ. Մնացականյանը, Վ. Սմիրնիցկին, Ն. Թորչյանը և ուրիշներ։

Հարյուրավոր բանվորների մեջ աչքի ընկան՝ բարձրաշներ Մ. Հովհաննիսյանը, Գեորգի Պոլիցիտին, բանվորներ՝ Աղասի Դարբինյանը, Համո Մելիքյանը, Տիգրան Զաքարյանը, Դիմիտրի Խրիստոֆորովը, Վլադիմիր Մանժուլիդզեն, պոետ-որմնադիր Մնացական Թամրազյանը, փականագործներ Գեորգի և Սերգո Գյոլեցյանները, թունելի բանվորներ՝ Հմայակ Դարբինյանը, Գալուստ Հարությունյանը, պայթեցնող՝ Շուխովը և շատ ուրիշներ։

1925 թ. հունիսի 21-ին Շիրջրանցքի բացման հանդեսին մասնակցելու եկան ժամանել ՀԿ(բ)Պ Կենտկոմի և ԺողԿոմսովետի կազմը՝ Ս. Լուկաշինի, Ս. Համբարձումյանի և Ա. Հովհաննիսյանի գլխավորությամբ։

Հունիսի 21-ի երեկոյան Լենինականի թատրոնի շենքում կայացավ ՀՍՍՌ Կենտգործկոմի III նստաշրջանը՝ Քաղաքային Սովետի անդամների, Վրաստանի, Ադրբեջանի և այլ տեղերից եկած ներկայացուցիչների մասնակցությամբ։ Նստաշրջանը, լսելով Արսեն Նազարյանի զեկուցումը Շիրջրանցքի

կառուցման աշխատանքների մասին, որոշում ընդունեց Շիրշրանցքը անվանել Վ. Ի. Լենինի անունով։

1925 թ. հունիսի 21-ին շահագործման հանձնվեց Լենինի անվան Շիրշրանցքը։ Այնուհետև ջրանցքի վերին մասում հանդիսավոր պայմաններում հիդրոէլեկտրակայանի հիմքը դրվեց։ Այդ նպատակի համար արդեն կառուցված էր երկու և կես վերստ երկարություն ունեցող թունելը, որտեղից ջուրը 115 մետր բարձրությունից թափվելով դեպի ձորը, տալու էր 3000 ձիու ուժ կազմող էլեկտրաէներգիա։

Շիրակի ջրանցքի կառուցումով իրականություն դարձավ Ալեքսանդրապոլի գավառի աշխատավորության նպատակը[1]։ Ջրանցքի կառուցման ընդհանուր ծախսը կազմեց 1.800 հազար ռուբլի, այսինքն՝ այնքան գումար, որքան մի տարում կարող էր ստացվել ջրանցքի ոռոգած դաշտերի բերքից։ Ջրանցքի կառուցումով լուծվեցին Լենինականի տրդյունաբերական ձեռնարկությունները էլեկտրաէներգիայով ապահովելու, քաղաքը կանաչազարդելու հարցերը։

Շիրկանալի կառուցման առթիվ հայ մեծանուն պրոլետարական գրող Հակոբ Հակոբյանը «Բոլշևիկ է Շիրկանալը» իր պոեմում ասում է.

Բոլշևիկ է Շիր-Կանալը... Դարու գավակ այս հերոսին,
Մեր այս դարու հարստատին, ով չի՛ տեսել թող դա տեսնի.
Միլիոնավոր պայթյունների, հարձակումի տանկերով,
Արիաշալի ժեռ տիերին դրոհ տվող ուռաներով,
Դիրքերից-դիրք նվաճումներ, մի թոնելը զոդող մյուսին,
Աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին.—
Ուր ձեռք մեկնես՝ այնտեղ հրաշք, այնտեղ մի դյուղ թող կանաչի,

---

1 1925 թ. Լենինական գավառն ուներ յոթ գավառամաս՝ 198 գյուղ 126.823 բնակչով, իսկ 1930 թ. օգոստոսից, վերացաս օրգաններ-ի որոշմամբ, Լենինական քաղաքին միացվեց Դյուզլենդի (այժմ Ալեքսանդրյան) շրջանը, որն ուներ 48 գյուղ՝ 45.300 բնակչով։ Այդ ժամանակվանից Լենինականը դարձավ գավառային կենտրոն լինելուց։

Ա. Խաչատրյանը Մանկապարտեզի երեխաների հետ

Ուր երևաս, ուր էլ հասնես՝ մի նոր սերունդ այնտեղ աճի.
Ով ծարավ է, թո՛ղ հագենա, ով յարամազ՝ թող կշտանա...
Այսպես է մեր Շի՛րվանալը, մի դյումբեցի՝ օղուլ է նա
Ե՛վ դարդիման, և՛ սրտաբուխ, և՛ լայնաշուրթ, և
հյուրասեր—
Քեֆը տեղը, երդը բերնին, խոսքը շուրթին, լիառատ սեր։
. . . . . .
Բոլշևիկ է Շիրվանալը՝ մեծ զավակը Հայաստանի,
Նրա որդին՝ շահը ձեռքին լույսի աղբյուր մի տիտանի[1]։

Նորակառույց հիդրոկայանը էլեկտրական էներգիա տվեց Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններին, Արթիկ տուֆին, և Իլյիչի լամպեր վառեց Լենինականի շրջանի, ինչպես նաև հեռավոր Ամասիայի շրջանի սոցբեչանական և հայկական գյուղերում։ Հայկական ՍՍՌ Ժողկոմսովխոզի որոշմամբ հիդրոկայանը կոչվեց Բոլշևիկյան պարտիայի և Սովետական պետության ակնառավոր դործիչ Ս. Օրջոնիկիձեի անունով։ 1932 թ. դեկտեմբերի 6-ին Լենինականի աշխատավորները շահագործման հանձնեցին հիդրոկայանի երկրորդ ագրեգատը։

* * *

1929 թ. մեծ բեկման տարի էր սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառների համար։ Մենք վճռական բեկում ձեռք բերինք ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում։

Այդ բեկումն իր արտահայտությունը գտավ սոցիալիստական շինարարության ընդգավառում՝ բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների ստեղծագործական նախաձեռնության աճման, սոցիալիստական մրցության առաջացման և

[1] Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, հատ. II, ԳԱ հրատարակչություն, 1956 թ., էջ 89։

ծավալման մեջ, որը հանդիսանում է աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր գործոններից մեկը, իսկ աշխատանքի արտադրողականության բարձրացումը սոցիալիզմի վերջնական հաղթանակի գլխավոր պայմանն է կապիտալիզմի դեմ մղվող պայքարում։

1929 թ. ապրիլին կայացած Կոմունիստական պարտիայի XVI կոնֆերանսը հաստատեց երկրի ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանը (1928—1932)։ Հնգամյակի հիմնական խնդիրն էր մեր երկրում ստեղծել այնպիսի ինդուստրիա, որի հիման վրա հնարավոր լիներ նորագույն տեխնիկայով վերազինելու և վերակազմելու ոչ միայն ամբողջ արդյունաբերությունն ու տրանսպորտը, այլև սոցիալիստական հուն փոխադրելու գյուղատնտեսությունը։ Կոնֆերանսը միաժամանակ կոչ արեց բանվորներին, աշխատավոր գյուղացիներին ծավալել սոցիալիստական մրցություն՝ հնգամյակում նախատեսված այդ վիթխարի պլանների կատարման համար։

Մեր երկրի աշխատավորները, ծավալելով սոցիալիստական մրցությունը, ստեղծեցին բուռն խանդավառություն, ցույց տվեցին աշխատանքային սխրագործության փայլուն օրինակներ։ Պարտիայի XVI կոնֆերանսի գիմումը սոցիալիստական մրցություն ծավալելու մասին, ջերմ արձագանք գտավ ինչպես ողջ երկրում, այնպես էլ Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային տրանսպորտում։ Երևանի բամբակազտիչ գործարանի բանվորները առաջինը մրցման հրավիրեցին Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորներին, իսկ Երևանի քանվոր-ծառայողները մրցման մեջ մտան Կիրովաբադի և Լենինականի աշխատավորների հետ՝ հնգամյա պլանի առաջադրանքները ժամկետից շուտ և բարձր որակով կատարելու համար։

1931 թ. մայիսի 6-ին Լենինականում բացվեց արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային տրանսպորտի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների հարվածայինների I համագումարը, որտեղ հանրագումարի ներվեցին սոցիալիստական մրցության ծավալման շնորհիվ

ձեռք բերված հաջողությունները և քննության առնվեցին առաջիկա խնդիրները։

Հարվածայինների համագումարը նշեց, որ արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման հետ միաժամանակ աճել է բանվորների, ծառայողների քանակը, բարձրացել նրանց աշխատավարձը, բարելավվել են նյութական-կենցաղային և բնակարանային պայմանները։

Պոլիդոնի, Սևվերսկու, Կաղայի պոստի տասնյակ հազար բրիգադները Սովետական իշխանության տարիներին համալրեցին ինչպես Լենինականի, այնպես էլ հանրապետության մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների կազմը, սովորեցին միջնակարգ և բարձրագույն դպրոցներում, դարձան Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների համար պիտանի մարդիկ՝ սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ։

1921—1940 թթ. ընթացքում Լենինականում Սովետական պետությունը ներդրել է մոտ 165 միլիոն ռուբլի, ստեղծել է հանրապետությունում նշանակություն ունեցող մի քանի տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք 1940 թ. տարեկան 80 միլիոն ռուբլու արտադրանք էին տալիս երկրին[1]։ Այդ ձեռնարկությունների շահագործման, երկաթուղային հանգույցի լայնացմանը զուգընթաց ստեղծվեցին առաջավոր բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների նոր կադրեր, որոնք, տիրապետելով արտադրության ժամանակակից տեխնիկային, բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը։

Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղային հանգույցում տարեցտարի լայն ծավալ ստացավ սոցիալիստական մրցությունը, առաջավորների շարժումը, որն ապահովեց արտադրական ձեռնարկությունների կարողության և ժողովրդի նյութական բարեկեցության անընդհատ աճը։

[1] 1926—1927 թվականների անփոփոխ դներով։

1939 թ. փայտամշակման ֆաբրիկայում սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված էր բանվորների 82 տոկոսը, մեխանիկական գործարանում՝ 79,3, մսի-պահածոների կոմբինատում՝ 69,2, կոշիկի ֆաբրիկայում՝ 66,7, կաբի ֆաբրիկայում 65,7, հացի գործարանում՝ 43,6 տոկոսը։ Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններում մսի-պահածոների կոմբինատում և, մասնավորապես, տեքստիլ կոմբինատում, մանարան և գուլպա-տրիկոտաժ ֆաբրիկաներում բանվորների ճնշող մեծամասնությունը կանայք էին։ Երբ գործարանում, ֆաբրիկայում աշխատող հարվածայիններն իրենց պլանները կատարում էին 105—110 տոկոսով, ապա առաջավոր բանվորները, տիրապետելով իրենց արտադրության տեխնիկային, մի քանի անգամ դերազանցում էին արտադրական նորմաները։ Առաջավորների շարքերում էին պարտիականներն ու կոմերիտականները։

Լենինականի աշխատավորներն իրենց առաջավոր ձեռնարկություններով միշտ էլ եղել են ռեսպուբլիկայի բանվործառայողների առաջավոր ջոկատներից մեկը, որոնք ՀԿ(բ) Պարտիայի ղեկավարությամբ, անձնվեր պայքար են մղել հնգամյակների պլանները ժամկետից շուտ կատարելու համար։

Սովետական իշխանություն ստեղծվելուց հետո ժողովրդի առողջապահության հարցը դարձավ պետական կարևոր գործ։ Սովետական պետությունը ստեղծեց առողջապահական նոր սիստեմ, որն ամբողջությամբ ծառայում է աշխատավորության առողջությունը ապահովելու գործին։ Պետությունն իր վրա վերցրեց առողջապահության սիստեմի հետ կապված ծախսերը, այդ թվում ապգարնակչության ձրի բուժման գործը։

Սովետական իշխանության տարիներին մեծ ուշադրություն դարձվեց առողջապահության ցանցի ընդլայնման, հանգրստյան տների և սանատորիաների կազմակերպման վրա։ Այդ հոդատարության փայլուն ապացույցներից մեկը Լենի-

նականի առողջապահական ցանցի ընդարձակումն ու տարեց տարի նրան հատկացված գումարի աճումն էր։

Ալեքսանդրապոլը ինչպես համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, այնպես էլ 1918—1920 թթ. սովի, գաղթականության և տարափոխիկ հիվանդությունների օջախ էր դարձել։ Դրանք լիկվիդացվեցին միայն Սովետական իշխանության տարիներին ձեռնարկված արտակարգ միջոցառումների շնորհիվ։

1940 թ. Լենինականում արդեն գործում էին վեց հիվանդանոց, հինգ պոլիկլինիկա, երկու դիսպանսեր իրենց մասնագիտական կաբինետներով, մար և մանկան չորս կոնսուլտացիա և բազմաթիվ բուժկայաններ։ Առողջապահական ցանցում աշխատում էին մոտ 500 միջին և բարձր որակի բուժաշխատողներ, այդ թվում Վ. Սելքումյանը, Հ. Ջալլաթյանը, Մ. Մելիք-Քարամյանը, Ա. Քոչարյանը, Ռ. Մուրադյանը, Բ. Ազոյանը, Վ. Տիրոսյանը, Գ. Մելիք-Գրիգորյանը, Մ. Բաբախանյանը և ուրիշներ։ Քաղաքային Սովետի առողջապահական բաժնի բյուջեն 1940 թ. կազմից վեց միլիոն ռուբլի։

Սովետական պետությունը բարելավելով բնակչության նյութական-կենցաղային պայմանները և իր ուշադրության կենտրոնում պահելով աշխատավորների առողջապահության գործը, բարձրացրեց բնակչության աճման տեմպը. մի քանի անգամ կրճատելով մահացության տոկոսը ոչ միայն քաղաքում, այլև գյուղում։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում արմատապես փոխվեց դպրոցական գործը. այն անջատվեց եկեղեցուց։ Հայերենը Հայկական ռեսպուբլիկայում դարձավ պետական լեզու, որը գաստավանդվում է ոչ միայն հայկական դպրոցներում, այլև ազգային փոքրամասնությունների դպրոցներում։ Աշխատավորներին գրագետ դարձնելու և կուլտուրապես բարձրացնելու նպատակով սահմանվեց ծրի կրթություն։

1921 թ. սովետական կարգեր հաստատվելուց մեկ շաբաթ հետո Ալեքսանդրապոլում սկսվեցին դպրոցական աշխատանքները։ Կիսախարխուլ երեք շենքերում երեք հերթի պա-

դասում էին 3000 աշակերտներ, 93 ուսուցիչներով։ 1923 թ. աշակերտների քանակը քաղաքում հասավ 5200-ի, իսկ գավառում՝ 11.500-ի, բացվեց գյուղատնտեսական դպրոց՝ 52 աշակերտներով, մանկապարտեզներ՝ 500 երեխաների համար։ Անգրագիտության վերացման 8 դպրոց և մի քանի գրադարան, խրճիթ-ընթերցարաններ[1]։

Այդ տարիներին լուսավորության բնագավառում ակտիվ աշխատողներ էին Հ. Կարախանյանը, Վ. Աբրահամյանը, Օ. Անդրեասյանը, Պ. Պողոսյանը, Գ. Քացոխյանը, Հ. Միրաքյանը, Ա. Մկրտչյանը, Ս. Հայրապետյանը, Ս. Մովսիսյանը և շատ ուրիշներ։

Պատմական ամենակարճ ժամանակամիջոցում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, կատարվեց կուլտուրական ռևոլյուցիա։ Մեր երկիրը դարձավ համատարած գրագիտության երկիր, կենսագործվեց տարրական և յոթնամյա պարտադիր ուսուցումը։ Բացվեցին բազմաթիվ նոր դպրոցներ, տեխնիկումներ, ինստիտուտներ։ Մի քանի անգամ աճեց աշակերտների, ուսուցիչների և ուսանողների թիվը։

1935 թ. փետրվարին Համ(բ)Պ Կենտկոմը և Ժողկոմսովետը համատեղ որոշում ընդունեցին դպրոցաշինարարության մասին։

Այդ պատմական որոշումից հետո մեր երկրում մեծ թափ ստացավ դպրոցաշինարարության գործը, որի լավագույն օրինակներից մեկը կարող է ծառայել Լենինականը, որտեղ կենսագործված է տարրական յոթնամյա պարտադիր ուսուցումը։ Լենինականի 19 նորակառույց բազմահարկ դպրոցական շենքերում 1940—1941 ուս. տարում սովորում էին 16 հազար աշակերտ։

1922 և 1923 թթ. հոկտեմբերին բացվեցին Լենինականի ինդուստրիալ և գյուղատնտեսական տեխնիկումները։

1925 թ. բացվեց մանկավարժական տեխնիկումը, որը 1929 թ. կոչվեց Ա. Մռավյանի անվան։ 1924 թ. հունվարին

1 Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 112, գ. 413, թ. 20։

Լենինական ժամանեց բանաստեղծ Հ. Հակոբյանը։ Քաղաքի աշխատավորները, նշելով նրա գրական գործունեության 30-ամյակը, 1923 թ. Հովսեփ Կարախանյանի նախաձեռնությամբ կազմակերպված Լենինականի բանվակը կոչեցին նրա անունով։

1923 թ. նկարիչներ Գ. Բրուտյանի, Ա. Սաֆարյանի և Ս. Ալթունյանի նախաձեռնությամբ բացվեց Լենինականի նկարչական դպրոցը։ Պրոֆերաժշտական դպրոցի սովորողների բարձր իմբերի բաղայի վրա կազմակերպվեց Լենինականի երաժշտական տեխնիկումը։

1924 թ. դեկտեմբերի 6-ին Լենինական ժամանեց ՍՍՌՄ Բանդյուղտեղությունի ժողկոմ և Կենտվերտահսկիչ հանձնաժողովի նախագահ Վ. Վ. Կույբիշևը։ Նա այցելեց ջրանցքը և ծանոթացավ նրա աշխատանքներին, իսկ երեկոյան Պետ. թատրոնի դահլիճում քաղաքի պարտիական և սովետական ակտիվի համար դեկուցում կարդաց։

Այդ օրերին էր, որ իր աշխատանքները սկսեց Լենինականի պարտիական դպրոցը, տեղական կազմակերպությունները որոշեցին դպրոցը կոչել Վ. Վ. Կույբիշևի անվան։ Պարտդպրոցը ամեն տարի մի քանի տասնյակ կադրեր էր տալիս քաղաքին, մասնավորապես գյուղերին։ 1925 թ. հունիսին, երբ դպրոցը տվեց իր առաջին շրջանավարտները, Վ. Վ. Կույբիշևը, Մոսկվայից ողջունելով նրանց, ցանկացավ հաջողություններ Իլյիչի պատգամներն իրականացնելու համար մղվող պայքարում։ 1931 թ. այդ դպրոցի աշխատանքները վերակառուցվեցին, և դպրոցին տրվեց արդյունաբերական թեքում։

1931 թ. Լենինականում բացվեց Կիրովի անվան համամիութենական կաթնա-արդյունաբերական տեխնիկումը, որը 1935 թ. մեր ժողովրդական տնտեսությանը տվեց իր առաջին շրջանավարտները՝ կաթի 33 տեխնոլոգներ։ 1935 թ. տեխնիկումում սովորում էին 286 հոգի հայ, ռուս, ադրբեջանցի, վրացի և այլ ժողովուրդների զավակներ։

1939 թ. բացվեց Լենինականի ուսուցչական երկամյա ինստիտուտը մի քանի ֆակուլտետներով։ Ինստիտուտը իր

գոյության տարիների ընթացքում մասսայական դպրոցներին տվել է հարյուրավոր տարբեր մասնագիտությունների մանկավարժական կադրեր։

Այսպիսով, պարտիայի ու կառավարության հոգատարության շնորհիվ, ինչպես ռեսպուբլիկայում, այնպես էլ Լենինականում վերացվեց անգրագիտությունը, ընդարձակվեց մասսայական դպրոցների և տեխնիկումների ցանցը, տարեց տարի աճեցին այդ նպատակի համար հատկացված գումարները։ Բարելավվեցին ուսուցիչների նյութական-կենցաղային պայմանները, բարձրացավ նրանց որակը, նրանց դերը մեր հասարակության մեջ։ Լենինականում Սովետական իշխանության տարիներին աճեցին ժողովրդական ինտելիգենցիայի բազմաթիվ կադրեր։

Ստեղծվեց կուլտուրա հիմնարկների՝ կինոթատրոնների, ակումբների, գրադարանների, ինքնագործ խմբերի, ռադիոյի և կապի ցանց։

1928 թ. կազմակերպվեց Լենինականի Պետական դրամատիկ թատրոնը, որի ստեղծագործ կոլեկտիվը տարեցտարի աճելով, թատրոնը դարձրեց քաղաքի աշխատավորության սիրելի վայրը։

* * *

Մեր երկրում կերպարանափոխվեցին ոչ միայն խոշոր քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները, այլև ստեղծվեցին նոր քաղաքներ, արդյունաբերական նոր կենտրոններ, որոնց բարեկարգման և զարգացման համար Սովետական կառավարությունը հսկայական միջոցներ է տրամադրում։

Ինչպես ռեսպուբլիկայի մյուս քաղաքները, այնպես էլ Լենինականը 1921—1940 թթ. ընթացքում ամբողջովին կերպարանափոխվեց։ Ալեքսանդրապոլ քաղաքի փոխարեն բարձրացավ նոր, սոցիալիստական Լենինականը։

Քսան տարվա ընթացքում շինարարական աշխատանքներ սկսվեցին և ծավալվեցին ոչ միայն քաղաքի կենտրոնում, այլև բոլոր ծայրամասերում։ Քաղաքի ծայրամասերը դարձան անճանաչելի, այդտեղ բարձրացան գործարանների, ֆաբ-

Հայուհի անվան կարի ֆաբրիկայի գործում

րիկաների արտադրական կոմբինատներ և բանվորական բնակելի բաղմահարկ շենքեր։ 1926 թ. երկրաշարժից հետո Լենինականում Կրասնոգվարդեյսկի անվան պարկի շուրջը արագ կերպով կառուցվեցին մի շարք շենքեր՝ քաղաքի վերականգնման կոմիտեի ճարտարապետ Դ. Զիսլյանի նախագծերով։ Այդ շենքերը փոխեցին քաղաքի կենտրոնական մասի տեսքը։

Ինչպես ողջ երկրում, այնպես էլ Լենինականում 1927 թ. պարտիայի XV համագումարի պատմական որոշումից հետո բնակարանային շինարարության նոր վերելք սկսվեց։

Պարտիայի համագումարի որոշումից հետո սովետական ճարտարապետության, մասնավորապես բնակարանային շինարարության զարգացման հիմնական սկզբունքը դարձավ մարդու նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը, այն է՝ բավարարել սովետական մարդկանց կենցաղային սանիտարա-հիգիենիկ պահանջները՝ նրանց տալ լուսավոր, հարմարավետ, տրնոտ, օժանդակ հարմարություններով բնակարաններ։

Քաղաքում արագ տեմպերով կատարվող շինարարական աշխատանքների շնորհիվ բնակելի տարածությունը Լենինականում 1939 թ. կրկնապատկվեց։ 1926 թ. երկրաշարժից քաղաքը ավերվելու, շենքերը խարխլվելու պատճառով, բնակելի տարածությունն իջել էր։

Երկրաշարժից հետո Լենինականում, տարեկան միջին հաշվով 10 միլիոն ռուբլուց ավելի շինարարական աշխատանքներ էին կատարվում, իսկ 1938—1940 թթ.՝ 24 միլիոն ռուբլու[1]։

Քաղաքներում արդյունաբերության զարգացման հետ միասին աճեց քաղաքային բնակչությունը, որի կոմունալ սպասարկման գործը հետ էր մնում քաղաքային բնակչության աճից ու պահանջմունքներից։

1931 թ. Համկ(բ)Պ Կենտկոմի հունիսյան պլենումում «Մոսկվայի քաղաքային տնտեսության մասին և ՍՍՌՄ-ի

[1] Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 112, գ. 484, թ. 911

քաղաքային տնտեսության զարգացման մասին» ընդունված որոշման մեջ ասված է. «Արագացնել ՍՍՌՄ-ում քաղաքային տնտեսության զարգացման տեմպերը և հատկապես բնակարանային շինարարության զարգացման տեմպերը՝ արդյունաբերական շինարարության տեմպերին ու պլաններին համապատասխան»[1]։

Պատմական այդ որոշումից հետո Լենինգրադի քաղաքային Սովետի բյուջեով քաղաքի բարեկարգման ու բնակարանային շինարարության համար հատկացված դրամարկղերից բացի, արդյունաբերական ձեռնարկությունները և երկաթուղային հանդույցը իրենց բանվոր-ծառայողների համար կառուցեցին տասնյակ բնակելի շենքեր։ Քաղաքում և նրա ավաններում պետական վարկի օգնությամբ լայն շինարարական աշխատանքներ ծավալվեցին անհատական բնակարանային շինարարության դծով։

Լայն շինարարական աշխատանքներ ծավալվեցին քաղաքի կենտրոնում։ Ի. Վ. Ստալինի անվան ընդարձակ հրապարակի շուրջը բարձրացան այնպիսի բազմահարկ գեղեցիկ շենքեր, ինչպիսիք են՝ Պետրոգրադի Լենինգրադի բաժանմունքի, հյուրանոցի, «Հոկտեմբեր» կինոթատրոնի, ռուսական, միջնադարդ դպրոցի, Քաղաքային Սովետի Գործադիր Կոմիտեի և բնակելի այլ շենքեր։ Հրապարակին միացնող Ս. Մ. Կիրովի անվան ծառուղարդ փողոցը իր գեղեցիկ շենքերով հասնում է մինչև մանկական այգին։ Մանկական այգու շուրջը իրար են միանում կայարանից և տեքստիլ կոմբինատից եկող դխալավոր փողոցները։

Վ. Ի. Լենինի անվան պուրակից է սկսվում Լենինի պողոտան, որը ձգվում է դեպի կայարան։ Պողոտայի վրա բարձրացել են երկաթուղայիններգի և քաղաքի բանվոր-ծառայողների համար կառուցված քարաշեն շենքեր, Սեյանի անվան երկաթուղայինների կուլտուրայի պալատը, որի պուրակի մեջ

[1] ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, մասն III, 7-րդ հրատարակություն, 1958 թ., էջ 151։

է գտնվում 1931 թ. նոյեմբերի 7-ին բացված Մայիսյան ապստամբության հերոսներին նվիրված՝ քանդակագործ Ա. Սարգսյանի պատրաստած հուշարձանը։ Գորկու բարձունքի վրա և նրա շուրջը տարածված է Ստ. Շահումյանի անվան պարկը։ Հանդստի և կուլտուրայի պարկի մեջ է տեղավորված Լենինականի դրամատիկ թատրոնի շենքը, որի ճարտարապետական ձևավորումը կատարել է ճարտարապետ Դ. Գ. Չիսլյանը։ Այդուն մոտիկ գտնվում է ռուսական թատրոնի շենքը։

Քաղաքի բնակչության կոմունալ սպասարկման վրա մեծ ուշադրություն են դարձնում տեղական պարտիական և սովետական օրգանները։

Նկատի ունենալով քաղաքի բնակչության աճը և ջրի անբավարար քանակը, Հայաստանի կառավարությունը միջոցներ տրամադրեց այդ պահանջի բավարարման համար։ 1939—1941 թթ. 32 կիլոմետր հեռավորությունից բերվեց Ղազանչիի մաքուր և առողջարար աղբյուրների ջուրը։ Լենինականի բնակչությունը ապահովվեց ջրով։ 1940 թ. կառուցվեց կույուղու ցանցը։

Հին Ալեքսանդրապոլում սալահատակված ու մայթված էին մի քանի փողոցներ, մնացած փողոցները անձրևային օրերին դառնում էին անանցանելի։ Սովետական իշխանության տարիներին՝ 1921—1940 թթ. Քաղաքային Սովետը հատկացնելով մեծ գումարներ, ամեն տարի նորանոր փողոցներ է սալահատակում, տաֆլատապատում ու ծառատնկում։

Այսպիսով, Լենինականի աշխատավորներն իրենց հերոսական աշխատանքով, Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, պատմական կարճ ժամանակամիջոցում բարեկարգեցին թալանված ու ավերված քաղաքը, ստեղծեցին բարեկեցիկ ու կուլտուրական կյանք։

ՍՍՌՄ-ի բազմազգ եղբայրական ժողովուրդների օգնությամբ Լենինականը բարգավաճեց ու դարձավ սոցիալիստական բարեկարգ քաղաք, Հայկական ՍՍՌ արդյունաբերության ու կուլտուրայի երկրորդ խոշոր կենտրոնը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1941—1945)

ՍՍՌՄ-ի ժողովուրդները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ստեղծագործական-շինարարական աշխատանքի մեջ էին, երբ գերմանական ֆաշիստները 1941 թ. հունիսի 22-ին ներխուժեցին մեր Հայրենիքի սահմանները։ Պատերազմ սկսելով մեր երկրի դեմ, գերմանական զավթիչները նպատակ էին դրել դրավել սովետական մարդկանց քրտինքով ողողված հողը, վերականգնել կալվածատերերի ու յուրժուազիայի իշխանությունը, ոչնչացնել սովետական ժողովրդի ազգային կուլտուրան ու պետությունը և այդպիսով սովետական քաղաքացիներին դարձնել գերմանական մագնատների ու լարոնների ստրուկները։ Ամբողջ սովետական ժողովուրդը ոտքի կանգնեց իր սոցիալիստական երկրի ազատությունն ու անկախությունը պաշտպանելու Հայրենիքի գլխին կախված տհավոր վտանգը վերացնելու համար։

Սովետական ժողովրդի բոլոր ուժերն արագորեն մոբիլիզացնելու, մեր Հայրենիքի վրա հարձակված թշնամուն հակահարված տալու նպատակով 1941 թ. հունիսի 30-ին ստեղծվեց Պաշտպանության Պետական Կոմիտե, Ի. Վ. Ստալինի նախագահությամբ։

Պաշտպանության Պետական Կոմիտեի նախագահ Ի. Վ. Ստալինը 1941 թ. հուլիսի 3-ին ռադիոյով սովետական ժողովրդին հատուկ դիմում ուղղեց, որի մեջ վերլուծելով ստեղծված իրադարձությունները, ցույց տվեց, որ մեր երկրի գլխին

դնված է սահմանը։ Պաշտպանության Պետական Կոմիտեն նախագծեց Սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության համար սովետական ժողովրդի ու նրա բանակի անելիքները։

Պետք է անհապաղ վերակառուցել ամբողջ աշխատանքը ռազմական ձևով,— ասված է դիմումի մեջ,— ամեն ինչ ենթարկելով ռազմաճակատի շահերին, թշնամու ջախջախումը կազմակերպելու խնդիրներին։ Պետք է կազմակերպել բազմակողմանի օգնություն Կարմիր Բանակին, ապահովել նրա շարքերի համալրումը և ռազմաճակատն ապահովել անհրաժեշտ ամեն ինչով։

Պաշտպանության Պետական Կոմիտեի նախագահ Ի. Վ. Ստալինի դիմումը իրրև Կոմպարտիայի և Սովետական կառավարության կոչ հնչեց երկրով մեկ, ուղղված մեր երկրի բազմաղգ ժողովուրդներին, Սովետական Զինված Ուժերին։ Այդ առթիվ բազմամարդ միտինգներ գումարվեցին մեր ողջ երկրում, ինչպես նաև Լենինգրադի տեքստիլ և մսի կոմբինատներում, երկաթուղային հանգույցում, քաղաքի բոլոր արտադրական ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում։

Միտինգներում բանվորներն ու բանվորուհիները, ինժեներա-տեխնիկական աշխատողները միահամուռ կերպով պարտավորություններ ստանձնեցին՝ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, խնայել հումքն ու էլեկտրաէներգիան, իսկ երկաթուղայինները պարտավորվեցին անել հնարավոր ամեն ինչ գնացքների անխափան երթևեկության, ռազմական էշելոնների և բեռների ամենաարագ փոխադրման համար։

ՀԿ(բ)Պ Լենինգրադի պարտիական կազմակերպության ակտիվի ժողովը Պաշտպանության Պետական Կոմիտեին ուղղած նամակում գրել է.

«Լենինգրադի բոլշևիկներս զգում ենք այն մեծ պատասխանատվությունը, որը դրված է մեզ վրա, մենք էլ ավելի սեր-

[1] Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 13։

տարեն կհամախմբվենք ՀամԿ(բ)Պ Կենտկոմի, Սովետական կառավարության և Պաշտպանության Պետական Կոմիտեի շուրջը։ Մենք սրբությամբ կկատարենք Կոմպարտիայի Կենտկոմի յուրաքանչյուր առաջադրանքը...

Մենք, Լենինականի բոլշևիկներս մոբիլիզացիայի կենթարկենք ողջ աշխատավորության ուժերն ու եռանդը, ստրատորեն և լիովին կենսագործելու պարտիայի հանձարեղ ցուցումները։ Լենինականի բոլոր աշխատավորների անունից երդվում ենք աշխատել առանց ձեռքները ծալելու, աշխատել դիշեր ու ցերեկ և էլ ավելի մեծ օգնություն ցույց տալ ռազմաճակատին»[1]։

Կատարելով Պաշտպանության Պետական Կոմիտեի որոշումը պարտադիր ռազմական ուսուցման մասին, ինչպես մեր ողջ երկրի, այնպես էլ Լենինականի բազմահազար աշխատավորներ մասն աշխարհազորի, կրծանիչ դիվարտակների, հակաօդային պաշտպանության պարտադիր ռազմական ուսուցման միավորումները, սովորեցին ռազմական դարձը մեր թիկունքը ռազմական համապարտիկ ճամբարի վերածելու համար։ «Հայ ժողովուրդը Սովետական Միության աղաստարդական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդվում, «Պրավդան» գրում է. «...Հայ ժողովուրդը, ինչպես և Սովետական Միության մյուս բոլոր ազատ և իրավահավասար ժողովուրդները, ստանձել խորապես գդացին մեր երկրի վրա կախված մահացու վտանգն այն պատճառով, որ նա իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին, նա գիտի, թե ինչ բան է կոստրածը, ավերը, սովը, բռնությունները։ Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին»[2]։

ՀԿ(բ)Պ Լենինականի քաղկոմի XII պլենումը, հենելով ՀԿ(բ)Պ Կենտկոմի 1941 թ. կայացած IX պլենումի որոշումնե-

[1] ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 16, գ. 339, էջ 27։
[2] «Պրավդա», 26 օգոստոսի, 1941 թ.։

րից, մշակել միջոցառումներ Լենինականի պարտիական, սովետական և այլ կազմակերպությունների աշխատանքները երկրի պաշտպանության շահերին համապատասխան վերակառուցելու համար։

Պատերազմի ամենածանր օրերին Կոմունիստական պարտիայի շարքերը մտան մեր գործին անհունորեն նվիրված մարդիկ, որոնք մեծ պատրաստակամությամբ մարտնչեցին մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար։

Հայրենական պատերազմի տարիներին առաջավոր մարդկանցով աճեց նաև Լենինականի պարտիական կազմակերպությունը։ 1941—1945 թթ. Լենինականում պարտիական կազմակերպության շարքերն ընդունվեցին 2500 հոգի, իսկ Լենինյան Կոմերիտական կազմակերպության շարքերը՝ 4000 հոգի[1]։

Լենինականի պարտիական և կոմերիտական կազմակերպությունների ուժը խնդիր առաջադրեց՝ էլ ավելի ուժեղացնել նրանց մեջ տարվող մասսայական-քաղաքական դաստիարակչական աշխատանքը։ Պարտիական և սովետական ղեկավար աշխատանքներում համարձակորեն առաջ քաշվեցին երիտասարդ կադրեր, ծավալվեց քննադատություն ու ինքնաքննադատություն մեր կադրերին բոլշևիկյան սկզբունքայնության ոգով դաստիարակելու համար։

Այսպիսով, ինչպես Հայաստանի, այնպես էլ Լենինականի աշխատավորները ՀԿ(բ)Պ անմիջական ղեկավարությամբ, առաջնորդվելով Պաշտպանության Պետական Կոմիտեի որոշումներով, վերակառուցեցին պարտիական, սովետական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների աշխատանքները երկրի պաշտպանության շահերին համապատասխան, «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» կոչը դարձավ Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև Լենինականի աշխատավորության աշխատանքի մարտական ծրագիրը։

1 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ։ Ֆ. 46, գ. 328, էջ 67։

Սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը դեռևս բաղաքացիական պատերազմի տարիներին ասել է. «...քանի որ գործը հասել է պատերազմի, ապա ամեն ինչ պետք է ենթարկել պատերազմի շահերին, երկրի ամբողջ ներքին կյանքը պետք է ենթարկել պատերազմին, այդ առթիվ փոքրագույն տատանումն անգամ անթույլատրելի է»[1]։

Սովետական ժողովուրդը կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումը, Հայրենական պատերազմի տարիներին մեր երկրի ամբողջ կյանքը վերակառուցեց ռազմական ձևով և այն ենթարկեց մեր Սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության շահերին։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ՍՍՌՄ բանվոր դասակարգը էլ ավելի ամրացրեց իր առաջավոր դերը սոցիալիստական հասարակարգում, իր կրծքով պաշտպանելով մեր Հայրենիքը, կատարեց աշխատանքային չտեսնված սխրագործություններ։ Հայրենական պատերազմում հանդես եկավ բանվոր դասակարգի բարոյա-քաղաքական միասնությունը, անձնազոհությունը և նրա երկաթյա կամքը, որը հանդիսացավ Սովետական Միության ձեռք բերած համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակների կենսատու ուժերից մեկը։

Երկրի կոլտնտեսային գյուղացիությունը և գյուղատնտեսության ֆրոնտի մյուս աշխատողները Հայրենիքի հանդեպ իրենց պարտքի լիակատար գիտակցությամբ ակտիվորեն օգնեցին Սովետական բանակին, որն ամբողջ պատերազմի ընթացքում պարենամթերքի պակասություն չզգաց։ Կոլտնտեսային գյուղացիությունը բնակչությանը և բանակին մատակարարեց պարենամթերք, իսկ արդյունաբերությանը՝ հումք։ Դրանով դրսևորվեց կոլտնտեսային կարգերի ուժն ու կենսունակությունը, կոլտնտեսային գյուղացիության հայրենասիրությունը։

Սովետական հասարակարգում ծնված, Կոմունիստական պարտիայի կողմից դաստիարակված ժողովրդական ինտելի-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 150։



Մի խումբ առաջավոր էլեկտրաքարշիներ

դենցիան Հայրենական Մեծ պատերազմի տարիներին խոշոր ներդրում կատարեց թշնամու ջախջախման գործում։

Պատերազմի փորձության տարիներին սովետական ինտելիգենցիան ֆաբրիկաներում, գործարաններում, տրանսպորտում, գյուղատնտեսության մեջ, ուսումնական և գիտության հաստատություններում աշխատում էր էլ ավելի լարված։ Սովետական ինտելիգենցիան խոշոր ներդրում կատարեց ռազմական ռեսուրսների վրա փոխադրելու, ռազմական գործարանները տեղադրելու, պաշտպանական արդյունաբերության նոր օջախներ ստեղծելու գործում։ Նա բանվոր դասակարգի հետ Սովետական Զինված Ուժերն ապահովեց առաջավոր տեխնիկայով։ ՍՍՌՄ բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան, որոնք երկրի խաղաղ շինարարության տարիներին ստեղծել էին զարգացած սոցիալիստական հզոր արդյունաբերություն և գյուղատնտեսություն, դրանք ամրոզջովին ծառայեցրին մեր երկրի պաշտպանության շահերին։

Վ. Ի. Լենինը միշտ բարձր է գնահատել պատերազմում թիկունքի դերն ու նշանակությունը։ «Ինչպես հարկն է պատերազմ մղելու համար,— նշում է Վ. Ի. Լենինը,— անհրաժեշտ է կազմակերպված, ամուր թիկունք։ Ամենալավ բանակը, ռեսուրսների գործին ամենանվիրված մարդկանց անմիջապես կոչնչացնի հակառակորդը, եթե նրանք բավականաչափ զինված, պարենավորված, վարժեցված չլինեն»[1]։

Հայաստանի բոլշևիկները, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի այդ ցուցումով և Պաշտպանության Պետական Կոմիտեի դիրեկտիվներով, վերակառուցեցին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության աշխատանքները։ Ռեսպուբլիկայի աշխատավորները, պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ, սկսեցին աշխատել նոր ձևով, ռազմական ձևով։ Հաղթահարելով պատերազմի ստեղծած դժվարությունները, հերոսական ջանքերով կատարեցին ռազմաճակատի բոլոր պատվերները։ ՀԿ(բ)Պ XIV համագումարը նշեց, որ Հայաստա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 72—73։

նի աշխատավորները՝ բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան թիկունքում մեծ հայրենասիրություն ու եռանդ հանդես բերին աշխատանքի մեջ։ Փոխարինելով ռազմաճակատ մեկնածներին, բանվորներն ու բանվորուհիները հերոսաբար աշխատում էին ձեռնարկություններում, դինամիթերը ու հանդերձանք արտադրելով ռազմաճակատի համար։

Ռազմաճակատին և մեր երկրին շատ արտադրանք տալու գործում Հայաստանի քիմիական, մետաղի, տեքստիլ, թեթև, սննդի և այլ արդյունաբերական ճյուղերի բազմաթիվ ձեռնարկություններ ընթանում էին առաջավորների շարքերում։ Արդյունաբերության առանձին ձեռնարկություններ ամբողջապես անցան ականների, ականանետների, ատրճանակների, նռնակների և այլ սպառազինության մասերի պատրաստման, ռազմական հանդերձանքի թողարկմանը։ Ռեսպուբլիկայում ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր։ 1941—1945 թթ. ընթացքում ռեսպուբլիկայում ամենաարագ տեմպերով կառուցվեցին և շահագործման հանձնվեցին բազմաթիվ գործարաններ, ֆաբրիկաներ, որոնք հագեցված էին ժամանակակից առաջավոր տեխնիկայով։

Անվերջ հոսանքով ռազմաճակատ է գնում սպառազինություն, ասում էր Ի. Վ. Ստալինը,— ռազմամթերք, պարենամթերք, հանդերձանք։ Ուրալը և Կուզբասը, Մոսկվան ու Պովոլժյեն, Լենինգրադը և Բաքուն, Ղազախստանը և Ուզբեկստանը, Վրաստանը և Հայաստանը, մեր բոլոր ռեսպուբլիկաները և մարզերը դարձել են Կարմիր Բանակի հզոր զինանոցները։

1941 թ. նոյեմբերին կայացած ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի պլենումը պահանջեց պարտիական, սովետական, արհմիութենական և տնտեսական կազմակերպություններից՝ ուղեցույց ունենալով Պաշտպանության Պետական Կոմիտեի ցուցումները, վերակառուցել ողջ աշխատանքները ռեսպուբլիկայում և դրանք ամբողջությամբ իրագործել ռազմաճակատին ցույց տրվող օգնության ուժեղացման գործին։ Լենինականի աշխատավորները, ՀԿ(բ)Պ ղեկավարությամբ, ձեռնամուխ եղան այդ ցուցումների կենսագործմանը։ Հայաստանի աշխա-

տավորների հետ միասին Լենինգրադի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի բանվորներն ու բանվորուհիները, ինժեներա-տեխնիկական աշխատողները վերակառուցեցին իրենց աշխատանքները և սկսեցին արտադրել Սովետական Բանակի մարտիկների հանդերձանքի համար հատուկ տեսակի կտորեղեն։ Պաշտպանական նպատակի համար պատվերներ կատարելու ձեռնամուխ եղան նաև մանարան և գուլպա-տրիկոտաժ ֆաբրիկայի բանվորներն ու բանվորուհիները։

Տեքստիլ կոմբինատի բանվոր-ծառայողների հերոսական աշխատանքի շնորհիվ 1943 թ. շահագործման հանձնվեց ներկման նորակառույց ֆաբրիկան, որը հարյուր հազարավոր մետր դունավոր գործվածք տվեց Կարմիր Բանակին։ Միաժամանակ կոմբինատում շահագործման հանձնվեցին նաև հատուկ տեխնիկական գործվածքի՝ բելդինգի և կորդի ցեխերը, վերջինս մեր Միության ավիադաշտերի գործարաններին մատակարարում էր կորդ։ Սոի պահածոների կոմբինատի բանվոր-ծառայողները, պատերազմական կազմակերպության ղեկավարությամբ, երկրին ու բանակին մատակարարեցին հազարավոր տոննաներով պահածո և սննդամթերքի այլ տեսակներ։

Մեխանիկական գործարանի բանվորները պատրաստում էին վենների մի շարք մասեր, իսկ դյուդիտանտության համար՝ տրակտորների և զանազան այլ մեքենաների մասեր, միաժամանակ նրանք կոմունիստների ղեկավարությամբ լրացուցիչ պարտավորություն ստանձնեցին ապահովելու ռեսպուբլիկայի մի շարք խոշոր ձեռնարկությունների ընթացիկ պատվերների կատարումը։

Չկալովի անվան կարի ֆաբրիկան 1941 թ. հուլիս ամսից ամբողջապես անցավ ռազմական հանդերձանքի արտադրության, ապահովելով բանակի կարիքների համար 9 տեսակի արտադրանքի թողարկումը։ 1942 թ. Լենինգրադի աշխատավորները շահագործման հանձնեցին հրակայուն աղյուսի գործարանը, որը խոշոր նշանակություն ունեցավ արդյունաբերական, մասնավորապես երկաթուղային տրանսպորտի օբյեկտների համար։ Այդ գործարանը հրակայուն աղյուս էր

մատակարարում ոչ միայն մեր, այլև եղբայրական ռեսպուբ-
լիկաներին։ Հատուկ պատվերներ էին կատարում նաև կոշիկի,
հացի, փայտամշակման, կարի, ապակու և մյուս գործարան-
ներն ու ֆաբրիկաները, նորակառույց էլեկտրաղացը, տե-
ղական արդյունաբերության և արտադրական կոոպերացիայի
ձեռնարկությունները։

Անդրերկաթուղու Լենինականի հանգույցի բանվոր-ծառա-
յողները, կենտգործկոմի ՀԿ(բ)Պ Կենտկոմի IX պլենումի և
1941 թ. նոյեմբերին կայացած Լենինականի պարտիական
ակտիվի ժողովի ընդունած որոշումները, ամենաարագ կեր-
պով վերակառուցեցին հանգույցի բոլոր օբյեկտների շոգե-
քարշային և վագոնային դեպոների, ուղեմասի, կայարանի և
կապի բաժանմունքի աշխատանքները։ Նրանք պատվով կա-
տարեցին ռազմական բեռների, զինվորական էշելոնների փո-
խադրումները։ Հայրենական պատերազմի տարիներին Լենի-
նականում շահագործման հանձնվեցին նոր ձեռնարկություն-
ներ։ Միաժամանակ ընդարձակելով եղած գործարանների ար-
տադրական կարողությունը, այդ ձեռնարկություններում կազ-
մակերպեցին նոր ագրեգատներ, նոր ցեխեր։ Այդ ժամանակա-
շրջանում կարևոր նշանակություն ունեցավ տեղական ար-
դյունաբերության կազմակերպումն ու զարգացումը, որը բազ-
մատեսակ ասորտիմենտով լայն սպառման առարկաներ էր
արտադրում։

Այսպիսով, Լենինականի արդյունաբերական ձեռնարկու-
թյունները խաղաղ ժամանակաշրջանի արտադրանքի տեսակ-
ները փոխարինեցին ռազմական արտադրանքով։ Գործարան-
ներից ու ֆաբրիկաներից ռազմաճակատ մեկնածների փո-
խարինելու եկան կանայք, երիտասարդներ և պատանիներ,
որոնք հաջողությամբ աշխատում էին արտադրության մեջ
կատարում ու գերակատարում պլանները։

Հայրենիքի պաշտպանության գործում, հատկապես ան-
գնահատելի ծառայություն մատուցեցին սովետական կանայք,
որոնք, արիաբար կրելով պատերազմի ժամանակվա բոլոր
դժվարությունները, անձնվեր աշխատանքով ու մարտական

սխրագործություններով ոգեշնչեցին Սովետական Բանակի մարտիկներին ու հրամանատարներին։

1941 թ. հունիսի 26-ին Լենինականի մի խումբ հայրենասեր կանայք (տնային տնտեսուհիներ Բ. Պետրոսյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Վարդանյանը և ուրիշներ) քաղաքի կանանց ուղղած կոչում գրում են.

«Ամբողջ ժողովուրդը ոտքի է հել մեր սիրելի Հայրենիքի պաշտպանության համար... Մենք սովետական կանայքս, պատերազմի այս ահավոր օրերին, պետք է մեկ անգամ ևս ցույց տանք հայրենասիրության վառ օրինակներ, ցույց տանք, թե ինչպիսի վոլեմ ու ազնիվ գործի է ընդունակ սովետական կինը... Մեզ վրա պատմական մեծ պարտք է դրվում՝ փոխարինել բանակի մեկնած մեր ամուսիններին, եղբայրներին ու զավակներին, պետք է կանգնենք մեքենաների ու դաղդահների առաջ, որ ոչ մի բոպն չկանգնեն նրանց անիվներն ու պտուտակները... Ամուսիններ, մայրեր ու քույրեր, հետևեցեք մեր օրինակին, դնացեք դեպի գործարան, դեպի հիմնարկ-ձեռնարկություններ, դեպի աշխատանք»[1]։

Տնային տնտեսուհիներ Վ. Գարիբյանը, Ս. Մանուկյանը, Շ. Վարդանյանը փոխարինեցին իրենց ամուսիններին, որոնք ռազմաճակատ էին մեկնել գործվածքային ֆաբրիկայից, իսկ գույպա-տրիկոտաժ ֆաբրիկայում Վ. Ալեքսանյանը փոխարինեց հորը, Մ. Մանուկյանը և Շ. Գավրիլովան իրենց եղբայրներին։ 16-ամյա Հ. Հունանյանը փոխարինեց կարի գործարանից ռազմաճակատ մեկնած արտադրության առաջավոր իր երկու եղբայրներին։ Կոշիկի գործարանում Ժ. Սարոյանը ստանձնեց ամուսնու անմիջական աշխատանքը։ Մեխանիկական գործարանում աշխատանքի անցան Իրինա Ռիդկովան և Պաշա Կոռուպովան, որոնք հետագայում մասնագիտանալով, գարձան անվանի վարպետագործներ։ Տնային տնտեսուհիները տասնյակներով, հարյուրներով մտան արտադրության մեջ։ Տեքստիլ կոմբինատի նախկին բանվորուհիներ՝ Շ. Երիցյանը,

[1] «Բանվոր», որդան ՀԿ(բ)Պ Լենինականի Քաղկոմի և աշխատավորների դեպուտատների Լենինականի Քաղաքային Սովետի, 1941 թ. հունիսի 26, № 149։

Ն. Դիմիտրենկոն, Վ. Հարությունյանը սիրով վերադառնալով գործարան, հատուկ կոչով դիմեցին կոմբինատի նախկին բանվորուհիներին և տնտեսուհիներին, որպեսզի նրանք հետևեն իրենց օրինակին, վերադառնան գործարան, մեր Հայրենիքի պաշտպանության գործին ակտիվ մասնակցություն ունենալու համար։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության 1942 թ. փետրվարի 13-ի հրամանագրի կենսագործման կապակցությամբ, աշխատանքի 2300 հոգի աշխատանքի տեղավորվեցին տեքստիլ, մսի կոմբինատներում և երկաթուղային հանգույցում, բացի այդ 1941—1942 թթ. քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում և հիմնարկներում աշխատանքի անցան 6153 կանայք[1]։

Բանուժի պակասը զգալի չափով լրացրին արհեստագործական ուսումնարանի երիտասարդ կադրերը, որոնք արագ կերպով յուրացրին իրենց մասնագիտությունը և խառնվեցին մի քանի արտադրական նարմա կատարող առաջավորների շարքերը։

Արդյունաբերության մեջ աշխատող կադրերի պակասը լրացնելը, նրանց որակավորումը հանդիսացավ պարտիական, կոմերիտական, արհմիութենական կազմակերպությունների և տնտեսավարների հիմնական խնդիրը։ Մեր ռեսպուբլիկայի ֆարբիկաներում ու գործարաններում ամփոփվող առաջավոր տեխնիկային տիրապետելու, գործարանների արտադրական կարողությունն էլ ավելի բազմապատկելու և ռազմաճակատի պատվիրանները ամենաարագ կերպով կատարելու նպատակով, բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները մեծ ջանասիրությամբ ուսումնասիրում էին այդ տեխնիկան։ Լենինականի արտադրական ձեռնարկություններում կազմակերպված տեխուսուցման խմբակները, առաջավորների դպրոցները, կարճատև դասընթացները ավարտեցին հարյուրավոր փականագործներ, խառատներ, ջոլհակներ, մանողներ, շոգեքարշային մեքենավարներ և օդնականներ։ Շոգեքարշային դեպոյում Մարիա Արուլովան, իր ջանա-

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, գ. 338, էջ 31։

սիրությամբ պարզ աշխատանքից անցնելով բարդ աշխատանքի, տիրապետեց շողեքարշի տեխնիկային, դարձավ անվանի մեքենավար։ 1941 թ. նոյեմբերի 24-ին Մ. Աբուլովան Լենինականից Սանահին ուղարկվեց առաջին փորձնական գնացքը։

Պատերազմի առաջին օրերից բազմաթիվ բանվորների հետ մեխանիկական գործարանում աշխատանքի ընդունվեց Բ. Մարտիրոսյանը. նա իր նվիրված աշխատանքի շնորհիվ նշանակվեց զսլվանապատման ցեխի բրիգադիր, մեկ տարի չանցած, տիրապետելով ցեխի ամենաբարդ աշխատանքներին, դարձավ նույն ցեխի վարպետ։

Քաղաքի մի խումբ կոմերիտուհիներ հատուկ դիմումով կոչ արին բոլոր կոմերիտուհիներին, կանանց ու աղջիկներին արտադրության մեջ ընդգրկվելու և որակավորվելու նպատակով։ «Անդրերկաթուղու 6-րդ բաժանմունքի Լենինականի կայարանի նյութեղենի պահեստի և դրասենյակի (ՆԽՉ 4-ի) մի խումբ կոմերիտուհիներս, որոշեցինք աշխատանքից հետո դնալ գործարան, ձեռնարկություն՝ սովորել տղամարդկանց պրոֆեսիաներ, տիրապետել կայսրանի հերթապահի, փականագործի, խառատի, ջուլհակի, դիսպետչերի, կաթսայագործի և այլ մասնագիտություններ... Լենինական քաղաքի կանայք, աղջիկներ, հետևեցեք մեր օրինակին, տիրապետեցեք տղամարդկանց աշխատանքի պրոֆեսիաներին, սա կլինի մեր պարտքի դիտակցումը Հայրենիքի հանդեպ, սա կլինի մեր լավագույն օգնությունը ռազմաճակատին»[1]։

Այս դիմումը լայն արձագանք գտավ արտադրական և հիմնարկային կազմակերպություններում։ ՀԿԿՄ Լենինականի քաղաքային կոմիտեի բյուրոյի որոշմամբ հայրենասիրական այս կոչը քննարկվեց կոմերիտական և արտամիութենական երիտասարդության միացյալ ժողովներում։ Ձևակերպված կոնկրետ միջոցառումների շնորհիվ դրասենյակային շատ աշխատողներ դնացին արտադրություն, իսկ արտադրության մեջ եղած և նոր աշխատանքի ընդունված հայրենասեր

[1] «Բանվոր», 1942 թ., փետրվարի 10, № 18։

կանայք, երիտասարդներ սովորեցին բարդ պրոֆեսիաներ, ինչպես, օրինակ, կոմերիտուհի Ռայիսա Դուդկինան դարձավ շոգեքարշային մեքենավար, նա միաժամանակ քննություն տվեց և ստացավ 4-րդ կարգի փականագործի կոչում, որպեսզի ինքը կատարի իր շոգեքարշի ընթացիկ նորոգումները։

Գրասենյակային աշխատողներ՝ Վ. Կիրակոսյանը, Պ. Սարգսյանը, դիպլոմում սովորեցին փականագործի մասնագիտություն, իսկ Շ. Կարապետյանը, Լ. Սարտիրոսյանը սովորեցին ավտոմատավարի պրոֆեսիան։ Գրասենյակի հաշվային աշխատող կոմերիտուհի Տալիսա Ստիլլինան դարձավ շոգեքարշային մեքենավարի օգնական։ Կարի գործարանի բանվորուհիներ Ա. Մալուշյանը և Ա. Մնացականյանը սովորելով նոր մասնագիտություն, տեղափոխվեցին նույն գործարանի մեխանիկական ցեխը իբրև մեխանիկներ։

1941—1945 թթ. ընթացքում Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններում անհատական կարգով և կազմակերպված տեխնիկումի խմբակներում, կարճատև դասընթացներում, ստախանովյան դպրոցներում որակավորվեցին 6535 բանվորներ[1]։

Այսպիսով, Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ լրացվեց պատերազմի պատճառով առաջացած բանվորական ուժի պակասը։ Բանվոր-ծառայողների ընդհանուր թվի համեմատությամբ զգալիորեն աճեց կանանց տեսակարար կշիռը, ռեսպուբլիկայում կազմելով 54,4%, իսկ Լենինականում՝ 64,7%։ Մեր երկրի աշխատավորների կրթական-կուլտուրական բարձր մակարդակը նպաստեց արդյունաբերության մեջ և տրանսպորտում բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների ոչդադ որակավորվելուն, նրանց գիտելիքները կատարելագործելուն, աշխատանքի արտադրողականության և ձեռնարկության արտադրական կարողությունը բարձրացնելուն։

Հայրենական պատերազմի տարիներին էլ ավելի վառ կերպով ապտահայտվեց սոցմրցության հզոր ուժը։ Սոցմրցու-

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, գ. 398, էջ 53։

Վիրավորված տեխատավորների պատվիրակությունը էլեկտրատեսությունում

մը և առաջավորների շարժումը ստացան բազմաթիվ նոր ձևեր, դարձան էլ ավելի մասսայական, իսկական համաժողովրդական հզոր շարժում, որի շնորհիվ անընդհատ աճում էր սոցիալիստական էկոնոմիկայի հզորությունը, ավելի ու ավելի լայն կերպով ծավալվում նրա ուղեղները։

1942 թ. մայիսին երկրով մեկ սկսվեց Համամիութենական սոցիալիստական մրցությունը, որի առաջին նախաձեռնողները հանդիսացան մետալուրգիայի, ինքնաթիռաշինության, տանկաշինության գործարանների բանվորները, որոնց արձագանքեցին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի աշխատողները։ Սոցիալիստական մրցության մեջ ընդգրկվեցին Մոսկվայի ու Լենինգրադի, Ուզբեկստանի ու Տաջիկստանի, Հայաստանի ու Վրաստանի, մեր երկրի բոլոր ռեսպուբլիկաների ու մարզերի աշխատավորները։

Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ մտան ինչպես Հայաստանի բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները, այնպես էլ Լենինական քաղաքի արտադրական բոլոր ձեռնարկությունների և երկաթուղային հանգույցի կոլեկտիվները, որոնք ձեռք բերին խոշոր հաջողություններ՝ արտադրական սարքավորման ռացիոնալ օգտագործման, հումքի, վառելիքի տնտեսման, ինքնարժեքի իջեցման, արտադրանքի որակի և ձեռնարկությունների արտադրական կարողության բարձրացման գործում։ Արհմիութենական, կոմսոմոլական կազմակերպությունները, պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ ծավալված ամենօրյա մասսայական աշխատանքների շնորհիվ, երկաթուղային հանգույցում սոցիալիստական մրցության մեջ ընդգրկեցին բանվոր-ծառայողների 95%, կոշիկի գործարանում՝ 93,5%, կոմբինատի գործվածքային և մանարան ֆաբրիկաներում՝ 94,0%, մսի պահածոների կոմբինատում՝ 98%, մանարան ֆաբրիկայում՝ 90%, մեխանիկական գործարանում՝ 91%։ Քաղաքի արտադրական բոլոր ձեռնարկությունների բանվորների 90%-ն[1]

---

[1] ՍՄԿԳ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, գ. 338, էջ 50։

ընդգրկվեց սոցիալիստական մրցության մեջ։ Պարտիայի և Լենինյան Կոմերիամիության անդամները ոչ միայն ամբողջապես ընդգրկված էին սոցիալիստական մրցության մեջ, այլև ընթանում էին ավանդաբար, հանդիսանալով այդ շարժման առաջատար ուժը։

Արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղային տրանսպորտում լայն ծավալ ստացավ ըստ պրոֆեսիաների ծավալված բրիգադային մրցությունը, բազմաստանոցահայինների, կոմերիտական ճակատային բրիգադների, պրոֆեսիաների համատեղման, երկու-երեք հարյուրականների, հինգհարյուրականների և հազարականների շարժումը, որի շնորհիվ առաջավոր բանվորների, բրիգադների, ցեխերի բարձրը արտադրողականությունից անցան ամբողջ ձեռնարկության բարձր արտադրողականության, այսինքն՝ ռազմաճակատի պատվերների էլ ավելի արագ կատարմանը։ Ռազմաճակատից մարտիկներն ու հրամանատարները արձագանքելով սոցմրցման մեջ ընդգրկված բանվորներին, խոստանում էին սրբությամբ պաշտպանել իրենց հանձնված բնագիծը և կատարել հրամանատարության կողմից տրված բոլոր մարտական խնդիրները։

Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային հանգույցի բազմամարդ բանվորական կոլեկտիվների աշխատանքները դյուրավորում էին ֆաբրիկա-գործարանային պարտիական կազմակերպությունները, որոնց ուշադրության կենտրոնում էին աշխատանքի արտադրողականության և արտադրանքի որակի բարձրացման հարցերը։ Կոմունիստները, խորանալով արտադրության յուրաքանչյուր մանրուքի մեջ, մոբիլիզացնում էին կոլեկտիվի ուժերը ռազմական պատվերների արագ կատարման համար։ Պարտիական կազմակերպությունները մասսայականացնում էին առաջավորների փորձը, օգնում նաև մնացողներին, բարձրացնում էին բանվորների մեջ պատասխանատվության զգացումը, մեկնարանում էին Հայրենական պատերազմում մեր ունեցած վիհ նպատակները, մեր հաղթանակի աղբյուրները։ Կոմունիստ-

ները հավատ էին ներշնչում բանվոր-ծառայողներին՝ աշխատանքային սխրագործություններ կատարելու համար։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին երկաթուղային տրանսպորտի աշխատողները պատվով կատարեցին իրենց պարտքը ՍՍՌՄ Զինված Ուժերի և մեր պանծալի Հայրենիքի հանդեպ։ Երկաթուղայինները 1941—1945 թթ. արագացրին գնացքների երթևեկությունը, կատարեցին և գերակատարեցին բեռնման և բեռնաթափման նորմաները, ավելացրին վագոնների շրջապտույտը, կրճատեցին շոգեքարշերի և վագոնների վերանորոգման ժամկետները։ Երկաթուղայինները, ծավալելով ստեղծագործական նախաձեռնություն, հանդես բերին աշխատանքային սխրագործության մինչև այդ չտեսնված օրինակներ։

Երկաթուղայինները ռազմաճակատ էին տանում զինվորական էշելոնները, ռազմական բեռները, ամենաարագ կերպով դեպի թիկունք բուժման էին բերում վիրավոր զինվորներին, զորքերանոցներին ու ֆաբրիկաներին էին հասցնում հումք նյութը, պետական բեռները և այդպիսով ռազմաճակատի և թիկունքի մեջ ստեղծում սերտ կապ։

ՍՍՌՄ երկաթուղայինների աշխատանքի մեջ իրենց լուման են մտցրել Անդրբայկալյան երկաթուղու Լենինգրադի հանգույցի բանվորները ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, որոնք պատերազմի առաջին իսկ օրերից կատարեցին ռազմական պատվերներ։ Նրանք ոչ միայն ուղեմասին սպասարկում էին շոգեքարշերով, վագոններով, այլև կատարում էին շոգեքարշերի և վագոնների միջին նորոգում, ապահովում զինվորական էշելոնների, ռազմական ու պետական բեռների փոխադրումը։

1942 թ. սկզբներին ամբողջ երկրով մեկ տարածվեց Ուրալյան երկաթուղու Զելյաբինսկի դեպոյի առաջավոր մեքենավարներ Ագաֆանովի և Ժդանովի կոչը՝ Պաշտպանության Պետական Կոմիտեի անվան շոգեքարշերի շարասյուն կազմելու մասին։ Այդ հայրենասիրական նախաձեռնությանը արձագանքեցին

ձագանքեցին ինչպես ողջ երկրի, այնպես էլ Լենինականի շոգեքարշային դեպոյի մեքենավարներ՝ Գ. Աբաջյանը, Ս. Վազիգեղոյյանը, Ա. Խաչատրյանը, Ի. Սարուխանյանը, Խ. Սերոբյանը և ուրիշներ։ Նրանք գերակատարեցին իրենց ստանձնած պարտավորությունները, բարձրացրին շոգեքարշերի վազքի տեխնիկական արագությունը, կրճատեցին շոգեքարշերի կարևոր մասերի նորոգման ժամկետները, կատարեցին վառելանյութի խնայողություն, իսկ լվացումն ու նորոգումը կատարեցին իրենց ուժերով, բազմիցս շահելով Անդրերկաթուղու փոխանցիկ կարմիր դրոշը։ Լենինականի երկաթուղային ուղեմասի կոլեկտիվը (ուղեմասի պետ Ա. Հովհաննիսյան), ուղեմասը գերազանց վիճակում պահելու շնորհիվ, ապահովեց գնացքների անխափան երթևեկությունը։ Օգտագործելով ներքին միջոցները, տեղում պատրաստեցին բազմաթիվ մասեր։ Հանգույցի բոլոր օբյեկտներում լայնորեն արմատավորվեցին առաջավոր մեթոդները։

Լենինականի երկաթուղային հանգույցում ռեկորդային հաջողությունների հասան առաջավոր մեքենավարներ Գ. Աբաջյանը և Ա. Խաչատրյանը, նրանք դեռևս մեր երկրի խաղաղ շինարարության տարիներին առաջինը նախաձեռնեցին շոգեքարշերը առանց վերանորոգման հանձնելու, կատարել կես միլիոն կիլոմետր վազք։ 1942 թ. կիսերին, երբ անվանի մեքենավար, ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ Գ. Աբաջյանի շոգեքարշը կես միլիոն կիլոմետր վազք կատարեց, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը նրան պարգևատրեց Լենինի շքանշանով։ Այն ժամանակվա Հաղորդակցության ճանապարհների կոմիսարը Գ. Աբաջյանին գրում է. «Գոհունակությամբ ծանոթացա Ձեր բրիգադի աշխատանքի արդյունքների հետ։ Շոգեքարշը լավ պահելու շնորհիվ Ձեր բրիգադն կատարել է իր սոցիալիստական պարտավորությունները, լոկոմոտիվի կես միլիոն կիլոմետր վազքն ավարտել և առանց փականագործական նորոգման հասել է շոգեքարշի ճախարակման, միջին ու հիմնական նորոգումների քանակի կրճատման։ Ակնիվ ու բարեխիղճ աշխատանքի համար շնորհակալություն եմ հայտնում Ձեզ և ցան-

կանում Եմ հետագա հաջողություններ լոկոմոտիվի բարձր վազքի համար մղվող պայքարում»[1]։

Սրկոթուղայիններին համամիութենական սոցիալիստական մրցության մեջ խոշոր հաջողությունների հասավ Լենինականի շոգեքարշային դեպոյի անվանի մեքենավար Ա. Խաչատրյանը։ Նա իր շոգեքարշը, առանց վերանորոգելու, կատարեց կես միլիոն կիլոմետր վազք, 3,3 կիլոմետրով բարձրացրեց շոգեքարշի տեխնիկական արագությունը, հինգ ժամով կրճատեց մեքենայի միջին նորոգման ժամկետը, տասնապատիկ անգամ երկարացրեց շոգեքարշի յուրաքանչյուր մասի աշխատանքի տևողականությունը։ Նա պետական բոլոր բեռները և ռազմական փոխադրումները տեղ էր հասցնում սահմանված ժամկետից շատ։

Սովետական կառավարությունը բարձր գնահատելով անվանի մեքենավար Ա. Խաչատրյանի ծառայությունը, 1943 թ. նոյեմբերի 5-ին նրան շնորհեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում։

«Գնացքների արագ և անվթար երթևեկության վարպետ, Լենինականի դեպոյի անվանի մեքենավար Ա. Խաչատրյանը պատերազմական ժամանակի իսկական մեքենավար է,— գրում էր «Большевистская путевка» թերթը, նա եղանակի անբարենպաստ պայմաններում տասնյակ ծանրաբաշ գնացքներ է փոխադրել ռազմաճակատ։ Նրա № 5290 շոգեքարշը, առանց փականագործական վերանորոգման, կատարել է 550 հազար կիլոմետր վազք»[2]։

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Ա. Խաչատրյանից հետ չէր մնում նաև նրա հերթափոխ մեքենավար Գ. Զազարյանը, որն իր լավագույն աշխատանքի համար պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Անվանի մեքենավարներ՝ Գ. Արաքչյանը և Ա. Խաչատրյանը շոգեքարշային դեպոյում կազմակերպեցին առանց վերանորոգման աշխատող մեքենավարների շոգեքար-

---

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ՀՊՊ կարինետի արխիվ, ֆ. 16, գ. 12, էջ 27։

[2] „Большевистская путевка" от 25 ноября, 1943 г.

շերի շարասյուն. նրա մեջ ընդգրկեցին գեղոյի բաղմաթիվ առաջավոր մեքենավարների, որոնք հանդես բերին աշխատանքային սխրագործություններ՝ Սովետական Զինված Ուժերի միավորումներին լավագույն կերպով սպասարկելու համար։

Լենինականի շոգեքարշային դեպոյի բանվորները պատերազմի դժվարին պայմաններում փայլուն հաջողություններով փակեցին 1941—1945 թթ. համախառն արտադրանքի տարեկան պլանները։ 1941 թ. պլանը կատարեցին 113,2%, 1942 թ. 111,2%, 1943 թ. 110,6%, 1944 թ. 118,5%, իսկ 1945 թ. 116,9%[1]։

Վագոնային դեպոյի կոլեկտիվը 1941 թ. 1.915 հազար ռուբլու արտադրանքի փոխարեն 1944 թ. երկրին տվեց 3.438 հազար ռուբլու, իսկ 1945 թ. 4.237 հազար ռուբլու արտադրանք, այսինքն, 1945 թ. 1941 թ. համեմատությամբ, վագոնային դեպոն տվեց կրկնակի ավելի արտադրանք։ Հայրենական պատերազմի տարիներին Լենինականի երկաթուղային ուղեմասի բանվոր-ծառայողները միշտ դերակատարել են իրենց տարեկան պլանները, լավ են նախապատրաստվել ձմռանը, դիմը պահել են դեղաղանց վիճակում, ապահովել են գնացքների անխափան երթևեկությունը, որի համար Անդրերկաթուղում պատերազմական երեք տարիներին բռնել են առաջին տեղը, իսկ մեկ տարի միայն երկրորդ տեղը։

Այդ աշխատանքներում առավել աչքի ընկան գծի վարպետներ Գ. Գալստյանը, Ա. Պասպոյանը, Գ. Սարգսյանը, Գ. Խոդոյանը և փականագործ Խ. Անիշյանը։ Սրանք երկարամյա աշխատանքի և իրենց պլանները վերազանց կատարելու համար պարգևատրվեցին Լենինի շքանշանով։

Լենինականի երկաթուղային կայարանի բանվորները, մտնելով համամիութենական սոցիալիստական մրցության մեջ և օգտագործելով առաջավոր երկաթուղայիններ Կրասնովի և Կոժուխարի մեթոդները, հասան փայլուն հաջողությունների ապրանքատար ու մարդատար գնացքների լվացուցակի կա-

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի ՀՊՊ կաբինետի արխիվ, ֆ. 16, գ. 10, էջ 23։

տարման, վագոնների արագ բեռնաթափման, բարձման և դնացքներ կազմելու գործում։

Լենինականի երկաթուղային կայարանի կոլեկտիվը բազմիցս արժանացել է Անդրերկաթուղու վարչության խրախուսանքին և ստացել փոխանցիկ կարմիր դրոշ, իսկ Հաղորդակցության ճանապարհների մինիստրությունը կայարանի կոլեկտիվին պարգևատրել է 25 հազար ռուբլի դրամարով՝ Միության երկաթուղային կայարաններից մեջ առաջնություն գրավելու համար։ Լենինականի քաղաքային պարտիական VIII կոնֆերանսում (1945 թ. փետրվարի 17) Քաղաքային Կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ ասված է «...Լենինականի երկաթուղային հանգույցի, շոգեքարշային, վագոնային դեպոների, կայարանի և ուղեմասի բանվորներն ու ինժեներ-տեխնիկական աշխատողները, ցույց տալով չնայած հայրենասիրություն, պատվով կատարեցին իրենց պարտքը մեր Հայրենիքի և Կարմիր Բանակի հանդեպ։ Երկաթուղայիններն ստանց ուշացումների զորային միավորումները և ռազմական բեռները հասցրին ռազմաճակատ։ Սովետական կառավարությունը և բոլշևիկների պարտիան, բարձր դնահատելով երկաթուղայիններ ծառայությունը, 18 հոգու պարգևատրեցին կառավարական շքանշաններով, 1000 հոգու՝ «Աշխատանքային արիության համար» մեդալով և մեկ հոգու՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում շնորհելով»[1]։

* * *

Ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում համամիութենական սոցիալիստական մրցության մեջ ձեռք բերված հաջողությունները էլ ավելի ամրապնդեցին ՍՍՌՄ Զինված Ուժերի ռազմանյութական բազան, որի մեջ իրենց

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40, գ. 338, էջ 34։

գործուն մասնակցություն ունեցան Հայաստանի, այդ թվում նաև Լենինականի աշխատավորները։

Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվոր-ծառայողները, պարտիական կազմակերպության անմիջական օգնությամբ ու ղեկավարությամբ, անընդհատ բարձրացնելով բանվորների տեխնիկական դիտելիքները, կատարելագործելով աշխատանքի կազմակերպման մեթոդները, բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը և 1941—1945 թթ. պատերազմական տարիների ժամանակաշրջանում մեր երկրին ու ռազմաճակատին տվին 19.687 տոննա մանվածք և 104 միլիոն մետր գործվածք, որից Սովետական Բանակի կարիքների համար 61.600 հազար մետր։

Կոմբինատի գործվածքային ֆաբրիկան պատերազմի 3,5 տարիներին տվեց 11.486 հազար մետր ավելի արտադրանք, իսկ մանարան ֆաբրիկան 5.296 տոննա ավելի մանվածք, քան այդ ֆաբրիկաները տալիս էին նախապատերազմյան տարիների նույն ժամանակաշրջանում։ Ներկման ֆաբրիկան Սովետական Բանակի մարտիկների հանդերձանքի համար տվեց 4.298 հազար մետր ներկված դիտադոնալ։ Տեքստիլ կոմբինատի բանվորները անձնվեր աշխատանքով պլանային ասորտիմենտից դուրս, ռազմաճակատի կարիքների համար թողարկեցին 3,500 հազար կոճ թել, 2.700 հազար մետր նուրբ տեսակի մանյա։ Այդ տարիներին կոմբինատի համախառն արտադրանքը կազմեց 62.918 հազար ռուբլի։

Սոցիալիստական մրցության մեջ իր ստանձնած պարտավորությունները բարեխիղճ կատարելու և ռազմական պատվերները ժամանակին հասցնելու գործում մեծ հաջողությունների հասավ մսի պահածոների կոմբինատի բանվոր-ծառայողների կոլեկտիվը, որը պատերազմական տարիների ընթացքում երկրին ու ռազմաճակատին տվեց 35 միլիոն ռուբլու արտադրանք։ Միայն ռազմաճակատ ուղարկվեցին 16.397 ցենտներ սննդի կոնցենտրատներ և պահածոներ։ Կոմբինատը, բացի սննդամթերքից և պահածոներից, կատարեց նաև 12 տեսակի պաշտպանողական նշանակություն ունեցող զանազան պատվերներ։

Լենինականի մսի պահածոների կոմբինատի կոլեկտիվը 1942 թ. հատուկ պատվերների պլանը կատարեց 105,2%։ Այդ կապակցությամբ 1943 թ. ռեսպուբլիկայում շահեց 3-րդ մրցանակ։ 1944 թ. ռազմական պատվերների պլանի կատարողականը հասցրեց 126%։

Պատերազմի սկզբից ամբողջապես զբաղված լինելով ռազմական պատվերներ կատարելով, Չկալովի անվան կարի գործարանի ամբողջ կոլեկտիվը պատվով կատարեց սոցիալիստական մրցության մեջ իր ստանձնած պարտավորությունները և մեր հերոսական բանակի մարտիկներին տվեց 22.325 հազար ռուբլու արժողությամբ՝ 2.100 հազար ձեռք սպիտակեղեն և այլ հանդերձանք։ Փայտամշակման կոմբինատը բանակին տվեց 3,5 միլիոն ռուբլու արտադրանք։ Կոմբինատի բանվորները ռազմական հատուկ պատվերները բարձր որակով և ժամկետից շուտ կատարելու համար շահեցին Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի փոխանցիկ կարմիր դրոշը, իսկ բաղմաթիվ առաջավոր բանվորներ պարգևատրվեցին։

Լենգէսի, էլեկտրաենթակայանի և քաղաքի էլեկտրացանցի կոլեկտիվների նվիրված աշխատանքի շնորհիվ, ապահովվեց Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային հանգույցի օբյեկտների անխափան աշխատանքը, որի համար նրանք շահեցին Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի փոխանցիկ կարմիր դրոշը։

Այսպիսով, ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը կրկնապատկելու համար ծավալված համաժողովրդական սոցիալիստական մրցության մեջ դերասանց ցուցանիշների հասան Լենինականի գործարաններն ու ֆաբրիկաները, երկաթուղային հանգույցը, արհեստագործական կոոպերացիայի արտելները և Քաղաքային Սովետի տնտեսական արդյունաբերության ձեռնարկությունները, որոնք իրենց տարեկան համախառն արտադրանքի պլանները 1943—1944 թթ. գերակատարեցին, իսկ 1944 թ. 1943 թ. համեմատությամբ, 6.700 հազար ռուբլու ավելի արտադրանք տվին։

Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունները Հայրենական պատերազմի տարիներին մեր հայրենիքին տվեցին տասնհինգ անգամ ավելի արտադրանք[1], քան Հայաստանի ամբողջ արդյունաբերությունը 1913 թ., իսկ դաշնակների տիրապետության տարիների համեմատությամբ՝ 44 անգամ ավելի:

Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի կողմից 1945 թ. փետրվարի 18-ին ՀԿ(բ)Պ Լենինականի Քաղաքային կազմակերպության VIII կոնֆերանսում հանդուրժմարի բերվեց Հայրենական պատերազմի տարիներին Լենինականի աշխատավորության կատարած աշխատանքների արդյունքները։ Լենինականի բոլշևիկները ամուր կեսով իրենց ձեռքը վերցնելով պաշտպանական աշխատանքների կազմակերպման գործը, ժողովրդին քաղաքի աշխատավորության ողջ ուժերը և կարողացան հմուտ կերպով կենսագործել պարտիայի և կառավարության յուրաքանչյուր ցուցումը։ Չնայած պատերազմական ժամանակի դժվարություններին, բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, ամենաարագ կերպով տիրապետելով նոր արտադրանքի թողարկման տեխնիկային, պատվով կատարեցին իրենց պարտավորությունները, մասնավորապես ռազմական պատվերները։ Նրանք իսկական հոգատարություն ցուցաբերեցին քաղաքի բնակչության կոմունալ սպասարկման, մասնավորապես զինվորական ընտանիքների և ճակատայինների ընտանիքների յուրաքանչյուր անհրաժեշտ պահանջի նկատմամբ։ Լենինականի աշխատավորները դրանով ամրապնդեցին Սովետական Բանակի ձեռք բերած հաղթանակները և օգնեցին նրա մարտական ուժերի հզորացման գործին։

Այսպիսով, հայ ժողովուրդը, այդ թվում նաև Լենինականի աշխատավորները, ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների հետ միասին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, արիաբար կրելով պատերազմի բոլոր դժվարությունները, հանդես բերին ռազմական ձևով աշխատելու, մեր երկրի սահ-

[1] *ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, գ. 338, էջ 180։*

ապատ ուժերը մոբիլիզացնելու ընդունակություն և հարատև օգնություն ցույց տվին ռազմաճակատին, թշնամու նկատմամբ հաղթանակը ապահովելու համար։

Մեր երկրի ժողովուրդները դեպի Սովետական Բանակն ունեցած իրենց սերն ու նվիրվածությունը արտահայտեցին հայրենասիրական բազմաթիվ նախաձեռնություններով՝ նվեր-ծանրոցների, լրացուցիչ տաք հագուստի և պաշտպանական բազմաստիճան ֆոնդերի ստեղծումով։ Այդ շարժման մեջ ընդգրկվեցին ՍՍՌՄ բոլոր ժողովուրդները։

Հայաստանի, այդ թվում նաև Լենինականի աշխատավորները, արձագանքելով մեր երկրի առաջավոր մարզերի աշխատավորների նախաձեռնությանը, բազմաթիվ նվեր-ծանրոցներ ուղարկեցին Սովետական Բանակի մարտիկներին, հրամանատարներին, քաղաշխատողներին, մասնավորապես Լենինի շքանշանակիր 15-րդ գվարդիական խարկովյան դիվիզիայի մարտիկներին, որոնք ստանալով Լենինականի աշխատավորության բազմիցս ուղարկած նվեր-ծանրոցները, գրում են. «Թանկագին ընկերներ. մեր գվարդիական զորամասի անձնակազմը հրճվանքով և խանդավառությամբ ընդունեց ձեր նամակը, ձեր ջերմ խոսքերը մեր սրտերում ավելի ուժեղացրին սերը դեպի մայր Հայրենիքը։ Ջերմորեն շնորհակալ ենք ձեզանից այն հոգատարության համար, որ դուք հանդես եք բերում Կարմիր Բանակի մարտիկների նկատմամբ։ Այդ բանը մի անգամ ևս հաստատում է, որ մեր հզոր երկրում թիկունքն ու ռազմաճակատը միասնական են։ Մենք՝ Ստալինգրադի համար մղված պատմական ճակատամարտի մարտիկներս, համակված ենք մի ցանկությամբ՝ մեր բոլոր ուժերը, մեր բոլոր ռազմական դիտելիքները, իսկ եթե հարկ լինի, նաև մեր կյանքը նվիրաբերել թշնամու ջախջախման գործին։

Թանկագին ընկերներ. մենք հպարտանում ենք ձեր արտադրական հաջողություններով, համոզված ենք, որ դուք այսուհետև ևս, առանց ձեռքներդ ծալելու, անձնվիրաբար կաշ-

խատեք հանուն մեր հայրենիքի, ավելի ուժեղ կերպով կոգնեք ռազմաճակատին, որպեսզի շուտով ջախջախենք մեր բոլորիս ատելի թշնամուն՝ գերմանական ֆաշիզմին»[1]։

Լենինականի աշխատավորները յոթ անգամ դելեգացիա են ուղարկել ռազմաճակատ, որից չորս անգամ միայն 15-րդ գվարդիական դիվիզիա, որը ՍՍՌՄ Զինված Ուժերի զորային միավորումների հետ միասին Ստալինգրադից մարտերով հասել է Դրեզդեն, իր մարտական գվարդիական դրոշի վրա կրելով Լենինի, Սուվորովի, Կարմիր դրոշի և Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանները։

Լենինականի աշխատավորությունը սիրտ կոտր էր պահպանում Կուրսանում հերոսաբար կռվող բանակի, Ուկրաինայի ազատագրման մասնակից Սովետական Միության Հերոս գեներալ-լեյտենանտ Պուշկինի միավորման և Սևաստոպոլում Թամանյան 89-րդ հայկական Հրաձգային դիվիզիայի մարտիկների և հրամանատարների հետ։ Պատերազմի տարիներին ռազմաճակատից Լենինական են ժամանել 15-րդ խարկովյան, 89-րդ Թամանյան, 409-րդ Կիրովոգրադյան դիվիզիաների և Մերձբալթյան ռազմաճակատի ներկայացուցիչները, Լենինգրադի ռազմաճակատից՝ Սովետական Միության Կրկնակի Հերոս, հայ ժողովրդի պանծալի զավակ Նելսոն Ստեփանյանը, Սովետական Միության Հերոսներ՝ Բ. Մախոդինը, Ղ. Մադոյանը, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, կապիտան Վ. Գուսևը, Անդրանիկ Մելքոնյանը, վրաց ժողովրդի զավակ Վ. Սեխնիաշվիլին և շատ ուրիշներ։

Սրանց չերմ հանդիպումները Լենինականի աշխատավորության հետ, աշխատանքային նոր լիցք առաջացրին ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը կրկնապատկելու համար։

1943 թ. Լենինականի աշխատավորները Դյուզբյանդի, Արթիկի, Աղինի, Ղուկասյանի շրջանի կոլտնտեսականները մայիսմեկյան 5 վագոն նվեր-ծանրոցներ ուղարկեցին Լենինի շքանշանակիր 15-րդ գվարդիական դիվիզիայի մար-

---

[1] „На защиту родины", красноармейская газета от 23 февраля 1943 г.

տիկներին։ Նվեր-ծաղրոցների մեջ դրված սրտառուչ նամակներին պատասխանեցին մարտիկներ՝ Զաքարիշկինը, Ստարշինովը, Թորոսյանը, Զախեկիմադեն և Նաումովը։ Նրանք խոստանում էին հերոսաբար կռվել գերմանական ղավթիչների դեմ, որպեսզի մեր երկրից դուրս քշեն գերմանական օկուպանտներին։

Լենինականի աշխատավորները ինչպես մի շարք դիվիզիաների, այնպես էլ Ղրիմի, Օրջոնիկիձեի, Կրասնոդարի եկրամասի պարտիզաններին և Սևծովյան նավատորմի մարտիկներին ուղարկեցին տաք հագուստ և նվեր-ծաղրոցներ։ Այդ գործին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս կոմերիտականները ու պիոներ-դպրոցականները։ Լենինականի Նալբանդյանի անվան դպրոցի աշակերտուհի Նինել Ղարուզյանին Սովետական Միությունի Հերոս, դեներալ-լեյտենանտ Պուշկինը գրում է. «Ճակատային ողջույն և լավագույն ցանկություններ եմ հղում Ձեզ, հարգելի Նինել։ Շնորհակալություն եմ հայտնում իմ հանդեպ ցուցաբերած հարգանքի՝ անձնական նվեր ուղարկելու համար։ Խորապես զգացված եմ ու երախտապարտ, որ դուք, արևավառ Հայաստանի դուստրերդ հետաքրքրվում եք մեր պանծալի ատանկիստների կյանքով և գործերով»[1]։

Ինչպես ուսուցչուհիների, այնպես էլ Լենինականի աշխատավորները ջերմորեն արձագանքեցին Երևանի Կիրովի անվան գործարանի բանվորների կոչին՝ տաք հագուստ ուղարկել Սովետական Բանակին։ Լենինականի աշխատավորները հարյուր հաղարից ավելի կիսամուշտակներ, վալենկաներ, բրդյա գուլպաներ, ձեռնոցներ և այլ տեսակի տաք հագուստ պատրաստեցին և նվեր ուղարկեցին Սովետական Բանակի մարտիկներին և հրամանատարներին։

Լենինականի աշխատավորները ամենայն սիրով արձագանքեցին Տամբովցիների և Սարատովի մարզի կոլտնտեսականների կոչին, ստեղծելով բարամատեսակ պաշտպանա-

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի ՀՊՊ կաբինետի արխիվ, ֆ. 16, գ. 9, էջ 10։

կան ֆոնդեր Սովետական Զինված Ուժերին էլ ավելի մեծ օգնություն ցույց տալու համար։ Այդ շարժումը դարձավ համաժողովրդական հայրենասիրական, որին մասնակցեցին Հայաստանի աշխատավորները և մուծեցին 38 միլիոն ռուբլի՝ «Հայաստանի կոլխոզնիկ» տանկային շարասյուն կառուցելու համար։ Երևանի, Լենինականի, Կիրովականի և Հայաստանի մյուս քաղաքների ու շրջանների աշխատավորները մարտական ինքնաթիռների կառուցման ֆոնդին մուծեցին 15 միլիոն ռուբլի, որի համար արժանացան Ի. Վ. Ստալինի և Կարմիր Բանակի շնորհակալությանը։

Լենինականի աշխատավորները, չնայած պատերազմի հետևանքով կրած զրկանքներին, տանկերի և ինքնաթիռների շարասյուն կառուցելու համար 1941—1945 թթ. ընթացքում իրենց անձնական խնայողություններից պետական բանկ և խնայողական դրամարկղ մուծեցին 8.415.700 ռուբլի, հերոս քաղաքների վերականգնման համար 5.009 հազար ռուբլի, նվեր-ծանրոցների տաք հագուստի համար՝ մոտ 3 միլիոն ռուբլի, ընդամենը, տարբեր ֆոնդերին 27.620. 800 ռուբլի։

Վ. Ի. Լենինը մեզ սովորեցրել է, որ թիկունքում Կարմիր Բանակին ցույց տրվող օգնության յուրաքանչյուր քայլ խիստ էական նշանակություն է կարմիրբանակայինների տրամադրության վրա։

Կատարելով Վ. Ի. Լենինի իմաստուն ցուցումը, Լենինականի աշխատավորները ջերմ հոգատարությամբ շրջապատեցին ինչպես ճակատայիններին, այնպես էլ էվակուացիայի ենթարկված ընտանիքներին։ Տեղական, պարտիական և սովետական օրգանները ամենաուշադիր վերաբերմունք ցուցաբերելով դեպի այդ ընտանիքները, նրանց բավարարում էին անհրաժեշտ ամեն ինչով։ Սովետական բանակի սպա Գաշիմով Մամեդ Ալին ՀԿ(բ)Պ Լենինականի քաղկոմի նախկին քարտուղար ընկ. Շ. Մ. Առուշանյանին ուղարկած նամակում գրում է, որ ընկ. Առուշանյանը իր ընտանիքին ցույց տված օգնությամբ, հանդես է բերում հոգատարություն մարդկանց նկատմամբ, դրանով բարձրացնում է իր հոգեկան-բարոյական վիճակը ռազմաճակատում։

Լենինականից ռազմաճակատ մեկնած լեյտենանտ Ա. Պետրոսյանը Բաղրամյանի գործկոմի նախագահ Գ. Ա. Գյոդակյանին և քաղաքացիական հարցերի Լ. Գ. Մարտիրոսյանին գրում է. «Գտնվելով բանակում, ես չէի մտածում ընտանիքիս ապրուստի մասին, որովհետև գիտեի, որ մեր պետությունը անսահման հոգատարություն է ցույց տալիս մեր ընտանիքներին։ Ապրիլի 30-ին ես նամակ ստացա կնոջից, որի մեջ նա գրում է, թե ինչպես Լենինականում իրեն ցույց տված օգնության շնորհիվ երեխաները ապահովված են և հաճախում են դպրոց։ Իմ փոքրիկ յոթ տարեկան Սվետլանան 1943 թ. դպրոց է գնացել, արդեն գրագետ է, ինձ երեք հատ նամակ է գրել։ Կարդալով կնոջս նամակը, սիրտս ուրախությամբ լցվեց և ես չեմ կարող չհայտնել իմ խորին շնորհակալությունը տեղական կազմակերպություններին ոչ միայն իմ, այլև իմ նման հազարավոր մարտիկների ընտանիքներին ցույց տրվող օգնության համար»[1]։

Այսպիսի սրտառուչ նամակներ բազմաթիվ են, որոնք ուղղված են պատերազմական և սովետական կազմակերպություններին, զինվորական կոմիսարիատին։ Լենինականի ճակատային հանձնարարությունների համար հատուկ նամակ ուղարկեցին ռազմաճակատում գտնվող իրենց տղաներին, որի մեջ նրանք նկարագրում են ոչ միայն իրենց նկատմամբ ունեցած հոգատարությունը, այլ թե ինչպես իրենք անվարձ դիշեր ու ցերեկ աշխատում են ռազմաճակատի, հոսպիտալի վիրավոր մարտիկների և երեխաների համար, ինչպես անդուլ կերպով մասնակցում են մեր Հայրենիքի անկախության համար մղվող համաժողովրդական պայքարին։ Նրանք իրենց նամակը վերջացնում են հետևյալ խոսքերով. «...Մեր օրհնանքը, մեր սերը և մեր նվիրվածությունը Ձեզ հետ է։ Ուրեմն, էլ ավելի համարձակ մարտի գնացեք հանուն մեր Հայրենիքի, հանուն մեր արդար գործի»[2]։

---

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի ՀՊՊ կաբինետի արխիվ, ֆ. 16, գ. 87, թ. 29։

[2] «Մարտիկ», ռազմաճակատային թերթ, 20 փետրվարի 1944 թ., № 14։

15-րդ Խարկովյան գվարդիական հրաձգային դիվիզիայի հրամանատար, գվարդիայի գեներալ-մայոր Պ. Ջիրկովը 1945 թ. մարտի 8-ին Գերմանիայի տերիտորիայից գրում է, որ Լենինականի աշխատավորների կողմից դիվիզիային նվիրված դրոշը, արհավառ Հայաստանից իրենց հասավ Գերմանիայի հողում։ Այդ դրոշը, մեր գվարդիական դրոշների հետ միասին, էլ ավելի է ոգևորում մեզ, թշնամու դեմ տարվող վերջնական հաղթական մարտերում։ Լենինականի աշխատավորության մեզ նվիրած դրոշը, մեր միավորման դրոշների հետ միասին, մենք կծածանենք Բեռլինում։ Լենինականի աշխատավորներ, ասվում է Պ. Ջիրկովի նամակում, շնորհակալություն ձեզ, ճակատայինների ընտանիքներին ցույց տրված մեծ օգնության, թիկունքում ձեր կատարած հերոսական աշխատանքների և մեր նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար։

* * *

Հայրենական պատերազմի տարիներին մեծ նշանակություն ունեցավ ՍՍՌՍ ժողովուրդների բարեկամությունը, որը էլ ավելի ամրապնդվեց և քննություն բռնեց մեր Հայրենիքին սպառնացող ահեղ վտանգի առկայության պայմաններում։ Հայրենական պատերազմի տարիներին մեկ մարդու նման ոտքի կանգնեցին մեր երկրի բազմազգ ժողովուրդները՝ ֆինական ցրտաշունչ ժայռերից մինչև հրաբորբոք Արարատյան դաշտը, Բալթիկայի ափերից մինչև խաղաղ օվկիանոսի ափերը։

Մեծ Լենինի հաղթական դրոշի ներքո Սովետական Միության եղբայրական ժողովուրդների թվում նաև հայ ժողովրդի քաջարի զավակները առաջավոր դիրքում ռուս, ուկրաինացի, բելոռուս, ուզբեկ, թաթար, վրացի եղբայրների հետ կողք-կողքի հերոսաբար կռվում էին մինչև ատամները տանկերով ու ավիացիայով զինված նենգ թշնամու դեմ։

«Հայ ժողովուրդը,— գրում էր «Պրավդա»-ն,— հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և

ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում։ Անվեհեր մարտիկներ՝ օդաչու Գաղասպյանի, մայոր Ապրեսյանի և հայ ժողովրդի ուրիշ շատ զավակների պանծալի անունները, մարտիկներ, որոնք հուշակվեցին Հայրենական պատերազմի ճակատներում իրենց ցուցաբերած անձնուրաց անվեհերությամբ և արիությամբ, հայտնի են ամբողջ Սովետական Միությանը»[1]։

Մոսկվայի պաշտպանության, Ստալինգրադի, Լենինգրադի ռազմաճակատներում հերոսաբար կռվող բազմազգ ժողովրդի զավակների կողքին խիզախորեն կռվում էին նաև հայ ժողովրդի, այդ թվում Լենինականի աշխատավորության պանծալի զավակներ՝ գեներալ-մայոր Գր. Գրիգորյանը, Սովետական Միության Հերոս տանկիստ Աշոտ Ամատունին, փոխգնդապետ Ե. Եղիազարյանը, մայոր հրետանավոր Ա. Մանուկյանը, կործանիչ օդաչու Վ. Մարտիրոսյանը, լեյտենանտ Ա. Իգիթյանը, ռազմիկներ՝ Ս. Ալեքսանդրյանը, Վ. Գրիգորյանը և շատ ուրիշներ։

Տանկիստ կապիտան Բ. Մինասյանը մի անգամ առաջադրանք էր ստացել ազատել սովետական այն քաղաքացիներին, որոնց տանում էին Արևմուտք տաժանակիր աշխատանքի։ Կապիտան Մինասյանի տանկային ստորաբաժանումը համառ մարտեր մղելուց հետո ոչնչացրեց երկու տանկ և երկաթուղային մի էշելոն՝ 34 վագոնից բաղկացած։ Նա 1000 սովետական քաղաքացիների ազատեց տաժանակիր աշխատանքի տանելուց։ Կապիտան Բ. Մինասյանը այդ գործողության պահին երկու անգամ վիրավորվեց, բայց շարքից դուրս չեկավ։

Գվարդիայի կապիտան, գրոհող օդաչու Նիկոլայ Սարգսյանը, մասնակցելով Ստալինգրադի մարտերին, կատարել է 60 թռիչք։ Կատարելով հեռավոր թռիչք, նա օդանավակայանում հայտնաբերեց 350 ինքնաթիռ և ինքն էլ մասնակցեց նրանց ոչնչացմանը։ Նա իր հերոսության և խիզախության համար պարգևատրվեց մի քանի շքանշաններով։

---

[1] «Պրավդա», 1941 թ., 26 օգոստոսի, № 235։

Հայ ժողովուրդը հատուկ նամակով դիմելով Սովետական Բանակում գտնվող հայ մարտիկներին, կրկին հիշեցնում է այս պատերազմում նրանց սրբազան պարտքը.

«...Հայ ժողովուրդը հազարամյակներ շարունակ իր սուրը պատյան չի դրել, նա հաղթահարել է շատ տառապանքներ, մինչև որ հասել է այն երջանկության, որ բերել է Սովետական իշխանությունը, որը մեզ տվել է ազատություն, խաղաղություն, պետականություն, որից մենք զրկված էինք մի քանի դար շարունակ։

Հայ մարտիկներ, ատեցեք թշնամուն ձեր հոգու ամբողջ ուժով, թող այդ ատելությունը ձեր կրծքերը դարձնի պողպատակուռ զրահ, ձեր բազուկներին տա անսպառ կարողություն։ Թող նոր ուժով վերակենդանանա ձեր մեջ մեր քաջ նախնիների խիզախությունը»[1]։ Հայ ժողովրդի սրտառուչ նամակը հասավ նրա զավակներին, այդ նամակը ոչ միայն հայ մարտիկներին, այլև Սովետական Հայաստանի պաշտպաններին ոգեշնչեց նոր հաղթանակների։

Սև ամպեր են կուտակվել Կովկասի սոցիալիստական ռեսպուբլիկաների վրա։ Կովկասը բոցերի մեջ է,— գրել է Մ. Ի. Կալինինը,— նրա ժողովուրդները վտանգի մեջ են, թշնամին ոտքի տակ է տալիս ու ոչնչացնում է այն ամենը, ինչ որ թանկ է կովկասցու սրտին։ 1942 թ. օգոստոսին Օրջոնիկիդզեում կայացած անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների ներկայացուցիչների հակաֆաշիստական միտինգում, նրանք միահամուռ երդվեցին ռուս ժողովրդի և ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ միասին կռվել գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ, լիովին ջախջախել գերմանական ճիվաղին։

Կովկասի հերոսական պաշտպանության մարտերին մասնակցած Լենինականի աշխատավորության զավակ, փոխգնդապետ Լևոն Ակոպովը, որը պատերազմի սկզբից գնդի հրամանատար էր, թշնամուն հասցվելիք հարվածը անօրինակ հերոսությամբ կազմակերպեց և ինքն էլ այդ մարտերում անձ-

[1] «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին», Հայպետհրատ, 1943 թ., էջ 9, 12—13։

նաղոհություն ցույց տվեց։ Նրա զորամասի մարտիկները առաջավոր գծում իրենց կողքին տեսնելով քաջ հրամանատարին, ոգևորվում, քաջալերվում էին թշնամու դեմ մղվող մարտերում։

1943 թ. Հյուսիսային Կովկասի ճակատային թեքթերից մեկում գրված է. Կուբանի համար մղվող մարտերում հերոսաբար զոհվեց Հայրենիքի հավատարիմ զավակ փոխգնդապետ Լ. Ակոպովը. նրա մարտիկներն ու սպաները մարտական բարեհամբությամբ ձուլված եղբայրական ժողովուրդների զավակների հետ, անողոք վրեժ էին լուծում գերմանական օկուպանտներից։

Կովկասի պաշտպանության հերոսական մարտերի մասնակիցներն են մայոր Լ. Քոչարյանը, գվարդիայի կապիտան Ի. Սահակյանը և Ս. Խաչատրյանը, ավագ լեյտենանտ Խ. Ոսկանյանը, Ս. Մանվելյանը, ռազմիկ Ա. Առաքելյանը, Թամանյան գվիդիայի մարտական շարքերում կռված Սովետական Միության Հերոսներ՝ Ա. Հարությունյանը, Հ. Մկրտչյանը, Ս. Բաղդասարյանը, վերջիններիս կուրծքը Լենինի շքանշանների և Ոսկի աստղ մեդալների հետ միասին զարդարում է Կովկասի պաշտպանության մեդալը։

Սևծովյան նավատորմում ևս հերոսաբար կռվում էին հայերը, այդ թվում Լենինգրադի աշխատավորության զավակներ ծովայիններ՝ Հ. Զիլֆիմյանը, Հ. Վահրամյանը, Գ. Հարությունյանը, Ս. Սարգսյանը, Գ. Աբրահամյանը, Գ. Կարապետյանը, Վ. Սիմոնյանը և ուրիշներ։

Այսպիսով, ինչպես Ղրիմի համար մղված մարտերին, այնպես էլ Սևաստոպոլի և Կերչի հատվածներում, Սևծովյան ռազմանավերի վրա մեր բանակի բազմազգ մարտիկների մեջ էին բազմաթիվ հայ զինվորներ, հրետանավորներ, օդաչուներ, տանկիստներ, սակրավորներ, նավաստիներ, կապավորներ, որոնք բարձր պահելով հայ ժողովրդի պատիվը, հավատարիմ մնալով իրենց զինվորական երդմանը, հերոսաբար կռվեցին նենգ թշնամու դեմ։

Լենինգրադի հերոսական մարտերին մասնակցել են հայ ժողովրդի պանծալի զավակներ, Սովետական Միության Հե-

ռոս, փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը, Լենինգրադի պաշտպան գեներալ-մայոր Բենիամին Գալստյանը, մայոր Հայկ Սելբոնյանը, Լենինականի աշխատավորության զավակներ տանկիստ կապիտան Բ. Մինասյանը, կապիտան Վ. Մարտիրոսյանը, բժշկական ծառայության ավագ Վ. Ունուսյոզլյանը, խիզախ սերժանտ Լ. Տիրանյանը, օդաչու Ս. Դավթյանը և շատ ուրիշներ։

Մարտական փառահեղ ուղի է անցել գեներալ-մայոր Գրիգոր Արկադիի Գրիգորյանը, որը լինելով քաղաքացիական կռիվների մասնակից, միշտ եղել է զինվորական ծառայության մեջ, Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից մասնակցել է հերոսական կռիվներին և երեք անգամ վիրավորվել։ Նա պատերազմի տարիներին եղել է հրաձգային դիվիզիայի հրամանատար, ապա դիվարդիական կորպուսի հրամանատարի տեղակալ, նրա ղեկավարած դիվիզիան հերոսաբար կռվել է Բելոռուսական 2-րդ և 3-րդ ռազմաճակատներում, ապա Լեհաստանում և Պրուսիայում։

Գեներալ- մայոր Գր. Գրիգորյանը ոչ միայն փորձված ու հմուտ հրամանատար էր, որն իր դիվիզիայի մարտիկներին տանում էր մարտի, նա միաժամանակ քաջ էր, իր օրինակով ոգեշնչում էր դիվիզիայի մարտիկներին ու հրամանատարներին։ Գեներալի կուրծքը զարդարված է Լենինի, չորս Կարմիր դրոշի, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով։

Դնեպրն անցնող Սովետական Միության հազարավոր հերոսների թվումն էին Լենինականի աշխատավորությանը լավ ծանոթ, երկար տարիներ այնտեղ աշխատած ռուս ժողովրդի զավակներ՝ գնդապետ Դուդկո Լուկա Մինովիչը և փոխգնդապետ Իվան Շիյանովը։ Դնեպրի անցման հերոսներից է տանքիստ կոմբինատի նախկին բանվոր ավագ սերժանտ Արամայիս Պողոսյանը, որը 1943 թ. դեկտեմբերի 20-ին ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության Հրամանագրով արժանացավ հետմահու Սովետական Միության Հերոսի կոչման։

Լենինականի քարհանքերի վարչության պարտիական կազմակերպության նախկին քարտուղար Վ. Կարապետյանը

հերոսաբար կռվում էր Նեիլյան հատուկ Կարմրադրոշ տանկային բրիգադում։ Նա երեք անգամ արժանացել է Գերագույն Գլխավոր հրամանատարի շնորհակալությանը։ Նվիլյան Կարմրադրոշ տանկային բրիգադի հրամանատարությունը, շնորհավորելով Վ. Կարապետյանին, գրում է. «Հարգելի ընկեր ու բարեկամ. ջերմորեն շնորհակալություն ենք հայտնում մեր հայրենիքի թշնամիների դեմ մղած մարտերում քո ցուցաբերած արիության ու հերոսության համար։ Մեր խիզախ ընկեր, դու աղնվորեն ծառայեցիր հայրենիքին, բարձր պահեցիր հայ ժողովրդի անունը»[1]։

Լենինականի աշխատավորության բազմաթիվ զավակներ կռվում էին 15-րդ գվարդիական Խարկովյան Լենինի շքանշանակիր դիվիզիայի մարտական շարքերում, այն դիվիզիայի, որի հետ 1941—1945 թթ. սերտ կերպով կապված էին Լենինականի աշխատավորները։ Գվարդիայի գնդապետ Ան. Ղահրամանյանը, գվարդիայի կապիտան Հ. Խաչատրյանը, գվարդիայի կապիտան Լ. Գրիգորյանը, կապավոր Ա. Պողոսյանը և շատ ուրիշները հերոսաբար կռվելով՝ բարձր էին պահում հայ ժողովրդի պատիվը։

Բժշկական ծառայության լեյտենանտ, օպերացիոն ավագ բույր պարտիզան Ն. Ասատրյանը բանակ գնալով անցել է մարտական փառահեղ ուղի։ Նա հասել է մինչև Վիեննա։ Իր ցուցաբերած արիության համար պարգևատրվել է Կարմիր աստղի 2 շքանշանով, Կովկասի պաշտպանության, Բելգրադի, Բուդապեշտի, Վիեննայի գրավման մեդալներով։

Բուժքույր Գ. Հարությունյանը Հայրենական պատերազմի առաջին օրերից մեկնելով բանակ, մասնակցել է Ռոստովի, Ստալինգրադի, Խարկովի, Կուրսկի, Բրյանսկի կամուրջներին, ինչպես նաև Պրագայի, Բուխարեստի, Վիեննայի ազատագրման և Բեռլինի գրավման մարտերին։ Նա պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և բազմաթիվ մեդալներով։

Լենինականի աշխատավորության զավակ, Սովետական Միության Հերոս Աշոտ Հարեթի Ամատունին մասնակցել է

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ, ՀՊՊ կաբինետի արխիվ, ֆ. 16, գ. 2, էջ 7։

Ստալինգրադի ահեղ կռիվներին, ապա Նիկոլաևի, Դնեպրոպետրովսկի, Օդեսայի, Ղրիմի ազատագրման մարտերին։ Նա իր տանկով ոչնչացրել է ֆաշիստական հարյուրավոր զինվորներ, լռեցրել տասնյակ կրակային կետեր, շարքից հանել բազմաթիվ հրանոթներ։ Մի անգամ նա մի մեծ ջրային բնագիծ անցնելիս, տեսնում է, որ թշնամին գետի վրա գնդակոծում է փոխադրանավերը, Ամատունին վտանգի ենթարկելով իր կյանքը, նետվում է գետը, թշնամու տեղատարափ կրակի տակ կազմակերպում մարտիկների և սպառազինության փոխադրումը։ ՍՍՌՍ Գերագույն Սովետի Նախագահության 1945 թվականի փետրվարի 27-ի հրամանագրով Ա. Ամատունուն շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Գնդապետ Հակոբ Սարգսյանն իր մարտական մկրտությունն ստացել է քաղաքացիական կռիվների տարիներին, երբ 1919 թ. մտավ Կարմիր զվարդիայի շարքերը։ Այս պատերազմի սկզբից նա ռազմաճակատում հրամանատար էր։ Մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Կուբանի, Ուկրաինայի ազատագրման համար մղվող մարտերին, նրա ղեկավարած հրետանային միավորումը, անցնելով Դնեպրը, Հարավային Բուգը, Դնեստրը, Պրուտը, առաջ է անցնում Ռումինիա, Չեխոսլովակիա և Հունգարիա։

Գնդապետ Հ. Սարգսյանի կյանքը հաստատ է հերոսական գրվագներով։ Նա փորձված, հմուտ և սիրված հրամանատար էր և հերոսաբար զոհվեց այն պահին, երբ մեր Սովետական բանակը մարտերով շարժվում էր դեպի արևմուտք, Բեռլինի վրա բարձրացնելու հաղթական դրոշը։ Հ. Սարգսյանը պարգևատրվել է Լենինի երկու, Կարմիր դրոշի երկու, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով, Սովետական բանակում 20-ամյա անբասիր ծառայության և այլ մեդալներով։

Սովետական բանակի 26-րդ տարեդարձի առթիվ գնդապետ Հ. Սարգսյանին Ռազմական խորհրդի կողմից ուղարկված շնորհակալագրի մեջ ասված է. «Սովետական բանակի վետերան Հ. Սարգսյանին... Այդ պատմական ուսին Դուք անցաք Կարմիր բանակի հետ մեկտեղ։ Ձեր ամբողջ գիտակցա-

կան կյանքը անցկացրել եք Սովետական բանակի շարքերում, ծառայության մեջ։ Ձեր ողջ ուժերը նվիրել եք աշխարհում առաջին Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկայի բանակի ամրապնդմանը»[1]։

Բեռլինի գրավման պատմական մարտերին մասնակցեցին Լենինգրադի աշխատավորության զավակներ՝ դեպոյի փականագործ, հրետանային բրիգադի հրամանատար գնդապետ Գ. Բուռնազյանը, որն իր սխրագործությունների համար պարգևատրվել է Լենինի, չորս Կարմիր աստղի, չորս Կարմիր դրոշի, Կուտուզովի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով և տասից ավելի մեդալներով, գվարդիայի գնդապետ Անդր. Ղահրամանյանը, Սովետական Միության Հերոս գնդապետ Դ. Միհոլիչը, որը մայիսի 5-ին հերոսաբար զոհվեց Բեռլինում, գնդապետ Խ. Պայազատյանը, որը Հայկական Թամանյան հրաձգային դիվիզիայի միավորման հետ մտել է Բեռլին։ Փոխգնդապետ Ե. Եղիազարյանը, կապիտան Վ. Շահբաղյանը, կապիտան Ա. Մովսիսյանը, տանկիստ Ա. Եղոյանը, օդաչու Մ. Դավթյանը, սակրավոր Հ. Մուրադյանը, անվեհեր հետախույզ Ա. Հարությունյանը, խիզախ հրետանավոր Ա. Գրիգորյանը, սվիտեիների Ա. Հակոբյանը, ռազմիկներ՝ Ս. Հակոբյանը, Գ. Կարապետյանը, Հ. Հովհաննիսյանը և շատ ու շատ ուրիշներ, որոնք մեր Սովետական Բանակի Զինված Ուժերի մարտական շարքերի հետ մտան Բեռլին և մասնակցեցին գերմանական ֆաշիզմի վերջնական ջախջախմանը։

Սովետական Բանակի և Ռազմա-ծովային նավատորմի մարտիկները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Թիկունքից ցույց տրված համաժողովրդական օգնության շնորհիվ, ջախջախեցին ֆաշիստական Գերմանիային, նրա դաշնակիցներին, Արևելքում՝ իմպերիալիստական Ճապոնիային և խաղաղություն հաստատեցին ողջ աշխարհում։ Սովետական Միության Զինված Ուժերը կատարեցին իրենց պատմա-

[1] *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ, ՀՊՊ կաբինետի արխիվ, Ֆ. 16, գ. 7, թ. 28։*

կան մեծ միսիան, ինչպես մեր Հայրենիքի, այնպես էլ աշխատավոր մարդկության հանդեպ։

Համկ(բ)Պ Կենտկոմը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետը, բարձր գնահատելով հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ իրենց ողջույնում դրում են. «Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները Սովետական Միության մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին, անձնվիրաբար պաշտպանում էին մեր Հայրենիքի ազատությունը և անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ տանելու համար»։

---

[1] «Սովետական Հայաստան», 1945 թ., 25 նոյեմբերի, № 253։

Ֆայրենարարք դայլ և որքի Կարարարկյանները մի պարտեզներկի

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԼԵՆԻՆԱԿԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀՆԳԱՄՅԱԿՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1945—1955)

Սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Հայրենական Մեծ պատերազմը հաղթանակով ավարտելուց հետո, ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարական աշխատանքի։

Հետպատերազմյան առաջին հնգամյակի հիմնական խնդիրն էր վերացնել պատերազմի պատճառած ավերածությունները, բուժել երկրին հասցրած վերքերը, իսկ տնտեսական դծով վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և զգալի չափով գերազանցել այն։ Հնգամյա պլանով նախատեսվում էր ապահովել ծանր արդյունաբերության և երկաթուղային տրանսպորտի առաջնահերթ վերականգնումն ու զարգացումը, առանց որոնց անհնարին կլիներ արագորեն և հաջողությամբ վերականգնել ու զարգացնել ՍՍՌՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսությունը, նրա բոլոր ճյուղերում ապահովել հետագա տեխնիկական պրոգրեսը, որը արտադրության վերելքի, աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմքն է հանդիսանում։

Հետպատերազմյան առաջին հնգամյա պլանով միաժամանակ նախատեսվում էր ոչ միայն լիովին վերականգնել պատերազմի տարիներին խիստ տուժած գյուղատնտեսությունը, այլև զգալի չափով գերազանցել 1940 թ. գյուղատնտեսական արտադրանքի մակարդակը։ Ամեն կերպ բարձրացնել բերքա-

տվությունը և ավելացնել գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքը։ Գյուղատնտեսության մեջ լայնորեն օգտագործելով առաջավոր ագրոտեխնիկայի նվաճումները, ամրացնելով ու զարգացնելով սոցիալիստական գյուղատնտեսությունը, ապահովել կոլտնտեսականների նյութական ու կուլտուրական կյանքի հետագա վերելքը։

Կոմունիստական Պարտիան և Սովետական կառավարությունը ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հնգամյա պլանում նախատեսեցին ոչ միայն գերմանական օկուպացիայից տուժած շրջանների, քաղաքների ու մարզերի էկոնոմիկայի արագ վերականգնումը, այլև ՍՍՌՄ ողջ ժողովրդական տնտեսության նոր վերելքի ապահովումը։

Սովետական ժողովուրդը, ծավալելով իր ստեղծագործական բոլոր ուժերը, պատմական ամենակարճ ժամանակաշրջանում բուժեց պատերազմի տարիներին ստացած վերքերը, հաղթահարեց արդյունաբերության, տրանսպորտի և սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքը, որի հետևանքով բարձրացավ երկրի բանվորների և գյուղացիների կենսամակարդակը։ ՍՍՌՄ աշխատավորները իրենց հերոսական աշխատանքով արդյունաբերության հետպատերազմյան առաջին հնգամյա պլանը կատարեցին 4 տարի 3 ամսում։ 1950 թ., նախապատերազմյան 1940 թ. համեմատությամբ, արդյունաբերության արտադրանքը ավելացավ 73%-ով պլանով նախատեսված 48 % դիմաց։ Ամբողջովին վերականգնվեց, զգալիորեն ընդլայնվեց պատերազմից տուժած շրջանների արդյունաբերությունը։

Հնգամյակի տարիներին աճեց գյուղատնտեսության ցանքատարածությունը, բարձրացավ հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը, ինչպես նաև անասունների մթերատվությունը։ Սոցիալիստական գյուղատնտեսությունը հետպատերազմյան հնգամյակի տարիներին սկսեց զարգանալ էլ ավելի բարձր տեմպերով։

ՍՄԿՊ XIX համագումարը հանրագումարի բերեց պարտիայի XVIII համագումարից հետո անցած ժամանակաշրջանում ՍՍՌՄ ձեռք բերած հասարակական-պատմական

նշանակություն ունեցող հարցերը, միաժամանակ ընդունեց հինգերորդ հնգամյակի դիրեկտիվները։

1951—1955 թթ. ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի դիրեկտիվները ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության հարաճուն զարգացման նոր վերելք էին նախատեսում, որը պիտի հնարավորանար մեր երկրի բնակչության կենսամակարդակի հետագա բարելավման հիմքը։ ՍՄԿՊ Կենտկոմը և Սովետական կառավարությունը XIX համագումարից հետո մշակեցին լրացուցիչ միջոցառումներ մեր երկրի գյուղատնտեսության զարգացման շնչառակի վերելք ստեղծելու՝ արդյունաբերությունը հումքով և բնակչությունը կենսամթերքով ապահովելու համար։

Մեր երկրի աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի սիստեմատիկ բարձրացման նկատմամբ ՍՄԿՊ-ի և Սովետական կառավարության հոգատարությունը բխում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքից, որի գլխավոր պահանջը հանդիսանում է ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջների առավելագույն բավարարումը՝ բարձրագույն տեխնիկայի բազայի վրա սոցիալիստական արտադրության անընդհատ աճման ու կատարելագործման միջոցով։

ՍՍՌՄ-ում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի օրինաչափ զարգացման և ժողովրդի բարեկեցության բարձրացման հիմնական ցուցանիշը ազգային եկամտի անընդհատ աճն է։

ՍՍՌՄ ազգային եկամուտը, 1955 թ. 1940 թ. համեմատությամբ ավելացավ 2,8 անգամ, պետական և կոոպերատիվ առևտրի, մանրածախ ապրանքաշրջանառությունը երկու անգամ։ Ազգային եկամտի 3/4 հատկացվում է բնակչության անձնական սպառման և նրա նյութական, կենցաղային դրության բարելավմանը։

Հինգերորդ հնգամյա պլանի կատարման շնորհիվ Սովետական Միությունը մեծ չափով դերազանցեց ժողովրդական տնտեսության զարգացման նախապատերազմյան մակարդակը։

1955 թ. արտադրվեց 3,2 անգամ ավելի արդյունաբերական արտադրանք, քան 1940 թ. ընդորում արտադրության միջոցների արդյունաբերությունն ավելացավ 3,9 անգամ։ Ծանր ինդուստրիայի հաջող զարգացման շնորհիվ ժողովրդական սպառման առարկաների արտադրությունը 1955 թ. 1940 թ. համեմատությամբ աճեց ավելի քան երկու անգամ։

Հինգերորդ հնգամյա պլանը կատարվեց չորս տարի չորս ամսում։ Արդյունաբերության արտադրանքը հինգերորդ հնգամյակի ընթացքում աճեց 70%։ Արդյունաբերության արտադրանքի ծավալը 1955 թ. 1950 թ. համեմատությամբ ավելացավ 85%, ընդորում արտադրության միջոցների արտադրությունը 91%, իսկ սպառման առարկաների արտադրությունը՝ 76%[1]։

Միաժամանակ հինգերորդ հնգամյակում արդյունաբերության բոլոր ճյուղերում բարձրացավ տեխնիկական մակարդակը՝ աճեց արտադրական պրոցեսների ավտոմատացումը, բարձրացավ ծանր և աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակը, զգալի չափով ավելացավ բարձր արտադրողական մեքենաների օգտագործումը արտադրության մեջ, արմատավորվեցին առաջավոր տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման լավագույն մեթոդներ։

Հետպատերազմյան առաջին հնգամյակում Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հնգամյա պլանի հիմնական խնդիրը հանդիսանում էր արդյունաբերության ու գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակի վերականգնումը և զգալի չափով այդ մակարդակի գերազանցումը։ Հայկական ՍՍՌ-ն ևս առաջին հերթին պետք է զարգացներ ծանր արդյունաբերության ճյուղերը՝ հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունը, քիմիական, մետաղամշակման արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, տրանսպորտը և այլն։ Դրա հետ միասին

[1] Թվերը տե՛ս «Սովետական Հայաստան», 28 սեպտեմբեր, 1956 թ. № 97 «ՍՍՌՄ-ի զարգացման 1951—1955 թթ. հինգերորդ հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին» կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը։

հետպատերազմյան հնգամյակում պետք է ապահովվեր գյուղատնտեսության, թեթև ու սննդի արդյունաբերության վերականգնումն ու զարգացումը։

1946—1950 թթ. Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության հիմնական խնդիրն էր գյուղատնտեսական մթերքների համախառն բերքի ամեն կերպ ավելացումը՝ մշակվող կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության բարձրացումը, դիտության և տեխնիկայի նվաճումների արմատավորումը գյուղատնտեսության մեջ։

ՀԿ(բ) Պարտիայի XV և XVII համագումարները ոչ միայն հանձնարարեցին Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի արդյունքները հնգամյակի տարիներին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, միաժամանակ նրանք նշեցին Հայաստանի բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի հետագա խնդիրները հետպատերազմյան հնգամյակների պլանների կատարման համար մղվող պայքարում։

Ռեսպուբլիկայի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ 1950 թ. արդյունաբերության համախառն արտադրանքի պլանը կատարվեց 103%[1]։ Արդյունաբերության արտադրանքը, 1950 թ. 1940 թ. համեմատությամբ, աճեց 241%, իսկ արտադրության միջոցների արտադրող արդյունաբերության ճյուղերի արտադրանքը՝ 4,1 անգամ։

Հետպատերազմյան հնգամյակների տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման առանձնահատկությունն այն էր, որ արագ կերպով սկսեց զարգանալ մեքենաշինության, մետաղամշակման և էլեկտրական սարքավորումների արտադրանքը՝ գեներատորների, հիդրոտուրբինների, տրանսֆորմատորների, կաբելի, ավտոդողերի արտադրությունը։ Հայաստանում ինդուստրիայի զարգացման մյուս բնորոշ դիծը, դա քիմիական արդյունաբերության բազմակողմանի զարգացումն է։ Միաժամանակ ռեսպուբլիկայում

[1] «Սովետական Հայաստան», 4 դեկտեմբերի, 1951 թ., № 20։

հնգամյակի տարիներին զարգացան մասսայական սպառման առարկաներ արտադրող արդյունաբերության ճյուղերը՝ թեթև և սննդի արդյունաբերությունը, որոնց արտադրանքի աճման համար նյութական բազա հանդիսացան սոցիալիստական գյուղատնտեսության հումքը և կապիտալ ներդրումների հարատև աճը։ Ռեսպուբլիկայում շահագործման հանձնվեցին բրդյա գործվածքեղենի, մետաքսյա, տրիկոտաժի, հեծանիվի, կոշիկի, ամանեղենի, կահույքի և սննդի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ։

Հայաստանի կոլտնտեսականները, ելնելով ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների՝ գյուղատնտեսության մասին ընդունած հայտնի որոշումներից, վճռական միջոցառումներ ձեռնարկեցին հաղթահարելու գյուղատնտեսության առանձին ճյուղերի ետ մնալը, և դրա հետ միաժամանակ շեշտակիորեն առաջ մղելու ռեսպուբլիկայի գյուղատնտեսության բոլոր ճյուղերը։

Հինգերորդ հնգամյա պլանը չորս տարում կատարելու նպատակով Լենինգրադի արդյունաբերության ձեռնարկությունների բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները նախաձեռնեցին սոցիալիստական մրցություն, որը սովետական բարձր տեխնիկայի բազայի վրա դարձավ ՍՍՌՄ տեխնիկական հեղափոխությունը ապահովելու կարևորագույն լծակներից մեկը։ Իսկ Մոսկվա քաղաքի և Մոսկվայի մարզի առաջավոր ձեռնարկությունների բանվորները խնդիր դրեցին՝ արտադրական պլանների գերակատարման հետ միասին արագացնել նաև շրջանառու միջոցների շրջանառությունը։

Այդ կոչերը ջերմ արձագանք գտան ողջ երկրում, այդ թվում նաև Հայկական ՍՍՌ արդյունաբերության և տրանսպորտի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների մեջ, որոնք, ծավալելով սոցիալիստական մրցությունը, արդյունաբերության 1954 թ. պլանը կատարեցին 102%։ 1954 թ. արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1953 թ. համեմատությամբ աճեց 18%, իսկ 1950 թ. համեմատությամբ՝ 79%։

Հայաստանի արդյունաբերությունը ժամկետից շուտ կատարեց հինգերորդ հնգամյակի համար սահմանված պլանը։ 1955 թ. Հայկական ՍՍՌ արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ աճել է մոտ 5 անգամ, իսկ 1950 թ. համեմատությամբ՝ երկու անգամ։ Այդ թվում գունավոր մետալուրգիայինը՝ 3,3 անգամ, մեքենաշինությունը՝ 2,4 անգամ, քիմիական արդյունաբերությունը 2,7 անգամ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 2,3 անգամ։ Ընդորում ապահովված էր ծանր արդյունաբերության առաջել աճը։

*

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության, այդ թվում Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների, երկաթուղային տրանսպորտի և արհեստակցական կոոպերացիայի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, հիմնվելով Համ(ք)Պ Կենտկոմի 1946 թ. մայիսի 18-ի և ՀԿ(բ)Պարտիայի Կենտկոմի 1946 թ. մայիսի 23-ի որոշումներից, աշխատանքները խաղաղ պայմանների համապատասխան վերակառուցելով, ծավալեցին համամիութենական սոցիալիստական մրցությունը՝ իրենց առաջ դրված հնգամյա պլանի ինդիրները կատարելու ու դերակատարելու համար։

Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի և մանարան ֆաբրիկայի կոլեկտիվները, արձագանքելով Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրված Օրեխովո-Զուևոյի բամբակեղենի կոմբինատի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կոչին, պարտավորություն ստանձնեցին դերակատարել հետպատերազմյան առաջին հնգամյակի առաջին տարվա պլանները։

Պատասխանելով համամիութենական սոցիալիստական մրցություն կազմակերպելու մասին Հյուսիս-Դոնեցյան երկաթուղիների կոչին, Լենինականի երկաթուղայինները վերցրին կոնկրետ պարտավորություններ։

Լենինականի կոշիկի, կարի, տրիկոտաժի ֆաբրիկաների բանվորները, պատասխանելով մեր երկրի առաջավոր գործարանների՝ Լենինգրադի Լենինի շքանշանակիր «Սկորոխոդ» կոշիկի ֆաբրիկայի, Մոսկվայի Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր «Կրասնայա շվեյա» կարի № 16 ֆաբրիկայի, Նոսկինի անվան զուլպայի ֆաբրիկայի բանվորների կոչին, մտան համամիութենական մրցության մեջ և պարտավորություններ ստանձնեցին հնգամյակի առաջին տարվա պլանները դերակատարելու համար։

Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ մտան նաև Լենինականի մսի պահածոների կոմբինատի, մեխանիկական, հացի, դարեջրի գործարանների, փայտամշակման և հրուշակեղենի ֆաբրիկաների, Քաղաքային Սովետի տեղական արդյունաբերության ձեռնարկությունների և արհեստակցական կոոպերացիայի արտելների կոլեկտիվները։

Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների, երկաթուղային տրանսպորտի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների 93%-ը ընդգրկվել էր սոցիալիստական մրցության մեջ[1]։ Մրցման առաջին շարքերումն էին կոմունիստները ու կոմերիտականները։ Կոմերիտականները հետապատերազմյան հնգամյակի տարեկան պլանները ժամկետից շուտ կատարելու նպատակով կազմակերպեցին կոմերիտական երիտասարդական 184 բրիգադներ։

Լենինականի աշխատավորները 1948 թ. արձագանքելով Լենինգրադի բանվոր-ծառայողների կոչին՝ հետպատերազմյան առաջին հնգամյակը չորս տարում կատարելու մասին մրցության մեջ մտան Ադրբեջանական ՍՍՌ Կիրովաբադ և Վրացական ՍՍՌ Քութայիսի քաղաքների աշխատավորության հետ։ Նրանք մրցության պայմանագրերում պարտավորություններ ստանձնեցին կատարել և գերակատարել համախառն արտադրանքի պլանը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իջեցնել ինքնարժեքը, խնայել

[1] ՍՄԿՊ Նենակոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, դ. 302, թ. 17։



Պտղաբուծական ինստիտուտի էլինիական բաժանմունքի այգուց ստացված պտուղները

հումույթը, էլեկտրաէներգիան ու վառելիքը, այդպիսով ապահովել ձեռնարկությունների եկամտաբերությունը։

Նրանք միաժամանակ կոնկրետ պայմանավորություններ ստանձնեցին քաղաքի բարեկարգման, առևտրի ծավալման, գյուղին ցույց տրվող օգնության, աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների բարելավման հարցերի վերաբերյալ։

1948 թ. փետրվարին Կիրովաբադ քաղաքի աշխատավորության ներկայացուցիչները ժամանեցին Լենինական։ Փետրվարի 24-ին կայացած քաղաքի պարտիական, սովետական, արհմիութենական ակտիվի նիստում Կիրովաբադցիների հետ միասին քննարկվեց Լենինականի աշխատավորության սոցիալիստական մրցության պայմանագիրը։ Նույն ժողովում Լենինականի աշխատավորների ներկայացուցիչները հատուկ կոչ ընդունեցին, ուղղված Հայաստանի արդյունաբերության և տրանսպորտի բանվորներին, ինժեներա-տեխնիկական աշխատողներին և ծառայողներին՝ 1948 թ. տարեկան պլանը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության տարեդարձի որը նոյեմբերի 7-ին կատարելու համար։ Լենինականցիների կոչը ջերմ արձագանք գտավ Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային տրանսպորտում աշխատող բանվոր-ծառայողների մեջ։

Ծավալված սոցիալիստական մրցության շնորհիվ 1948 թ. նոյեմբերի 7-ին Լենինականի 11 ձեռնարկություններ հրաժարվեցին պետական դոտացիայից, 7 ձեռնարկություններ դոտացիան պակասեցրին 5 միլիոն ռուբլով։ Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը, որը 1946—1947 թթ. միշտ թերակատարում էր իր պլանները, առաջին անգամ 1948 թ. տարեկան համախառն արտադրանքի պլանը կատարեց 10 ամսում, 105,9%, 1947 թ. համեմատությամբ տվեց 35,5% արտադրանքի աճ, սկսեց աշխատել առանց վնասի։

Կոմբինատը արտադրության մեջ ներդնելով մի շարք կարևոր ռացիոնալիզատորական առաջարկություններ, տվեց 3,5 միլիոն ռուբլու խնայողություն։

Շոգեքարշային և վագոնային դեպոների, կայարանի, գծի ուղեմասի և հանգույցի մյուս օբյեկտները մտան սոցմրցման մեջ՝ հնգամյակում փոխադրումների պլանները ժամկետից շուտ կատարելու, վագոնների և շոգեքարշերի շրջապտույտը արագացնելու համար։

Երկաթուղում մրցությունը լայն ծավալ էր ստացել դնացքների ընդունման և ուղարկման գրաֆիկի՝ պահպանման, վագոնների բաշխման, բեռնաթափման առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար։

№ 53 և 54 գնացքի կոմերիտական ուղեկցողների բրիգադը, հանդես բերելով չնչին հայրենասիրություն, կատարեց 150 հազար կիլոմետր վազք՝ վագոնները նորոգման համար գնացքից առանց անջատելու և տվեց 100 հազար ռուբլու տնտեսում։

1948 թ. առաջին կիսամյակի պլանը մայիսի 25-ին կատարելու համար շոգեքարշային դեպոյի կոլեկտիվը շահեց ոչ միայն Անդրերկաթուղու վարչության փոխանցիկ դրոշը, այլև ՍՍՌՄ Հաղորդակցության ճանապարհների մինիստրության և ՀԱՄԿԵ-ի փոխանցիկ կարմիր դրոշը։

Տեղական արդյունաբերության ձեռնարկությունները հս մտնելով երեք քաղաքների միջև ծավալված մրցության մեջ, 1948 թ. տարեկան պլանները կատարեցին երեք ամիս շուտ, նախորդ տարիների համեմատությամբ տալով համախառն արտադրանքի զգալի աճ։ Տեղական արդյունաբերության գծով կազմակերպվեցին կարի, կոշկեղենի և բարձրորակ կահույքաբանների անհատական ու մասսայական պատվերների նոր արհեստանոցներ։

Արձագանքելով Մոսկվայի 35 առաջավոր արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների կոչին, տեղական արդյունաբերության ձեռնարկությունները մեր երկրին տվին կես միլիոն ռուբլու արտապլանային արտադրանք։

Լենինականի տեքստիլ կոմբինատի մանող բանվորուհի, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Մ. Խաչատրյանը, նախամանող բանվորուհի Ե. Զալատարյովան, Լենգէսի մեխանիկ, Լենինի շքանշանակիր Ա. Ժամկոչյանը,

մանարան ֆաբրիկայի առաջավոր բանվորուհի, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Ա. Արսենյանը, մեխանիկական դարձարանի ձուլող Ա. Հովհաննիսյանը, շոգեքարշային դեպոյի վարպետ, Լենինի շքանշանակիր Հ. Պետրոսյանը, մեքենավար Մ. Արուլովան, դեպոյի փականագործ Պ. Ջեյրանյանը, կաթսայագործ Մ. Անուշյանը, ներկարար Ս. Հակոբյանը, Չկալովի անվան կարի ֆաբրիկայի կարող բանվորուհիներ Ա. Հակոբյանը, Մ. Մելիքմանյանը և ուրիշները, կատարելով իրենց հնգամյա պլանը, աշխատում էին 1951 թ. հաշվին։

Լենինականի արտադրական ձեռնարկությունների առաջավոր բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, լինելով Մոսկվայի, Լենինգրադի, Խարկովի, Կիևի, Բաքվի, Իվանովոյի, Կիրովաբադի և Քութայիսիի առաջավոր ձեռնարկություններում, ուսումնասիրելով նրանց հարուստ փորձը, բարձրացրին իրենց ձեռնարկությունների արտադրական կարողությունը և արտադրանքի որակը։

Լենինականի աշխատավորներն իրենց հերոսական աշխատանքով կատարելով հետպատերազմյան հնգամյակի երրորդ վճռական տարվա տարեկան պլանները, ամենայն իրավամբ արժանացան համաժողովրդական փառքի և մեծարանքի։ «Սովետական Հայաստան» թերթն իր առաջնորդողում, ՀԿ(բ) Պարտիայի XIV համագումարի բացման նախօրյակին, գրում է. «Լենինականի աշխատավորները 1948 թ. հոկտեմբերի 31-ին, խոստացած ժամկետից 7 օր շուտ կատարեցին իրենց ստանձնած պարտավորությունները։ Քաղաքի արդյունաբերական և տրանսպորտի ձեռնարկությունները 10 ամսում լրիվ ավարտեցին տարեկան պլանի կատարումը, անցած նույն ժամանակաշրջանի համեմատությամբ տվեցին 40% ավելի արտադրանք, 10,8% էլեկտրաէներգիայի խնայողություն և ինքնարժեքը իջեցրին 3,2%»։ Արտադրանքի ինքնարժեքի իջեցումից առաջացած խնայողական ընդհանուր կուտակումը կազմեց 9 միլիոն ռուբլուց ավելի[1]։

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ։ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, գ. 339, թ. 31։

Այսպիսով, Լենինականի աշխատավորները կատարեցին և գերակատարեցին թե՛ պետական դոտացիաներից հրաժարվելու և թե՛ արտապլանային կուտակումներ ստեղծելու մասին իրենց ստանձնած պարտավորությունները։ Մինչև 1948 թ. հոկտեմբերի 25-ը 130-ից ավելի բանվորներ կատարեցին իրենց հնգամյա պլանը, իսկ 1600 բանվորներ աշխատում էին 1949—1950 թթ. հաշվին[1]։

Անդրկովկասյան երեք քաղաքների՝ Լենինականի, Կիրովաբադի և Քութայիսիի աշխատավորների միջև կնքված սոցիալիստական մրցությունը ոչ միայն ծավալվում է, այլև ստանում է նոր ձևեր։ Մրցության մեջ են մտնում երեք քաղաքների համանման արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային հանգույցի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները։ Կիրովաբադի Ս. Օրջոնիկիձեի անվան տեքստիլ կոմբինատը մրցության մեջ է մտնում Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի հետ, Ս. Օրջոնիկիձեի անվան Լենգէսը՝ Ռիոնդէսի հետ, մսի պահածոների կոմբինատը, մեխանիկական, կարի, կոշիկի երեք քաղաքների գործարանները և երկաթուղային հանգույցները՝ նույն քաղաքների համապատասխան ձեռնարկությունների հետ։

Մրցություն ծավալվեց նաև երեք քաղաքների գործարանների առանձին ցեխերի ինհատ բանվորների միջև։ Լենինականի վագոնային դեպոյի հյուսն Թ. Վարդապետյանը մրցության մեջ մտավ Կիրովաբադի վագոնային դեպոյի հյուսն Ադիլա Ջաֆարովի հետ։ Քութայիսիի կոշիկի գործարանի ձևող բանվոր Գ. Ավուլաձեն մրցության մեջ մտավ Լենինականի կոշիկի գործարանի ձևող բանվոր Գ. Շամլյանի հետ։ Կիրովաբադի կարի ֆաբրիկայի ադրեգատի հրահանդչուհի Ալեքսանդրա Նովիկովան՝ Լենինականի Չկալովի անվան կարի ֆաբրիկայի ադրեգատի հրահանդչուհի Զ. Արզարյանի հետ և այսպես, երեք քաղաքների հարյուրավոր առաջավոր մարդիկ իրար հետ մրցում էին հնգամյակը չորս

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, դ. 330, թ. 31։

տարում կատարելու, մեր Սոցիալիստական Հայրենիքին ավելի շատ արտադրանք տալու համար։

Լենինականի տեքստիլ կոմբինատի առաջավոր բանվորներ Մ. Թումանյանը, Հ. Դավթյանը, Մ. Դեմիրճյանը եղան Մոսկվայի առաջավոր ձեռնարկություններում, անձամբ զրույց ունեցան Ստալինյան մրցանակի լաուրեատներ Զուտկիխի և Վարոշինի հետ։ Վերջիններս մոտ երեք տասնյակ տարի աշխատելով նույն ֆաբրիկայում, դառնալով իրենց գործի վարպետները, հուշակվել էին ամբողջ երկրով մեկ։ Լենինականցիները, վերապատմելով այդ առաջավոր գործարանների փորձը տեղափոխեցին իրենց մոտ։ Լենինականի բոլոր տեքստիլագործների մեջ ծավալվեց արտադրական սոցիալիստական մրցությունը գերազանց որակի համար։ Ենթավարպետ Ե. Ավետիսյանի բրիգադը ՍՍՌՄ Թեթև արդյունաբերության մինիստրության հրամանով «Գերազանց որակի բրիգադի» կոչման արժանացավ՝ գերազանց որակի բրիգադից պահանջվող ցուցանիշները կատարելու համար։ Այդ բրիգադի ջուլհակուհիներ՝ բուլերներ Թագուհի և Վարդուհի Փափազյանները, Մ. Ջուլհակյանը, սիստեմատիկ կերպով իրենց պլանները կատարում էին 160—170%։ Բազմաթիվ բրիգադներ, հետևելով նրանց օրինակին, ոչ միայն դերակատարում էին իրենց պլանները, այլև տալիս էին բարձր որակի արտադրանք։

Լենինականի տեքստիլագործները հետագա տարիներին ևս մրցության մեջ գտնվելով Կիրովաբադի և Քութայիսիի տեքստիլագործների հետ, 1949 թ. տարեկան պլանը կատարեցին ժամկետից 30 օր շուտ, պլանից դուրս տվին 12 միլիոն ռուբլու արտադրանք։ Նրանք շահեցին համամիութենական սոցմրցման մեջ երրորդ կարգի մրցանակ, իսկ 1950 թ. առաջին եռամսյակում՝ երկրորդ կարգի մրցանակ։

Մրցանակ շահելու առթիվ ՍՍՌՄ Թեթև արդյունաբերության մինիստր Ա. Կոսիգինը հեռագրում է, որ «ՍՍՌՄ Թեթև արդյունաբերության մինիստրության և ՀԱՄԿՄ-ի որոշմամբ համամիութենական սոցիալիստական մրցության մեջ 1950 թ. առաջին եռամսյակի պլանի կատարման, սարքավորման և աշ-

խատանքի արտադրողականության բարձրացման համար Լենինականի տեքստիլ կոմբինատի կոլեկտիվին տրված է երկրորդ կարգի մրցանակ։ Սրցանակի գումարը կազմում է 192 հազար ռուբլի»[1]։

Այդ պարգևը է՛լ ավելի ոգեշնչեց Լենինականի տեքստիլագործներին։ 1950 թ. պլանը ժամկետից շուտ և բարձր որակով կատարելու համար։ Նրանք հնգամյակի վերջին տարում առաջին տարվա համեմատությամբ ձեռնարկության արտադրանքը ավելացրին 231%։

Լենինականի արդյունաբերության ձեռնարկություններում և երկաթուղային հանգույցում բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը, բարելավեցին արտադրանքի որակական ցուցանիշները, արագացրին շրջանառու միջոցների շրջանառությունը։

1950 թ. մայիսին Կիրովաբադում հավաքվեցին մրցության մեջ գտնվող քաղաքների աշխատավորության ներկայացուցիչները։ Նրանք, Կիրովաբադի քաղաքային սովետի սեսիայում հանրագումարի բերելով 1949 թ. ծավալված սոցիալիստական մրցության արդյունքները, նշեցին, որ երեք քաղաքների միջև ծավալված սոցիալիստական մրցության շնորհիվ Լենինականի, Կիրովաբադի և Քութայիսիի արդյունաբերական ձեռնարկությունները ընդհանուր առմամբ կատարել են տարեկան պլանները, բարձրացրել են աշխատանքի արտադրողականությունը, իջեցրել ինքնարժեքը, խնայել հումքը, էլեկտրաէներգիան, բարելավել են արտադրանքի որակը։

Քութայիսիի մետաքսագործները մեր Հայրենիքին տվել էին 13 միլիոն ռուբլու, Լենինականի տեքստիլագործները՝ 8,5 միլիոն ռուբլու, Կիրովաբադի տեքստիլագործները՝ 5 միլիոն ռուբլու արտապլանային արտադրանք։

Արտադրական ձեռնարկություններում, ինչպես նաև տրանսպորտում կոմունիստներն հանդես են եկել որպես սա-

[1] Գ. Սահակյան, Մի կոմբինատի պատմություն, Հայպետհրատ, 1951 թ., էջ 37—38։

ցիալիստական մրցության կազմակերպիչներ նոր տեխնիկայի և արտադրության առաջավոր մեթոդների արմատավորման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման համար ակտիվ պայքարողներ։

Մրցության արդյունքների ստուգումից միաժամանակ պարզվեց, որ ինչպես Կիրովաբադում, Քութայիսիում, այնպես էլ Լենինականում արտադրական որոշ ձեռնարկություններ իրենց տարեկան պլանները թերակատարել են։ Մի քանի ձեռնարկություններ պլանների քանակական ցուցանիշների կատարման հետ զուգահեռաբար չեն ապահովել արտադրանքի ըստ տեսակների և նրանց որակական բարձր ցուցանիշների կատարումը։

Լենինականի Մայիսյան ապատամբության անվան տեքստիլ կոմբինատում, մանարան և գուլպա-արիկոտաժ ֆաբրիկաներում, ինչպես նաև երկաթուղային հանգույցի առանձին օբյեկտներում բանուժի մեծ հոսունություն էր նկատվում։

Մրցության արդյունքները ստուգելիս միաժամանակ արձանագրվեց, որ երկաթգծերի մրցության պայմանագրերում նշված հարցերից անբավարար են կատարվում կոմունալ շինարարության գծով ստանձնած պարտավորությունները, բանվոր-ծառայողների կուլտ-կենցաղային պայմանները բարելավելու հարցերը։

Երկաթգծերի սոցիալիստական մրցության արդյունքները ամփոփելու համար, տարեկան երկու անգամ փոխադարձ ստուգումներ էին կատարվում։ Այդ ստուգումներն անց էին կացվում Լենինականում, Կիրովաբադում և Քութայիսիում, եղբայրական երեք ժողովուրդների բարեկամության էլ ավելի ամրապնդման նշանաբանով։

* * *

Հետպատերազմյան առաջին հնգամյակի տարիներին Անդրիսվիկասյան ռեսպուբլիկաների արդյունաբերական երեք կենտրոնների՝ Լենինականի, Կիրովաբադի և Քութայիսիի միջև ծավալված սոցիալիստական մրցությունը մեծ հաջողություն-

ների հասցրեց երեք քաղաքների աշխատավորներին՝ ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի, քաղաքների բարեկարգման, աշխատավորների կենսական պայմանների բարելավման գործում։

Լենինական, Կիրովաբաթ և Քութայիսի քաղաքների աշխատավորների ներկայացուցիչների համատեղ նիստը որոշում ընդունեց սոցիալիստական մրցությունը շարունակել նաև հետպատերազմյան երկրորդ հնգամյակի տարիներին։ Նրանք, հանրագումարի բերելով անցած ժամանակաշրջանի սոցիալիստական մրցության արդյունքները, նշեցին, որ երեք քաղաքների միջև շարունակվող մրցությունում մեծ հաջողությունների են հասել Լենինականի տեքստիլ և մսի պահածոների կոմբինատների, Չկալովի անվան կարի, գուլպա-տրիկոտաժի, պարտեզի XVIII համագումարի անվան մանարան ֆաբրիկաները, Քաղաքային Սովետի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները և երկաթուղային հանգույցը։

Լենինականի մանարան ֆաբրիկան 1952 թ. պլանից դուրս տվեց մի քանի միլիոն ռուբլու մանվածք, տարբերությունները արտադրողականությունը բարձրացրեց 5,7%, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ 9,3%։ Տնտեսեց 15,3 տոննա մանվածք։

Գուլպա-տրիկոտաժ ֆաբրիկան 1952 թ. խնայողության հաշվին տվեց մի քանի հազար տասնյակ զույգ գուլպա-նասկի և տրիկոտաժեղեն[1]։

1952 թ. հունիսի 14-ին կայացավ Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային հանգույցի առաջավորների հավաք, որտեղ քննարկվեցին առաջին կիսամյակի պլանների կատարման արդյունքները։ Այդ հավաքում Լենինականի առաջավոր բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները նոր պարտավորություն վերցրին՝ արդյունաբերության, երկաթուղային հանգույցի, տեղական արդյունաբերության և արհեստագործական կոոպերա-

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1ռ, գ. 4, էջ 3։

ցիայի ձեռնարկությունների գծով երկրին տալ 10 միլիոն ռուբլու արտադրանք։

Երևան քաղաքների միջև ծավալված մրցության մեջ մեծ հաջողություններ հասան Լենինականի, Կիրովաբադի և Քութայիսիի երկաթուղային հանգույցի կոլեկտիվները, որոնք տրանսպորտի սիմիկ աշխատանքը ապահովելու, գրաֆիկը ճիշտ կիրառելու, պետական բեռներն արագ և անկորուստ փոխադրելու, շոգեքարշերի և վագոնների նորոգումները գերազանց որակով կատարելու համար, բաղմիցս պարգևատրվել են։ Լենինականի երկաթուղային հանգույցում էին գտնվում Անդրկովկասյան վարչության և Երևանի բաժանմունքի 13 փոխանցիկ կարմիր դրոշները։

Լայն շտիեռով ծավալելով սոցիալիստական մրցությունը և համառ պայքար տանելով ստանձնած պարտավորությունների կատարման համար, Լենինականի երկաթուղային հանգույցի բանվորները և ինժեներա-տեխնիկական աշխատողները 1953 թ. տարեկան պլանը կատարեցին 120%, շոգեքարշերի բոլոր տեսակի նորոգումները կատարեցին 113%։ Զգալիորեն գերակատարեցին օրական միջին վազքի նորման և տեխնիկական արագությունը։

1953 թ. Լենինականի երկաթուղային հանգույցի շոգեքարշային դեպոյում բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը։ Ինքնարժեքն իջավ 3,8%, որի շնորհիվ շոգեքարշային դեպոն երկրին տվեց մեկ միլիոն 371 հազար ռուբլու տնտեսում, իսկ նյութերի ռացիոնալ օգտագործման ու տնտեսաշվարկի կիրառման միջոցով տնտեսեց 208 հազար ռուբլի[1]։

Շոգեքարշային դեպոյի կոլեկտիվը 1953 թ. իր պլանները բարձր ցուցանիշներով կատարելու համար երկու անգամ առաջնություն շահեց համամիութենական սոցիալիստական մրցության մեջ և իր ձեռքում պահեց փոխանցիկ կարմիր դրոշը։

---

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գաղութության ինստիտուտի արխիվ, ֆ. 16, գ. 7, էջ 6։

1953 թ. մայիսին համամիութենական սոցիալիստական մրցության մեջ առաջնություն շահելու համար, ՀԱՍԿԿ-ի և ՍՍՌՄ Հաղորդակցության ճանապարհների մինիստրության փոխանցիկ կարմիր դրոշը ստացավ Լենինականի վագոնային դեպոյի կոլեկտիվը, որի տասնյակ առաջավոր բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները պարգևատրվեցին «Ստալինյան կոշի հարվածային» և «Գերազանց վագոնային» կրծքանշաններով և դրամով։

Լենինականի երկաթուղային հանգույցում իրենց երկարամյա և անբասիր աշխատանքի համար կառավարության կողմից 172 հոգի պարգևատրվեցին Լենինի շքանշանով, 71 հոգի՝ Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով, 94 հոգի՝ Աշխատանքային արիության և 60 հոգի՝ Աշխատանքային գերազանցության համար մեդալներով։

Լենինի շքանշան ստացան Վ. Զայցևցյանը, Ա. Մխիթարյանը, Մ. Գևորգյանը, Հ. Եղյանը, Փ. Զատիկյանը, Է. Ղարագյոզյանը, Տ. Սարդոյանը, Ա. Պապոյանը, Հ. Խաչատրյանը և շատ ուրիշներ։ Կրկնակի անգամ Լենինի շքանշան ստացավ անվանի մեքենավար Գ. Աբաջյանը, որը շոգեքարշն առանց նորոգման կանգնեցնելու, կատարել էր մեկ միլիոն կիլոմետր վազք։ Լենինի շքանշան ստացան նաև մի շարք առաջավոր մեքենավարներ՝ Հայլենական պատերազմի մասնակից, ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ Ս. Սատնիշյանը, անվանի մեքենավար Տ. Զարեչյանը, ծանրաբաշ դեպոյի վարողներ Լ. Ալեքսանյանը, Թ. Խաչատրյանը, Վ. Գրիգորյանը, վագոնային դեպոյի հյուսն Վ. Սկրտչյանը և շատ ուրիշներ։

Սոցիալիստական մրցության ծավալման շնորհիվ շոգեքարշային դեպոն 1955 թ. հնգամյա պլանը կատարեց չորս տարում, տվեց մեկ միլիոն ռուբլու արտապլանային կուտակում։ Դեպոյում, ունենալով սարքավորման լրիվ օգտագործման շնորհիվ, աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 12%, ինքնարժեքն իջավ 4 անգամ, 1950 թ. համեմատությամբ։ Կիրառելով Լվովի վագոնային դեպոյի աշխատանքի լավագույն փորձը, 1955 թ. Լենինականի վագոնային դեպոյում աշխատանքի արտադրողականու-

թյունը բարձրացավ 6,7%, ինքնարժեքն իջավ 9,7%, վագոնների պարապուրդները կրճատվեցին 14%, և երկրին տրվեց կես միլիոն ռուբլու արտապլանային կուտակում։

1955 թ. կայարանի կոլեկտիվը վագոնների բարձման պլանը կատարեց 141%, իսկ բեռնաթափմանը՝ 127%։

Լենինականի ուղեմասի դծի կոլեկտիվը դծի միջին նորոգման պլանը կատարեց 108%, ընթացիկ նորոգման պլանը՝ 124%, արհեստական կառույցվածքների հիմնական պլանը՝ 129%, իսկ դծի բոլոր նորոգումների պլանը՝ 128%։ Այսպիսով, Լենինականի երկաթուղային հանգույցը 1955 թ. համախառն արտադրանքի պլանը կատարեց 112%, շոգեքարշային դեպոն՝ 114,9%, վագոնային դեպոն՝ 107,1%։

Լենինականի երկաթուղային հանգույցում լայն ծավալ ստացավ ռացիոնալիզատորների շարժումը, որոնց մեջ առաջնակարգ աշխատանք էին ընկնում փականագործներ Վ. Փաշայանը, Ի. Պալյանը, Ս. Խաչատրյանը, մեխանիկական ցեխի պետ Գ. Գրիգորյանը, վագոնային դեպոյում ինժեներ, Լենինի շքանշանակիր Տ. Գյոնջյանը, Ս. Քոսոյանը, շոգեքարշային դեպոյի պետ Զ. Եղիազարյանը, կայարանի դնացք կազմող Պ. Խանոյանը, թունելի վարպետ, դծի ինժեներ Մարուսյա Միրզոյանը։ Վերջինս երկաթուղային թունելում, դծի ուռուցքները ջրի քայքայումից կանխելու նոր ձև է առաջարկել։

Մ. Միրզոյանի աշխատանքի առաջավոր փորձը տվեց տասնյակ հազար ռուբլու խնայողություն։ Այդ առաջավոր փորձը մասսայականացնելու նպատակով, 1955 թ. տպագրվում է հատուկ բրոշյուր և բաժանվում Անդրերկաթուղու օբյեկտներում։

Լենինականի շոգեքարշային դեպոյի հրահանգիչ մեքենավար, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Ա. Խաչատրյանը վաղուց արդեն մրցության մեջ էր Կիրովաբադի շոգեքարշային դեպոյի հրահանգիչ մեքենավար Հասան Խալիլովի հետ։ Նրանք, կիրառելով շոգեքարշի տեխնիկական խնամքի կազմակերպման նոր եղանակ և աշխատելով տնտեսաշվարկային մեթոդով, սահմանված պլանի դիմաց զգալիորեն երկարաձգել են շոգեքարշերի միջճախարակումային, լվացման

և վարքի ժամանակամիջոցը, խնայել են հսկայական քանակությամբ վառելանյութ։

Մրցության մեջ աշխատանքի կազմակերպման լավագույն օրինակներ են տվել Լենինականի Մայիսյան տպատամբության անվան տեքստիլ կոմբինատի գործվածքային ֆաբրիկայի ենթավարպետներ՝ Ե. Ավետիսյանը, Ե. Կիրակոսյանը, որոնք մրցում են Կիրովավանի Ս. Օրջոնիկիձեի անվան տեքստիլ կոմբինատի ենթավարպետներ Մահմեդ Նաբիևի և Զեյնալ Նիյազովի հետ։ Սրանք սերտ կապ են պահպանում միմյանց հետ, իրար հաղորդում են աշխատանքի առաջավոր փորձը։

Կենսագործելով սոցիալիստական մրցության մեջ իր ստանձնած պարտավորությունները, ենթավարպետ Ե. Ավետիսյանը, աշխատելով բարձր արտադրողականությամբ, 40 հաստոցի փոխարեն սպասարկում է 72 հաստոցի։ Նրա ղեկավարած կոմպլեկտը 1953 թ. առաջին կիսամյակի պլանը կատարելով ժամկետից շուտ, պլանից դուրս տվեց 31500 մետր գործվածք։ Առաջին տեսակի արտադրանքը նախատեսված 92,4% փոխարեն հասցվեց 98,4%-ի։

Մրցակիցների օրինակով ստասնյակ բանվորուհիներ աշխատում էին բարձր խտացմամբ, կիրառում էին տեխնիկական թերությունները և կորվածքները վերացնելու, հումքը և էլեկտրաէներգիան խնայելու նոր ձևեր ու եղանակներ։

Սոցիալիստական մրցության ծավալման համար սիստեմատիկ կապեր են ստեղծվել Քուբայլիսի կարի ֆաբրիկայի նորարար բանվորուհի Ի. Ջավախիձեի և Լենինականի Չկալովի անվան կարի ֆաբրիկայի բանվորուհի Վ. Գյոդակյանի միջև։ 1953 թ. նրանք հանդիպում ունեցան և պատմեցին իրենց նորարարական աշխատանքի փորձի մասին։

Երևք քաղաքների մրցությանը մասնակցում էին նաև Լենինականի Քաղաքային Սովետի գործկոմի տնտեսական արդյունաբերության ձեռնարկությունների կոլեկտիվները, որոնք կատարեցին 1952 թ. տարեկան պլանները։ 19% բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը և երկրին տվին մոտ մեկ միլիոն ռուբլու լրացուցիչ արտադրանք։

Լենինականի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները 1955 թ. հնգամյա պլանը կատարեցին 182%, երկրին 12,5 միլիոն ռուբլու արտադրանքի դիմաց տվեցին 23 միլիոն ռուբլու արտադրանք։ Ինքնարժեքը իջեցրին 25%։

Տեղական արդյունաբերության ձեռնարկությունները նոր տարբերակներ տեղադրելու շնորհիվ աշխատանքի արտադրողականությունը բարձրացրին 41%։

Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային տրանսպորտում խոշոր աշխատանք են կատարել կոմերիտականները։ Նրանք հերոսական պայքար էին ծավալում արտադրական պլանների բարձրորակ կատարման համար։

1955 թ. քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային տրանսպորտում աշխատող 5600 կոմերիտականների մի մասը, պատվով կատարելով իր հընդամյա պլանը, աշխատում էր 1956 թ. հաշվին։

Գործարաններում, ֆաբրիկաներում կազմակերպված 205 գերազանց որակի կոմերիտական բրիգադները ոչ միայն կատարել են իրենց պլանները, այլև տվել են բարձր որակի արտադրանք, դրանցից հարյուրավոր կոմերիտականներ և կոմերիտուհիներ պարգևատրվել են ՀԱՄԼԿԵՄ և ՀԼԿԵՄ Կենտկոմների Պատվոգրերով։

1954 թ. հունիսին լրացավ Լենինականի Մայիսյան ապրանքատարության անվան տեքստիլ կոմբինատի հիմնադրման 30 տարին։ Այդ երեք տասնամյակների ընթացքում խոշոր հաջողություններին են հասել Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորներն ու ինժեներները, որոնք, տիրապետելով հայրենական առաջավոր տեխնիկային, իրենց ստեղծագործական նախաձեռնություններով շարունակ բարելավում էին արտադրության տեխնոլոգիան, կիրառում աշխատանքի առաջավոր ձևեր ու մեթոդներ։ Կոմբինատի ֆաբրիկաները վերջին տարիներին հագեցվեցին նորատիպ սարքավորումներով։ Տեղադրվեցին հարյուրավոր տարբեր մարկայի մեքենաներ ու հաստոցներ։ Կատարելագործվեցին արտադրական շատ պրոցեսներ։ Այդ գործում իրենց խոշոր ավանդը մուծեցին կոմ-

բինատի ռացիոնալիզատորներն ու դյուտարարները։ Կոմբինատի տասնյակ բանվորներ ու ինժեներներ ամեն տարի լինելով մեր երկրի առաջավոր գործարաններում և ֆաբրիկներում, ուսումնասիրելով նրանց առաջավորների փորձը, այն արմատավորում էին իրենց կոմբինատում։

Կոմբինատի մանվածքային ֆաբրիկայի նախամանող ցեխում աշխատում է ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ Ա. Առաքելյանը։ 1942 թ. ավարտելով Լենինականի Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը, աշխատանքի է ընդունվում տեքստիլ կոմբինատում։ Նա, կիրառելով աշխատանքի առաջավոր ձևեր և մեթոդներ, իր արտադրական պլանները միշտ կատարում էր 130—140%։ Ա. Առաքելյանը 98 իլիկի փոխարեն սպասարկում է 176 իլիկ։ Նա 1953 թ. տարեկան պլանը կատարեց երկու ամիս շուտ և պլանից դուրս տվեց մի քանի տասնյակ հազար կիլոգրամ նախամանվածք։ Անվանի բանվորուհին իր մեքենաները պահում է կերազանց վիճակում, սիստեմատիկ ապահովում բարձրորակ արտադրանքի թողարկումը և աշխատում է կրկնակի խնայողմամբ։

Տեքստիլ կոմբինատի հիմնադրման օրից այնտեղ աշխատել է վարպետ Նորիկ Մակարյանը, որը շաբաթային փականագործից հասել էր դիտավոր մեխանիկի պատասխանատու աշխատանքին։ Նա մեծ հմտությամբ կատարում էր իր պարտականությունները։ Ա. Կիկոյանը, գործարան մտնելով որպես մեքենաներ յուղող բանվոր, տարեցտարի որակավորվելով, 1942 թ. նշանակվում է սանրող ցեխի պետ։ Հակոբ Թորմաջյանը սնուցիչ բանվորից աճել ու դարձել էր մեխանիկի օգնական և ապա դիտավոր մեխանիկ։

Լենինականում տեքստիլ արդյունաբերության հիմնադրման տարիներից տարբեր աշխատանքներում՝ սնուցիչ բանվորից աճել ու դարձել են այդ օբյեկտների դիկավար աշխատողներ՝ Ա. Դաղարյանը, Գ. Խաչատրյանը, Ն. Դարիբյանը, Գ. Հովսեփյանը, Վ. Շահբաղյանը, Գ. Սահակյանը, Ա. Կոստանյանը, Գ. Հովհաննիսյանը, որոնց թվում նաև տեքստիլ կոմբինատի դիրեկտոր Գ. Կարգանյանը։ Գ. Կարգանյանը իր երկարամյա և անբասիր աշխատանքով խոշոր ծառայություն

է մատուցել Լենինականում տեքստիլ արդյունաբերության զարգացման գործին։

Կոմբինատի հնագույն բանվորներից են Ս. Մանվելյանը, Ա. Ահարոնյանը, Մ. Ղարիբյանը, Ն. Մկրտչյանը, Ա. Մելիքյանը, Ն. Սերոբյանը, Հ. Ջատիկյանը, մանող բանվորուհիներ՝ Լ. Գասպարյանը, Դ. Մխիթարյանը, Զ. Հակոբյանը և շատ ուրիշներ։

Բանվորուհիներ Գ. Հովհաննիսյանը, Ս. Պետրոսյանը, Ս. Աղաբարյանը, Ա. Կոչկուրովան, Բ. Եղիկյանը, Ս. Մանուկյանը, Վ. Աբրահամյանը և ուրիշներ՝ ավելի քան հարյուր հոգի, իրենց հնդամյա պլանը կատարեցին չորս տարում և աշխատում էին 1956 թ. հաշվին։

Լենինականի տեքստիլագործները, ընդարձակելով կոմբինատի արտադրական կարողությունը և կիրառելով աշխատանքի կազմակերպման լավագույն ձևեր, 1955 թ. 1950 թ. համեմատությամբ, համախառն արտադրանքը ավելացրին 44%։

Այսպիսով, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատում 1950 թ. 1940 թ. համեմատությամբ մանվածքը ավելացավ 56%, գործվածքը՝ 16%, համախառն արտադրանքը՝ 2,3 անգամ, իսկ 1955 թ., 1940 թ. համեմատությամբ մանվածքը ավելացավ 2,3 անգամ, գործվածքը՝ 69%, իսկ համախառն արտադրանքը՝ 3,2 անգամ[1]։

1955 թ. մայիս ամսին Լենինական ժամանեց Կիրովաբադի Ս. Օրջոնիկիձեի անվան տեքստիլ կոմբինատի պատվիրակությունը։ Նրա կազմում էին գործարանի առաջավոր բանվորներ, ղեկավոր ինժեները և քաղաքի գլխավոր ճարտարապետը։ Պատվիրակությանը ղեկավարում էր Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կիրովաբադի քաղկոմի քարտուղարը։

Կիրովաբադից ժամանած հյուրերն այցելեցին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները և երկաթուղային հանգույցը։ Ծանոթացան առաջավորների փորձին, դիտե-

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 16, գ. 8, էջ 4։

ցին քաղաքում կատարված շինարարական աշխատանքները։ Նրանք քաղաքի առաջավոր բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների հավաքում հանրագումարի բերեցին 1954 թ. սոցիալիստական մրցության արդյունքները։ Առաջավորների հավաքն արձանագրեց, որ մրցության մեջ որոշակի հաջողություններ են հասել Լենինականի, Կիրովաբադի և Քութայիսիի տեքստիլագործները ու տրանսպորտի աշխատողները, որոնք կատարել ու գերակատարել են ինչպես 1954 թ., այնպես էլ 1955 թ. առաջին եռամսյակի պլանները։

Երեք քաղաքների մրցության մեջ առաջավորների շարքերում էր ընթանում Լենինականի մանարան ֆաբրիկան, որը 1954 թ. պլանից դուրս տվեց 50 տոննա համար մանված։

Լենինականի մանարան ֆաբրիկայի բանվորները, ոգևորված կիրովաբադցիների հետ ծավալած մրցության մեջ ձեռք բերած հաջողություններով, հեղափոխ պլանը կատարեցին 1955 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 35-ամյակի օրը։

Նորագույն տեխնիկայի ներդրման, ռեկորդների օգտագործման, առաջավոր փորձի արմատավորման շնորհիվ Լենինականի մանարան ֆաբրիկայում 1955 թ. 1950 թ. համեմատությամբ, համախառն արտադրանքի թողարկումը աճեց 67,4%, աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 50%։ Առաջավոր պրոֆեսիայի 61 մանածագործներ, այդ թվում Ա. Մադմանյանը, Վ. Քոչարյանը, Ա. Մանուկյանը, Ջ. Նահապետյանը և ուրիշներ, կատարելով հեղափոխ պլանի իրենց առաջադրանքը, աշխատում էին 1956 թ. հաշվին՝ բամբակյա բարձրորակ մանված արտադրելով մեր ռեսպուբլիկայի գուլպա-արիկոտաժ ֆաբրիկաների համար։

Հետպատերազմյան հնգամյակների տարիներին ծավալված մրցության մեջ խոշոր հաջողությունների հասավ Լենինականի Չկալովի անվան կարի ֆաբրիկայի կոլեկտիվը, որը 1955 թ. համախառն արտադրանքի տարեկան պլանը կատարեց 107%, երկրին տվեց 20 միլիոն ռուբլու արտադրանք, որից 1½ միլիոն ռուբլին արտապլանային կարգով։ Ֆաբրիկայի

կոլեկտիվն աշխատանքի արտադրողականությունը բարձրացրեց 8,6%, ինքնարժեքը իջեցրեց նախատեսված 3,5% փոխարեն 6,5%, միաժամանակ նա տնտեսեց մոտ 15 հազար մետր գործվածք։

Լենինականի Չկալովի անվան կարի ֆաբրիկայի առաջավորները սիստեմատիկ հանդիպումներ են ունենում մրցակից ֆաբրիկաների առաջավորների հետ և կատարում փորձի փոխանակում։

ՀԿՊ Լենինականի քաղաքային կոմիտեի պլենումը, մասնավորապես նրա բյուրոն, իր նիստերում սիստեմատիկաբար քննության է առնում քաղաքի արտադրական ձեռնարկությունների պլանների կատարման հարցերը, կապված մրցող քաղաքների միջև ընդունված պարտավորությունների կատարման հետ։ Այդ կապակցությամբ Քաղկոմի կողմից ուսումնասիրվեցին և բյուրոյում լսվեցին հետ մնացող արտադրական օբյեկտների ղեկավարների զեկուցումները։ Ձեռնարկվեցին միջոցառումներ, այդ ձեռնարկությունները առաջավորներին հասցնելու համար։

Քաղաքային կոմիտեի[1] բյուրոն այդ ուղղությամբ ձեռք բերած հաջողությունները նշելով, միաժամանակ շեշտեց, որ ստանձնած պարտավորությունների մեջ անբավարար են կատարվել քաղաքի բարեկարգման, բնակարանային շինարարության, կյուղին ցույց տրվող օգնության, աշխատավորների կոմունալ սպասարկման աշխատանքները։ Այդ աշխատանքներն առաջիկայում ինչպես Լենինականի պարտիական կազմակերպությունների, սովետական օրգանների, այնպես էլ քաղաքի ողջ աշխատավորների կարեորագույն խնդիրները դարձան։

* * *

Հետպատերազմյան հնգամյակների տարիներին խոշոր շինարարական աշխատանքներ ծավալվեցին ինչպես ողջ երկ-

[1] Լենինականում գրպես քաղաքային կոմիտեի քարտուղարներ աշխատել են ընկ. ընկ. Ա. Անանյանը, Գ. Գուլեղինը, Դ. Մկրտչյանը, Հ. Դեմիրճյանը, Հ. Զարիբյանը, Մ. Դանիելյանը, Կ. Գրիգորյանը, Դ. Խաչիկյանը, Ս. Իսրայելյանը, Շ. Աուշանյանը, Ա. Հարությունյանը, Ղ. Բարսեղյանը, Լ. Վոլաբյանը, Ա. Ամանյանը։

բում, այնպես էլ Լենինականում։ Հիմնովին վերակառուցվեց և ընդարձակվեց Լենինականի գուլպա-տրիկոտաժի ֆաբրիկան, որն արտադրում է բամբակյա ու մետաքսյա բարձրորակ տրիկոտաժեղեն, կապրոն, գուլպա, նասկի, տրիկոտաժ-սպիտակեղեն, վերնազգեստ և սպորտային համազգեստ։

Ֆաբրիկայի վերակառուցմանը զուգընթաց խոշոր աշխատանք կատարվեց արտադրական ցեխերը առաջնակարգ տեխնիկայով հագեցնելու ուղղությամբ։ Այժմ ֆաբրիկան համարվում է ռեսպուբլիկայի խոշոր ձեռնարկություններից մեկը՝ գուլպա-տրիկոտաժ արտադրության ձեռնարկությունների մեջ։

1953 թ. ֆաբրիկայում գերազանց որակի համար մրցում էին 40 բրիգադներ, որոնք նախատեսված առաջին տեսակի արտադրանքը 85% փոխարեն հասցրել են 94%։ 1953 թ. 1952 թ. համեմատությամբ, կանացի մետաքսյա գուլպանների արտադրությունը ավելացավ 363 հազար զույգով, կապրոն գուլպաներինը՝ 97 հազար զույգով, իսկ տղամարդու նասկիներինը 206 հազար զույգով։ 1955 թ. տարեկան պլանը կատարեցին 102%։ 1955 թ. 1950 թ. համեմատությամբ, ֆաբրիկայի արտադրանքը ավելացավ 2,5 անգամ։ Ֆաբրիկայում առաջավորներ են գործող ցեխում Մ. Քեշիշյանը, Հ. Խամբեկյանը, Նելկման ցեխի պետ Գ. Բիշարյանը։ Ֆաբրիկան, մասնակցելով երեք բաղաքների մրցությանը, միաժամանակ մրցման մեջ է Բրիլիսի տրիկոտաժ ֆաբրիկայի կոլեկտիվի հետ։

Հետպատերազմյան հնգամյակների տարիներին Լենինականի Մայիսյան ապոտամրության անվան տեքստիլ կոմբինատի ձեռնարկությունների կողքին բարձրացավ ներկող և վերամշակող ֆաբրիկայի շենքը, որը շահագործման հանձնվեց 1955 թ. սկզբներին։ Այդ ֆաբրիկայի վրա, սարքավորման հետ միասին, ծախսվեց 22 միլիոն ռուբլի։ Ֆաբրիկան կառուցված է ժամանակակից սովետական առաջավոր տեխնիկայի բազայի վրա։ Արտադրում է միտկալ, լիթ, սատին, ռիպս և այլ տեսակի նուրբ ու նախշված գործվածքներ։ Ֆաբրիկայի գործարկումով հնարավորություն ստեղծվեց կրկնա-

պատկելու տեքստիլ կոմբինատի արտադրանքի ասորտիմենտը։

Ներկող և վերամշակող ֆաբրիկայի առաջավորների մեջ առավել աչքի են ընկնում սոցիալիստական ցեխի վարպետներ՝ նեղոգաթիռ Պ. Խոզանյանը, Գ. Այդոսյանը, վարպետ Գ. Աթոյանը, խոտանող Մ. Սիմոնյանը, բանվորներ Վ. Զախալյանը, Մ. Սողոմոնյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց պլանները միշտ դերակատարում են ու տալիս բարձր որակի արտադրանք։ Այս ֆաբրիկայում կան բազմաթիվ ռացիոնալիզատորներ՝ Ն. Կուխարսկայան, բանվոր Գ. Մանվելյանը, ինժեներներ Ալեքսանդր Սայորիկինը, Մ. Սահակյանը և ուրիշներ։

1948 թ. Լենինականում շահագործման հանձնվեց հեծանիվի գործարանը, որի վրա նախատեսված էր ծախսելու 26 միլիոն ռուբլի, մինչև այժմ ծախսված է 5 միլիոն ռուբլի։ Գործարանն արտադրում է մանկական 2—3 անիվանի հեծանիվներ։ Լենինականից մի քանի տասնյակ բանվորներ և ինժեներներ, մեկնելով Ուկրաինա, իրենց արտադրական-տեխնիկական ուսուցումը ստացան Խարկովի հեծանիվի գործարանում։ Նրանք ամեն տարի լինում են Մոսկվայի առաջավոր գործարաններում, որոնց աշխատանքի լավ փորձը տեղափոխում են իրենց ձեռնարկությունը։

Մինչև 1951 թ. Լենինականի հեծանիվի գործարանը մի շարք մասեր ստանում էր Ուկրաինայից։ 1952 թ. սկսած նա անցավ ինքնուրույն աշխատանքի և երկրին տվեց քսանհինգ հազար մանկական հեծանիվ։

Վերապլանավորելով ցեխերի աշխատանքը և տեղադրելով հայրենական նոր սարքավորում, գործարանը 1952 թ. եռապատկեց իր արտադրանքը, տալով 70 հազար հեծանիվ, իսկ 1955 թ. 85 հազար մանկական հեծանիվ։ Առաջիկա տարիներին նոր արտադրական կոլեկտիվի կառուցումով նախատեսվում է արտադրել տարեկան հարյուր հազար ճանապարհային հեծանիվ՝ մեծահասակների համար։

Գործարանը հնապատերազմյան երկրորդ հնգամյակի տարիներին մրցության մեջ է դանվում Լիտվական ՍՍՌ-ի

Շաուլյայի հեծանիվի գործարանի հետ։ Մրցության մեջ առաջավորներ են գործիքային ցեխի խառատ, Հայկական ՍՍՌ Գերազույն Սովետի դեպուտատ Ռ. Պասոյանը, նիկելապատող ցեխում՝ Ֆ. Օիգանյանը, մեխանիկական ցեխում՝ ավագ վարպետ Մ. Հարությունյանը, որոնք իրենց պլանները կատարում են 160—180%։

Հետպատերազմյան տարիներին խոշորացավ և նոր տարբավորումներով հարստացավ Լենինականի մեխանիկական գործարանը, որը տարեկան տալիս է 7 միլիոն ռուբլու դյուզատնտեսական գործիքներ, քար տաշող մեքենաներ, սղոցող դազդահներ, մահճակալներ և այլ իրեր։

Շինարարությունը գործարանային դետալներով ապահովելու նպատակով, 1955 թ. սկզբներին քաղշինտրեստը Լենինականում կազմակերպեց հավաքովի երկաթ-բետոնի շինարարական դետալների գործարան, որն իր մեջ միավորում է նախկին շինանյութերի կոմբինատը և հրակայուն ապրյուսի գործարանը։ Գործարանը թողարկում է տարբեր չափերի սնամեջ հեծաններ, միջհարկային և միջնորմային սալիկներ, ինչպես նաև մոզաիկ աստիճաններ։

Արդյունաբերության աշխատողների Մոսկվայում կայացած համամիութենական խորհրդակցությունը ժողովրդական սպառման ապրանքներ արտադրող ձեռնարկությունների բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների առաջ խնդիր դրեց էլ ավելի արագորեն տիրապետել առաջավոր ձեռնարկությունների արտադրության նորարարների աշխատանքի մեթոդներին, բարձրացնել տարբավորման յուրաքանչյուր միավորից ստացվող արտադրանքի քանակը, խնայողաբար օգտագործել հումքը, էլեկտրաէներգիան, ավելացնել լայն սպառման ապրանքների թողարկումը, բարելավել նրանց որակը և ավելացնել ասորտիմենտը։

Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները պայքար ծավալեցին այդ խնդիրների կատարման համար։

1945—1955 թթ. Լենինականի մոտ-պահածոների կոմբինատի արտադրական կարողությունը ավելացավ։ Կոմբինատ-

Մեքսիկի կոմունիստական գործչուհուն Ֆաբրիկայում հայրենական Նոր սարքավորման տեղադրումը

տում ստեղծվեցին պահածոների, թիթեղատուփերի, լայն սպառման տարբերանների արտադրության նոր ցեխեր, խոզաղիրացման նոր կետ, երեք-չորս անգամ մեծացավ սառցարանի կարողությունը։ Կոմբինատը զբաղվում է խոշոր ու մանր եղջերավոր անասունների և թռչունների մսի վերամշակմամբ, արտադրում է բազմատեսակ երշիկեղեն և մսի պահածոներ։ Կոմբինատի տարեկան արտադրանքը հասնում է մի քանի տասնյակ միլիոն ռուբլու։ Լենինականի մսի կոմբինատի կոլեկտիվը մրցության մեջ է Կիրովականի և Երևանի մսի կոմբինատների կոլեկտիվների հետ։ Սրցության մեջ իրենց ստանձնած պարտավորությունները գերազանց են կատարում երշիկի ցեխում Հ. Բախմախչյանը, հսկիչնադարձ հայր և որդի Մ. և Ղ. Կարապետյանները, ուկրաինուհի Ժ. Սուրինան, թիթեղյա տուփերի ցեխում՝ Ն. Սեդինոկայան և շատ ուրիշներ։

Հետպատերազմյան հնդամյակի տարիներին ամբողջովին վերակառուցվեց և մի շարք նոր ցեխերով ընդարձակվեց Լենինականի հրուշակեղենի ֆաբրիկան, որը յուրացրեց կարամելի արտադրությունը։

Հիմնովին վերասարքավորվեց Լենինականի դարեջրի գործարանը, որը տարեկան արտադրում է 35—40 հազար հեկտոլիտր դարեջուր։

1954 թ. մայիսին շահագործման հանձնվեց Լենինականի կաթի գործարանը, որի վրա ծախսվել էր մոտ վեց միլիոն ռուբլի։ Գործարանն իր կարողությամբ օրական քսան տոննա կաթից վերամշակում է զանազան տեսակի կաթնամթերքներ։

Ընդարձակվեց Լենինականի ապակու արտադրական կոմբինատը, որը շահագործման էր հանձնվել դեռևս պատերազմի տարիներին։ Հետպատերազմյան հնդամյակի տարիներից կոմբինատը թողարկում է տնային գործածության ապակյա իրեր, լամպի ապակիներ, էլեկտրալուսամփոփներ և այլն։ Արտադրական կոմբինատի բանվորները, ծավալելով սոցիալիստական մրցությունը, 1953 թ. տվեցին 1.300 հազար ռուբլու, իսկ 1955 թ. 1,5 միլիոն ռուբլու արտադրանք։

Լենինականի ինչպես հին արդյունաբերական ձեռնարկություններում, այնպես էլ նոր սարքավորումներ դրվող և վերա-

կատարվող գործարաններում ու ֆաբրիկաներում առաջավոր դերը պատկանում է կոմունիստներին և կոմսոմոլականներին։ Նրանք ոչ միայն նոր սարքավորման տեղադրման, այլև այդ նոր տեխնիկայի տիրապետման, աշխատանքի արտադրողականության բարձրացման կազմակերպիչներն են հանդիսանում, Նրանք իրենց էներգիայով վարակում են ձեռնարկական բանվորներին, ինժեներա-տեխնիկական աշխատողներին այդ նոր սարքավորումը ռացիոնալ օգտագործելու և ավելի շատ արտադրանք ստալու համար։

1953 թ. վերջերին ավարտվեց Սանահինից մինչև Լենինական հրկաթուղագծի էլեկտրիֆիկացումը, իսկ 1954 թ. արդեն սկսեցին աշխատել էլեկտրաքարշերը։ Այդ նպատակի համար Լենինականի երկաթուղային հանգույցում շահագործման հանձնվեց հզոր էլեկտրաենթակայանը և էլեկտրաքարշերի համար նորակառույց դեպոն (պետ ինժ. Գ. Զատիկյան), որն ունի ոչ միայն էլեկտրաքարշերի կանգառներ, այլև բազմաթիվ արհեստանոցներ՝ իրենց հարուստ սարքավորումներով։

Էլեկտրաքարշային դեպոյում ծավալվեց ծանրաքաշ գնացքների տեղափոխման շարժումը, որի շնորհիվ 1000 տոննա տեղափոխող գնացքների կարողությունը հասավ 1500 տոննայի։ Առաջավոր ծանրաքարշայինները 1955 թվականին շահեցին Անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի փոխանցիկ կարմիր դրոշը։ Մեքենավարների մեջ առավել աչքի են ընկնում էլեկտրակնացքի անվանի ավագ մեքենավարներ Ա. Պետրոսյանը, Ս. Միքայելյանը, Ա. Նիկողոսյանը, Մ. Հովհաննիսյանը, Ռ. Նիկողոսյանը և ուրիշներ։

Լենինականի էլեկտրադեպոյում առաջավորներ են Ա. Սահակյանը, Մ. Մարտիրոսյանը, Հ. Մայակյանը, աչքի ընկնող ռացիոնալիզատորներ են վարպետներ Ա. Գյուլեցյանը, Ն. Մուրադյանը, ինժեներ Վ. Գրիգորյանը և ուրիշներ։

Հեռապատերազմյան հնգամյակի տարիներին ընդարձակվեցին և արդյունաբերական մեծ ձեռնարկություններ դարձան արհեստագործական կոոպերացիայի Լենինականի բազմաթիվ արտելներ։

Նախկին մետաղամշակման արտելի բազայի վրա կազմակերպվեց Նահումյանի անվան մեխանիկական խոշոր ձեռնարկությունը, որն ունի մահճակալների հավաքման, ձուլման, նիկելապատման, թիթեղի, պրոշման, մեխանիկական ցեխեր և դարբնոց։ Այդտեղ աշխատում են մոտ 200 հոգի, որոնք տարեկան տալիս են 6,5—7 միլիոն ռուբլու արտադրանք։

Արհեստագործական կոոպերացիայի Լենինականի 17 ձեռնարկությունները 1954 թ. տարեկան պլանը կատարեցին 107,5%։ Նրանց տված արտադրանքը կազմում էր քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի [illegible]։

Լենինականի արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները 1955 թ. պլանը կատարելով 104,9%, երկրին տվեցին մոտ 80 միլիոն ռուբլու արտադրանք։

Այսպիսով, Լենինականի բանվորները ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ ու օգնությամբ, համառ ու հետևողական պայքար ծավալելով հետպատերազմյան հնգամյակների պլանների կատարման համար, մեր երկրին 1950 թ. տվեցին 460 միլիոն ռուբլու, իսկ 1955 թվականին՝ 640 միլիոն ռուբլու համախառն արտադրանք։ 1955 թ. արտադրանքը 1950 թ. համեմատությամբ, աճեց մոտ 30%[1]։

*

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներից սկսած Լենինականի պարտիական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում միշտ եղել է գյուղին ցույց տրվող օգնությունը։ Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների բանվոր-ծառայողների կոլեկտիվները, վերցնե-

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 16, ց. 4, էջ 3։

լով առանձին գյուղերի շեֆությունը, գնահատելի օգնություն են կազմակերպել՝ գյուղատնտեսական գործիքների վերանորոգման, գարնանացանի ու բերքահավաքի աշխատանքներին։ Սիստեմատիկ կերպով գյուղերն այցելելով, կազմակերպել են պատախոսություններ, ելույթներ, հանդիպումներ կոլտնտեսականների հետ, միաժամանակ նրանց համար տարել են գրականություն և զանազան կուլտուրական տպրանքներ։

Լենինականի արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ, վերցնելով Ախուրյանի, Ամասիայի, Արթիկի, Ազինի, Ղուկասյանի շրջանների կոլտնտեսությունների շեֆությունը, օգնեցին այդ շրջանների գյուղերի էլեկտրիֆիկացման աշխատանքներին։

Գյուղին ցույց տրվող օգնություն Լենինականի սպարտիական և կոմերիտական կազմակերպությունների կողմից էլ ավելի ուժեղացվեց ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան, 1954 թ. Փետրվար-Մարտյան, 1955 թ. Հունվարյան պլենումների որոշումներից հետո, երբ սոցիալիստական գյուղատնտեսության շեշտակի վերելքի հարցը դարձավ համաժողովրդական գործ։

Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային հանգույցում աշխատող բազմաթիվ մասնագետներ՝ մեխանիկներ, կոմբայնավարներ, գյուղատնտեսներ, տրակտորիստների և գյուղատնտեսության այլ մասնագետներ մեկնեցին գյուղ մշտական աշխատանքի։

Գյուղատնտեսության շեշտակի վերելք ստեղծելու համար, ի պատասխան Մոսկվայի կոմերիտական կազմակերպությունների կոչին, Լենինականի բազմաթիվ կոմերիտական-երիտասարդներ մեկնեցին Ղազախստան և Ալթայի երկրամաս՝ խամ ու խոպան հողերի յուրացման աշխատանքներին մասնակցելու։

ՍՄԿՊ Կենտկոմի 1955 թ. Հունվարյան պլենումի ընդունած որոշումների կենսագործման ուղղությամբ բավական աշխատանքներ են նախաձեռնել Լենինականի մեխանիկական գործարանի և տեղական արդյունաբերության ձեռնարկությունները

Ստ. Շահումյանի անվան հանգստի և կուլտուրայի պարկը

ները, որոնք գյուղատնտեսական գործիքների և կանեպան գյուղատնտեսական սարքավորման մասեր են արտադրում։

Գյուղին մեծ օգնություն են ցույց տալիս Լենինականում գտնվող գյուղատնտեսական գիտահետազոտական հիմնարկները՝ Պետական սելեկցիոն կայանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պտղաբուծական ինստիտուտի Լենինականի բաժանմունքը, որը միչուրինյան մեթոդով բերքատու ցրտադիմացիկ մրգատուների և հատապտուղների նոր սորտեր է ստանում և հաջողությամբ տարածում ռեսպուբլիկայի լեռնային շրջաններում։

1928 թ. Լենինականում գործում է Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության ռեսպուբլիկական սելեկցիոն կայանը, որը Հայաստանի լեռնային գոտիների համար ստեղծում է հացահատիկային, ընդեղենի, բանջարանոցային և խոտաբույսերի նոր սորտեր, միաժամանակ սելեկցիոն կայանը ղեկավարում է սերմնաբուծական կոլտնտեսությունների աշխատանքը, ապահովում նրանց էլիտային սերմերով, դրաղվում է դաշտային կուլտուրաների ագրոտեխնիկական փորձերով։ Այդ կոլեկտիվում երկարամյա աշխատանք են կատարում գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Գ. Դավիդովսկին, Ա. Վերնիգորը, Ն. Դարբինյանը, Կ. Ստամբոլցյանը և ուրիշներ։

Պետական սելեկցիոն կայանի կոլեկտիվը իր լավագույն աշխատանքների համար իրավունք ստացավ 1955 թ. մասնակցելու Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պտղաբուծական ինստիտուտի Լենինականի բաժանմունքի գիտական կոլեկտիվը, պտղաբույժ, բիոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Ադուլյանի ղեկավարությամբ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Պ. Կարանյանի մասնակցությամբ 20 տարիների ընթացքում ստացել են տեղական մրգերի՝ խնձորի, տանձի, սալորի, բալի նոր տեսակներ, որոնք տարածված են Հայաստանի լեռնային շրջաններում։ Փորձարկելով Միչուրինի պտղա-հատապտղային բազմաթիվ սորտեր,

նրանից առանձնացվել ու բազմացվել են լեռնային շրջանների համար հարյուրից ավելի անուշահամ սորտեր։ Այժմ Լենինականի բաժանմունքն ունի պտղա և հատապտղային կուլտուրաների մեծ հիբրիդային ֆոնդ։ Կայանն իր հենակետերն ունենալով ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում և կոլտնտեսություններում, նրանց մոտակարարում է լեռնային կլիմայական պայմաններին համապատասխան պտղա-հատապտղային անկանյութ, օգնում կոլտնտեսություններին այգիների մշակման գործում։

Գյուղատնտեսության մինիստրության կից պետական տնկարանը, որը կազմակերպվել է 1936 թ., բազմացնում է միչուրինյան սորտեր և տարածում Հայաստանի լեռնային շրջաններում։ 1949 թ. Լենինականում գոյություն ունի պատանի բնատերների կայանը, որտեղ դպրոցականները տանում են փորձնական աշխատանքներ Մ. Մուրադյանի և Լ. Ավոյանի ղեկավարությամբ։

Լենինականի բուսաբանական այգում, գյուղատնտես Ա. Բունիաթյանի ղեկավարությամբ, բարձր կլիմայական պայմաններում աճեցվում են ծառերի, թփերի, ծաղիկների տեսակներ. ինչպես նաև միչուրինյան և տեղում ստացված խաչողի նոր սորտեր։

Ռեսպուբլիկայի կոլտնտեսություններին մեծ օգնություն է ցույց տալիս Լենինականի թուչնաբուծական սովխոզը, որն ամեն տարի հարյուր հազարից ավելի ցեղական հավերի, բադերի և սագերի ճտեր է տալիս Ախուրյանի, Ալավերդու, Դիլիջանի, Ստեփանավանի և այլ շրջանների ինկուբատորային կայաններին, ինչպես նաև քաղաքի բնակիչներին։ Թռչնաբուծական սովխոզի կոլեկտիվն իր լավագույն աշխատանքի համար 1955 թ. իրավունք ստացավ մասնակցելու Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին։

Այսպիսով, Լենինականի աշխատավորները, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, հետպատերազմյան հընթացքում բարձրացրին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային տրանսպորտի օբյեկտների արտադրական կարողությունը։ Վերակառու-

ցեցին և ընդլայնեցին մի շարք ձեռնարկություններ, շահագործման հանձնեցին տասնյակից ավելի նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, կատարեցին ու գերակատարեցին հնգամյակների պլանները։ Միաժամանակ Լենինականի աշխատավորները օգնություն ցույց տվին գյուղին՝ պարտիայի և կառավարության կողմից ընդունված որոշումները կենսագործելու, գյուղատնտեսության շեշտակի վերելքի գործին նպաստելու համար։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԸ

Սովետական կարգեր ստեղծվելուց հետո՝ ինչպես նախապատերազմյան, այնպես էլ հետպատերազմյան հընդամյակների տարիներին, բարձր տեմպերով զարգացնելով ծանր արդյունաբերությունը, սովետական էկոնոմիկայի հիմքերի հիմքը, մեր երկրում լայն հնարավորություններ ստեղծվեցին քաղաքի և գյուղի աշխատավորների հարատև պահանջները բավարարելու համար։

ՍՄԿՊ միշտ էլ անդուլ հոգատարություն է ցուցաբերել մեր երկրի աշխատավորների նյութական ու կուլտուրական պահանջմունքների բավարարման նկատմամբ։ Սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման ասպարեզում ձեռք բերված վիթխարի հաջողությունները մեծ չափերով բարձրացրեցին սովետական ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակը, որն իր տրամահայտությունը գտավ ազգային եկամտի անընդհատ աճի, մասսայական սպառման ապրանքների դների սիստեմատիկ իջեցման, բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձի և կոլտնտեսականների եկամուտների բարձրացման մեջ։ Տարեցտարի պետական բյուջեում աճում են քաղաքների և շրջանային կենտրոնների կոմունալ ու բնակարանային շինարարության, սոցիալ-կուլտուրական, ժողովրդական լուսավորության և առողջապահության համար կատարվող ֆինանսական հատկացումները։

Դրամական ռեֆորմ անցկացնելու, պարենային ու արդյունաբերական ապրանքների քարտերի վերացման մասին,

Սովետական կառավարության 1947 թ. դեկտեմբերի 14-ի որոշման կենսագործմամբ, ինչպես նաև պարենային ու արդյունաբերական ապրանքների գների սիստեմատիկ իջեցմամբ, մասսայական լայն սպառման ապրանքների արտադրությամբ, հնգամյակների տարիներին անընդհատ ընդարձակվում է սովետական առևտուրը, արագացվում է ապրանքաշրջանառությունը։

ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան, 1954 թ. փետրվար-մարտյան պլենումների և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի ընդունած համապատասխան որոշումները մեծ հեռանկարներ են բաց անում գյուղատնտեսության շեշտակի վերելքի, ժողովրդական մասսաների կենսամակարդակի բարձրացման մեր առաջընթացի համար։

Հայկական ՍՍՌ-ում ժողովրդական տնտեսության զարգացման բազայի վրա զգալիորեն բարելավվել են Հայաստանի աշխատավորների նյութական պայմանները, բարձրացել է Հայաստանի բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձը, ավելացել են կոլտնտեսային գյուղացիության եկամուտները։

Ռեսպուբլիկայում խոշոր աշխատանքներ են կատարվել ժողկրթության, առողջապահության, կոմունալ և բնակարանային շինարարության գծով։ Եթե 1945—1950 թթ. ռեսպուբլիկայում բնակարանային շինարարությանը հատկացվել էր 376,1 միլիոն ռուբլի, ապա 1950—1955 թթ. հատկացվել էր 557,9 միլիոն ռուբլի[1]։

Հայկական ՍՍՌ 1955 թ. պետական բյուջեի 1.220 միլիոն ռուբլի գումարից, ժողովրդական տնտեսության ֆինանսավորմանը հատկացվել էր 298 միլիոն ռուբլի, որից արդյունաբերության ֆինանսավորմանը՝ 53 միլիոն, գյուղատնտեսությանը՝ 93 միլիոն, քաղաքների և շրջանային կենտրոնների կոմունալ և բնակարանային շինարարությանը՝ 84 միլիոն ռուբլի, իսկ սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինան-

[1] Տվյալները վերցված են Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչությունից։

սավորմանը հասնեցվել է 808 միլիոն ռուբլի, որը կազմում է բյուջեի 67 տոկոսը[1]։

Հայկական ՍՍՌ պետական բյուջեն, որը կազմում է ՍՍՌՄ պետական բյուջեի բաղկացուցիչ մասը, արտացոլում է տնտեսության և կուլտուրական շինարարության բնագավառում ձեռք բերված խոշոր հաջողությունները։

Սովետական ժողովրդի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի անշեղ վերելքի փայլուն ապացույցներից մեկն է Հայաստանի, այդ թվում Լենինականի աշխատավորների կենսամակարդակի բարձրացումը, ինչպես բանվոր-ծառայողների թվական կազմի, այնպես էլ աշխատավարձի ֆոնդի աճումը, առողջապահության, ժողկրթության, քաղաքահիմնարկների ընդարձակումը բնակարանային շինարարության և սովետական առևտրի լայն ծավալումը։

Լենինականում բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման հետ միասին, տարեցտարի աճել ու որակավորվել են հիմնարկ-ձեռնարկություններում աշխատող բանվոր-ծառայողները։ 1913 թ. քաղաքում եղել է 560 բանվոր, 1923 թ. 2593 բանվոր և 2270 ծառայող[2], 1947 թ. 10.500 բանվոր, 9405 ծառայող, 1950 թ. 14,172 բանվոր և 8780 ծառայող, իսկ 1955 թ. 19775 բանվոր, 9100 ծառայող[3]։

Վարչա-տնտեսական ծախսերի կրճատման, պետական ապարատի էժանացման ուղղությամբ ձեռնարկած պարտիայի ու կառավարության միջոցառումների շնորհիվ տարիների ընթացքում ինչպես ռեսպուբլիկայում, այնպես էլ Լենինականում փոխվել է բանվոր-ծառայողների քանակական հարաբե-

---

[1] «Սովետական Հայաստան», 1955 թ., 8 ապրիլի, № 83։

[2] Ծառայողների շատ լինելը բացատրվում է նրանով, որ 1923 թ. Լենինականում էր գտնվում Լենգավգուբերնիան և ամենրիկյան սրբանոցներն իրենց ծառայողների անձնակազմով։

[3] Հայկական ՍՍՌ Դ.Ա. Պետության ինստիտուտի արխիվ, ֆ. 16, գ. 7, էջ 3։

թությունը։ Արտադրության ոլորտում աշխատողների թիվը աճել է ավելի արագ, քան ոչ արտադրական ոլորտի աշխատողների թիվը, մի բան, որ օրինաչափ է մեր սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման համար։

Լենինգրադի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային հանգույցում Սովետական իշխանության տարիներին աճեցին տեխնիկական ինտելիգենցիայի բարձր և միջին որակի կադրեր, որոնք ջանք չեն խնայում աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Արդյունաբերական ձեռնարկություններում կատարվող գյուտարարական և ռացիոնալիզատորական աշխատանքներին մասնակցում են առաջավոր բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, որոնք տեխնիկայի արմատավորման միջոցով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը և բանվորների նյութական կենսամակարդակը։

Գիտության նվաճումների կիրառումը, սոցիալիստական մրցության ծավալումը, առաջավորների փորձի փոխանակումը հզոր լծակներ են Լենինգրադի բանվոր-ծառայողների նյութական բարեկեցության բարձրացման, քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում և երկաթուղային տրանսպորտում առաջադրված խնդիրները լուծելու համար։

Լենինգրադի աշխատավորությանն են սպասարկում քաղաքում գործող երեք հարյուրից ավելի խանութներ, կրպակներ, հաշվարաններ և այլ առևտրական միավորումներ։ Այդ միավորումներում տարեցտարի ավելանում են պարենային ու արդյունաբերական մասսայական սպառման ապրանքների ֆոնդերը, աճում է ապրանքաշրջանառությունը, ինչպես պետական առևտրում, այնպես էլ կոլտնտեսային շուկայում։

Մեր երկրի բոլոր քաղաքացիները, այդ թվում նաև Լենինգրադի բանվոր-ծառայողները, պետությունից ստանում են զանազան նպաստներ, կենսաթոշակներ, սանատորիանների, հանգստյան տների ուղեգրեր։ Բոլոր քաղաքացիներին ցույց է տրվում ձրի բժշկական օգնություն։ Բազմազավակ ընտանիքները և միայնակ մայրերը նույնպես ստանում են

պիտական նպաստներ։ Լենինականի առողջապահական ցանցը տարեցտարի աճում է։

Լենինականում գործում են մի քանի հիվանդանոցներ՝ հազարից ավելի մահճակալով։ Բոլոր հիվանդանոցներն ունեն բազմաթիվ կաբինետներ իրենց հարուստ սարքավորումներով։ Քաղաքային Սովետի Գործկոմի առողջապահական բաժինը միաժամանակ ունի սանէպիդեմիական, շտապ օգնության կայան, երեխաների հատուկ տուն, չորս հիմնական մսուր և տասնյակ մսուրներ և մանկապարտեզներ քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններին կից։

Լենինականի տնքստիլագործները իրենց բուժումն ու հանգիստը բացի մեր երկրի տարբեր մասերում գտնվող սանատորիաներում, հանգստյան տներում և էքսկուրսիոն բազանիներում անցկացնելուց, անց են կացնում նաև տեղում կազմակերպված տնքստիլ կոմբինատին կից դիշերային սանատորիայում, որի համար պետությունն ամեն տարի կես միլիոնից ավելի դումար է հատկացնում։

1955 թ. քաղաքի առողջապահական ցանցում աշխատում էին 920 հոգի, որից մոտ երկու հարյուր հոգի բարձրագույն կրթություն ունեն[1]։ Իրենց հոդատար վերաբերմունքով քաղաքի աշխատավորության համակրանքն են վայելում վաստակավոր բժիշկներ՝ Ա. Հ. Թովմասյանը, Ա. Ա. Մելքումյանը, Ս. Ֆայենբերգը, Ա. Ա. Երամյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Ա. Ն. Դրամբյանը, Ս. Ա. Առաքելյանը, Ն. Ա. Մելիքյանը, բժիշկներ՝ Գ. Գ. Նունեցյանը, Ա. Ն. Պետրոսյանը, Ա. Մ. Թառայանը, Շ. Գ. Փայանը, Հ. Ս. Սարգսյանը, Վ. Հ. Աբաջյանը, Օ. Ա. Կիրակոսյանը, Հ. Ա. Խուդավերդյանը, Գ. Հ. Գյուլբենկյանը, Մ. Մ. Նաջանյանը, Գ. Ա. Մինասյանը և ուրիշներ։

Քաղաքում գործում են մի շարք սպորտ կամավոր ընկերություններ, դրանց տարբեր խմբակներում ընդգրկված են 15 հազար ֆիզկուլտուրնիկներ։

---

1 Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 10, գ. 7, թ. 4։



Մեկրպեն խանութ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԴՈՍ
ԱՍՍՀ ԱՌՈՒՄԻՆ

Քաղաքային Սովետը տեղական մյուս կազմակերպությունների հետ միասին տարեկան մոտ մեկ միլիոն ռուբլի գումար են հատկացնում մեր երիտասարդության ֆիզիկական դաստիարակության համար։

Լենինականի հարյուրավոր սպորտսմեններ սպորտի տարբեր ձևերից մասնակցում են ռեսպուբլիկական մրցումներին, որտեղ բազմիցս շահել են առաջնությունը։

Բանվորական յավագույն ֆուտբոլային թիմերից է տեքստիլ կոմբինատի «Կարմիր դրոշ» սպորտ ընկերության ֆուտբոլի թիմը, որը բազմիցս շահել է ընկերության կենտրոնական խորհրդի և ռեսպուբլիկայի գավաթները։

Լենինականում անվանի սպորտսմեններ են՝ ծանրության բարձրացման գծով՝ Ա. Մուրադյանը, մարմնամարզության Կ. Պետրոսյանը, Մ. Մուրադյանը, դահուկի՝ Լ. Մնացականյանը, ակրոբատիկայի՝ Գ. Մարանջյանը, սպորտի վարպետ Ավնիվ Գրիգորյանը և ուրիշներ։

* *

Հայ ժողովրդի կուլտուրան զարգանում է առաջավոր ռուսական կուլտուրայի, ինչպես նաև մեր երկրի բազմազգ ժողովուրդների ունեցած կուլտուրայի փոխադարձ հարստացման հիման վրա։ Մեր երկրի բազմազգ ժողովուրդները հասան մեծ հաջողություններ՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման ընթացքում։ Ինչպես ռեսպուբլիկայի, այնպես էլ Լենինականի պարտիական կազմակերպության աշխատանքների համար խոշոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի իդեոլոգիական հարցերի մասին, ինչպես նաև ՀԿ(բ)Պ Կենտկոմի պլենումի՝ Հայաստանի պարտիական կազմակերպություններում իդեոլոգիական աշխատանքն ուժեղացնելու միջոցառումների մասին որոշումները։ Ելնելով այդ պատմական որոշումներից, Լենինականի պարտիական կազմակերպությունը այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ կատարեց։

Պարտիական ակտիվի և քաղաքի ինտելիգենցիայի գաղափարական մակարդակը էլ ավելի բարձրացնելու նպատակով 1947 թ. հոկտեմբերին Լենինականում բացվեց Մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարան, ուր սովորում էն 300 հոգի՝ պարտիական, սովետական օրգանների և արհմիութենական ու կոմերիտական կազմակերպությունների աշխատողներ։

Հետպատերազմյան տարիներին Լենինականում բուռն թափով զարգացավ ժողովրդական կրթության գործը։

1954—1955 ուս. տարում քաղաքում գործում էր 26 մասսայական դպրոց, որից 24 միջնակարգ և երկու թերի միջնակարգ։ Նրանցում սովորում էին 19163 աշակերտ, աշխատում էին 1134 ուսուցիչներ, որոնց մեծ մասը՝ բարձրագույն և թերի բարձրագույն կրթությամբ։ Քաղաքում գործում էն ինը բանվորական դպրոց, ուր սովորում էն 2145 հոգի[1]։ Լենինականի բոլոր դպրոցները ապահովված էն լուսավոր ու գեղեցիկ շենքերով, կաբինետ-լաբորատորիաներով և դիդակտիկ նյութերով։

Մանկավարժական աշխատանքում իրենց երկարամյա և անբասիր աշխատանքի համար, Լենինականում ժողովրդական-ուսուցիչներ Ս. Հ. Խաչատրյանը, Մ. Խ. Մինասյանը, Գ. Ն. Հակոբյանը, Ս. Կ. Մարտիրոսյանը, Ն. Ա. Ծատուկյանը, Ս. Բ. Ստեփանյանը, Հ. Պ. Ավետիսյանը, Հ. Լ. Արդաբյանը, Ա. Ե. Ավետիսյանը, Ա. Հ. Ֆայրոյանը, Հ. Ա. Քալաշյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց ամբողջ ուժն ու կարողությունը ի սպաս էն դնում մատաղ սերընդի դաստիարակության մեծ ու պատվավոր գործին։

Մ. Նալբանդյանի անվան Լենինականի քառամյա մանկավարժական ինստիտուտը մեր ռեսպուբլիկայի մասսայական դպրոցների համար պատրաստում է ուսուցչական կադրեր։ Իր գոյության տասը տարիների ընթացքում տվել է հազարից ավելի շրջանավարտներ։ Այժմ ինստիտուտն ունի լեզ-

[1] Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 16, գ. 7, թ. 21

վարչական և ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետներ, հայկական և ռուսական բաժիններով, ուր սովորում են մոտ 500 ուսանողներ։ Ինստիտուտում են աշխատում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ս. Հ. Խաչատրյանը, փիլիսոփայության գիտությունների թեկնածու Մ. Մ. Մարգարյանը, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Վ. Մխիթարյանը, պատմական գիտությունների թեկնածու Զ. Ռ. Շահնազարյանը, ավագ դասախոսներ Շ. Մ. Աղնավուրյանը, Գ. Ա. Գրիգորյանը, Հ. Վ. Ղազարյանը, Հ. Գ. Հովհաննիսյանը և ուրիշներ։

Լենինականում գործում են մի շարք տեխնիկումներ և ուսումնարաններ, որոնք միջին որակի կադրեր են պատրաստում ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղավառների համար։

Երեսուն տարի է, որ գոյություն ունի Ա. Սասյանի անվան մանկավարժական ուսումնարանը, որը եղեք տասնամյակների ընթացքում տվել է 2200 շրջանավարտ։ Այժմ մանկավարժական ուսումնարանի հայկական և ռուսական բաժինների 10 խմբերում սովորում են 200-ից ավելի ուսանող-ուսանողուհիներ։

Ս. Մ. Կիրովի անվան կաթնարդյունաբերական տեխնիկումում սովորում են 350 հոգի, որոնք դառնալու են կաթնամթերքների արտադրության տեխնոլոգներ։ 1954—1955 ուս. տարում տեխնիկումի մոտ 100 շրջանավարտներ աշխատանքի նշանակվեցին Ղազախստանի, Խարարովսկի երկրամասի, Հարավային Սախալինի, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կաթնամշակման գործարաններում։ Այս տեխնիկումի հնարավորությունները ավելի քան ընդարձակվեցին, երբ 1954 թ. նրան կից տերիտորիայում շահագործման հանձնվեց կաթի գործարանը, ուր իրենց պրակտիկ աշխատանքներն են անցկացնում ապագա տեխնոլոգները։

Դաշտավարական տեխնիկումը, որը երկար տարիներ գոյություն ունի Լենինականում, մեր երկրի սոցիալիստական գյուղատնտեսության համար պատրաստում է կրտսեր գյուղատնտեսներ, որոնք աշխատանքի են մեկնում ռեսպուբլի-

կայի ՄՏԿ-ներն ու կոլտնտեսությունները իրրև կրոսեր դաշտավարներ։

1932 թ. գոյություն ունի երկաթուղային տեխնիկումը, ցերեկային և դիշերային բաժիններով։ Այդ տեխնիկումը Անդրերկաթուղուն տվել է հազարից ավելի շրջանավարտներ։

1951 թ. Լենինականում, տեքստիլ կոմբինատին կից բացվեց դիշերային տեքստիլ տեխնիկումը և պրոֆտեխնիկական դպրոցը, ուր առանց արտադրությունից կտրվելու սովորում են տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների 400-ից ավելի բանվորներ։ Բացի այդ, Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատին, գուլպա-տրիկոտաժ ֆաբրիկային, մսի սպահածոների կոմբինատին և երկաթուղային հանգույցին կից գործում են չորս ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ։

1954 թ. իր գոյության 30-ամյակը նշեց Լենինականի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը։ Ուսումնարանն ունի դաշնամուրային, վոկալ, լարային և այլ բաժիններ, ուր սովորում են մոտ 200 հոգի։

Երաժշտական ուսումնարանի մի քանի շրջանավարտներ, ավարտելով Երևանի Կոնսերվատորիան, այժմ նույն ուսումնարանում դասատուներ են։ Դրանցից են արվեստի վաստակավոր գործիչ Ք. Երանոսյանը, Գ. Գևորգյանը, Ա. Մեքինյանը, Դ. Փանյանը, Հ. Երանոսյանը, Զ. Սարգսյանը և ուրիշներ։

Բացի երաժշտական ուսումնարանից, Լենինականում գործում է Ն. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցը, ուր սովորում են մի քանի հարյուր շնորհալի երեխաներ։

Լենինականի Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոցը իր գոյության տարիներին տվել է մոտ 400 շրջանավարտներ։ Այդ շրջանավարտների մի մասը, սովորելով և ավարտելով Երևանի, Թբիլիսիի, Մոսկվայի և Լենինգրադի նկարչական ակադեմիաներն ու ինստիտուտները, դարձել են շնորհալի նկարիչներ։ Դրանցից են՝ Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերը, Խ. Սասյանը, Կ. Մինասյանը, Մ. Սվազյանը, Վ. Կարապետյանը, Կ. Սիմոնյանը, Հ. Ռուխկյանը, Ս. Ստեփանյանը, Կարո և Մկրտիչ Տիրատուրյան եղբայրները, Մ. Կարա-

պետյանը, Ռ. Սարգսյանը։ Երգչանավարտներ Շ. Սարգսյանը, Հ. Անանիկյանը այժմ նույն դպրոցում իբրև դասատուներ են աշխատում։

Լենինականում ստեղծվել է քաղլուսհիմնարկների լայն ցանց։ Քաղաքում գործում են 59 դրադարան, մեկ դավառագիտական թանգարան և երկու կինո թատրոններ։ Դրադարանների գրքային ֆոնդը հասնում է մոտ 390 հազարի[1]։ Քաղաքի կենտրոնական դրադարանը կոչվում է հայ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի անունով։

Քաղաքում կան տասը բանվորական ակումբներ և պիոների պալատը, երկաթուղայիններին Ե. Սեյանի անվան կուլտուրայի պալատը, տեքստիլի և մսի պահածոների կոմբինատների, մանարան ֆաբրիկայի բանվորական ակումբները, Հայֆիլհարմոնիայի ֆիլիալը, տիկնիկային թատրոնը և այլն։

Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորական ակումբը և երկաթուղայիններին կուլտուրայի պալատը հագեցված են կինոսարքավորումներով, ունեն հարուստ դրադարան և ընթերցարան, տեխնիկական մի շարք կաբինետներ։ Այդտեղ գործում են ասանյակ ինքնագործ խմբեր։ Միայն Սեյանի անվան ակումբին կից երգի-պարի անսամբլում ընդգրկված են 100 հոգի, որոնք 1951 թ. ռեսպուբլիկական օլիմպիադայում դրավեցին առաջին տեղը և մասնակցեցին Մոսկվայում կայացած համամիութենական օլիմպիադային։

ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Վ. Բարսովան, դիտելով Լենինականի երկաթուղայիններին երգի-պարի անսամբլի ելույթը, ասել է. բացառիկ վառ, գունագեղ էր Անդրիոմիկասյան երկաթուղու Լենինականի կայարանի կուլտուրայի պալատի երգի-պարի անսամբլի ելույթը։ Հետաքրքիր ու բազմաղան էր անսամբլի ռեպերտուարը։

1955 թ. նոյեմբերին Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 35-ամյակին նվիրված գեղարվեստական

---

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի արխիվ, ֆ. 10, գ. 7, թ. 9։

ինքնագործունեության և ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական ստուգատեսին մասնակցեցին Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններին և ուսումնական հաստատություններին կից բազմաթիվ ինքնագործ խմբեր։ Իրենց ելույթներով առավել աչքի ընկան և առաջնություն շահեցին երկաթուղային նների Սևյանի անվան կուլտուրայի պալատի երգի-պարի խումբը, Կաթնարդյունաբերական տեխնիկումի անսամբլը, Գուլպա-տրիկոտաժ և գործվածքային ֆաբրիկանների, Բուժսանմիության երկձայն երգեցիկ խմբերը, ինչպես նաև Մանկավարժական ուսումնարանի և ՏՄԴ Միության ակումբին կից ուսուցչական քառաձայն երգեցիկ խմբերը։

Այդ ստուգատեսին հանդես եկան բազմաթիվ անհատ կատարողներ՝ շնորհալի քանոնիստ Ե. Ավետիսյանը, տեքստիլ կոմբինատի բանվոր Գ. Անանյանը, Մշեցյանների ընտանիքը և ուրիշները, որոնք արժանացան մայրաքաղաքի հանդիսականների ջերմ հավանությանը։

Լենինականում, մինչև պետական թատրոնի հիմնադրումը, քաղաքի աշխատավորությանը սպասարկում էր ժողովրդական տրուպան Ա. Արմենյանի ղեկավարությամբ գործող դրամատիկ խումբը։

1928 թ. աշնանը հիմնադրվեց Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական դրամատիկ թատրոնը։ Ռեժիսյորներ հրավիրվեցին՝ Բ. Սարյանը, Վ. Աճեմյանը և Ս. Արովյանը։ 1928 թ. դեկտեմբերին թատրոնը բեմադրեց Ֆուրմանովի «Խռովություն», Հ. Պարոնյանի «Արևելյան ատամնարույժ» առաջին ներկայացումները, ապա Տրենյակովի «Մռնչա Չինաստան»-ը, Կիրշոնի «Ռելսերը զրնգում են», Ս. Բաղդասարյանի «Մարոկկո» պիեսները։

Պարտիական և սովետական կազմակերպությունները շնորհալի կոլեկտիվի համար ստեղծեցին հնարավոր բոլոր պայմանները։ Թատերական խումբը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Վ. Աճեմյանի ղեկավարությամբ, ստեղծագործական լուրջ նվաճումներ ձեռք բերելով, արձագանքեց ընթացիկ կյանքի պա-

հանջներին, իր ռեպերտուարում մեծ տեղ տալով սովետական դրամատուրգիային, միաժամանակ մոռացության չտվեցին նաև կլասիկների գործերը։ Համամիութենական շեքսպիրյան օրերին ֆեստիվալային ներկայացումների թվում բարձր գնահատականի արժանացավ Վ. Շեքսպիրի «Տասներկուերորդ գիշերը» կոմեդիան, Լենինականի թատրոնի բեմադրությամբ։

Համկ(բ)Պ Կենտկոմի 1946—1948 թթ. արվեստի, դրականության և կուլտուրայի բնագավառում տեղ գտած իդեոլոգիական մի շարք սխալների ու թերությունների մասին ընդունած պատմական որոշումները նոր լիցք հաղորդեցին ինչպես ողջ երկրի, այնպես էլ Լենինականի արվեստի, դրականության և կուլտուրայի բնագավառի աշխատողներին։ Արվեստի աշխատողները, ելնելով այդ դիրեկտիվներից, վերակառուցեցին իրենց աշխատանքները, ստեղծեցին գաղափարապես բարձր, գեղարվեստական լիարժեք բազմաթիվ բեմադրություններ։

Կոլեկտիվում տարեցտարի աճեցին երիտասարդ կադրեր, որոնք ձևաք բերեցին ստեղծագործական հարուստ փորձ։ Թատրոնի կոլեկտիվը տվեց մի շարք բարձրորակ բեմադրություններ, որոնք մեծ հավանության արժանացան։ Ինչպես, օրինակ՝ Մ. Գորկու «Հատակում»-ը, Հ. Պետրոսյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ը, Կորնեյչուկի «Պլատոն Կրեչետ»-ը, Գ. Սունդուկյանի «Խաթաբալա»-ն, Ն. Զարյանի «Փորձաքաշ»-ը և «Ալա-Դեղեցիկ»-ը, Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի»-ն, Լ. Միքայելյանի «Գոշ»-ը և «Վարազդատ»-ը, Ալ. Արաքսմանյանի «Անտառները շարժվում են», Ս. Պայաղասի «Հարսանիք»-ը, Վ. Մինկոյի «Առանց անունները տալու» և այլ պիեսներ։ Լենինականի թատրոնի կոլեկտիվի այս բեմադրությունները սովետահայ թատրոնի պատմության մեջ դասվել են լավագույն ներկայացումների շարքը։

Լենինականի թատրոնի ռեպերտուարում նշանակալի երևույթ է «Լենինը 1918 թվին» պատմահեղափոխական պիեսի բեմադրությունը, որտեղ Վ. Ի. Լենինի կերպարի կատարմամբ հանդես են գալիս վաստակավոր արտիստ Ա. Ռշտունին և ժողովրդական արտիստ Արծ. Հարությունյանը։

Թատրոնի կոլեկտիվը հեղափոխությունից հետո տարիներին կատարելագործելով բեմական արվեստը, դարձել է մեր հանրապետության սիրված թատերական խմբերից մեկը, որը մեծ սիրով ողջունվում է, ինչպես Լենինականի, Հոկտեմբերյանի, Աղինի, Արթիկի, Դսեղասյանի, Ալավերդու, Կիրովականի, այնպես էլ Վրաստանի՝ Ախալցխայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների աշխատավորության։

Լենինականի թատրոնի կոլեկտիվը, ճիշտ ըմբռնելով իր խնդիրները, գլխավոր ուշադրությունը դարձրել է սովետական պիեսների բեմադրության վրա։ Թատրոնն իր գոյության տարիների ընթացքում բեմադրել է մոտ 150 պիես։

Լենինականի թատրոնի ստեղծագործ կոլեկտիվում են աճել և այժմ դարձել են հանրապետության ճանաչված ու սիրված դերասաններ, ժողովրդական արտիստուհի Ա. Ասլյանը, վաստակավոր արտիստներ Ա. Մկրտումյանը, Գ. Հարությունյանը, Մ. Կոստանյանը և ուրիշներ։ Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական թատրոնի կոլեկտիվում է աճել ու կատարելագործվել Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Վ. Աճեմյանը։ Նա այժմ գլխավորում է մայրաքաղաքի Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի կոլեկտիվի ստեղծագործ աշխատանքը։

Լենինականի աշխատավորները սիրում են իրենց թատրոնը և նրա շնորհալի կոլեկտիվին, հանձինս ժողովրդական արտիստներ Արմեն-Արմենյանի, Ե. Դուրյան-Արմենյանի, Լ. Բ. Զոհրաբյանի, Յ. Բ. Ամերիկյանի, Ա. Մ. Հարությունյանի, վաստակավոր արտիստներ՝ Ա. Կ. Ռշտունու, Մ. Ս. Հայկասարի, Ն. Ս. Ռոխյանի, Ա. Բ. Փաշայանի, Ա. Մ. Աղնավուրյանի, Ժ. Ս. Էլոյանի, Կ. Տ. Արծրունյանի, Հ. Գ. Ղազարյանի, Գ. Հարությունյանի (Գավրոշ), Ժ. Ա. Թովմասյանի, Ա. Մ. Երամյանի, Ռ. Մ. Մինասյանի, Լ. Ա. Սարգսյանի, Ռ. Ա. Օղաբաշյանի և ուրիշների։

1928 թ. մարտի 16-ին Լենինականի «Բանվոր» թերթի խմբագրատունը կայացավ քաղաքի պրոլետարդողների կազմակերպչական նիստ, որտեղ գրող Հմայակ Սիրասը զեկուցեց Անդրիոմկասյան պրոլետարդողների առաջին համագումարի

արդյունքների մասին, ընտրվեց ժամանակավոր հանձնաժողով, որին հանձնարարվեց հաշվառման ենթարկել գրական ստեղծագործության դրսևորումները։

Լենինականում ստեղծվեց գրողների միության բաժանմունքը. նրա մեջ համախմբվեցին քաղաքի ականավոր գրողներ՝ Գ. Կոմունին, Ա. Շահբազը, Վ. Բդնունին, Բ. Ստեփանին, Մ. Կորյունը, Գ. Հայրյանը, Վ. Սեյանը, Ս. Ագդունին, Բ. Կարապետյանը և ուրիշներ։ Իրենց գրական ստեղծագործական առաջին շրջանը Լենինականում են անցկացրել Գ. Սարյանը, Գ. Սահյանը և Ն. Զարյանը։ Տարեցտարի աճեցին գրական նորանոր ստեղծագործություններ։ Դրանց մի մասը իրենց լավագույն գործերով գրաբար ռեստորաբիկայի ճանաչված գրողներ։ Հրատարակվեցին Մ. Արմենի «Սկաուտ № 89» վիպակը, Սարմենի՝ «Թռիչք»-ը, Ս. Տարոնցու բանաստեղծությունների ժողովածուն, Խ. Դուշտենցի «Բանաստեղծություններ»-ը, Հովհ. Երիցյանի բանաստեղծությունների ժողովածուն, Անդր. Հովսեփյանի «Սիրտ» վեպը, Ք. Թադևոսյանի «Պատերազմ», Ադալենու «Շիրակ», Մ. Կորյունի «Կամո» վեպերը և Մ. Նարյանի «Կոմիտաս» պոեմը։ Առանձին ստեղծագործություններով հանդես եկան Միք. Հարությունյանը, Վ. Պետյանը, Ա. Ղուկասյանը, Ք. Գրիգորյանը, Ս. Թորոսյանը և ուրիշներ։ Այս ստեղծագործող կոլեկտիվում են աճել դրամատուրգներ Ա. Արաքսմանյանը, Լ. Միքայելյանը, Ս. Պայալաթը։

Քաղաքում տարբեր մասնագիտության պատկանող մարդիկ բեղմնավոր աշխատանք են կատարում Գրողների, Նկարիչների, Ճարտարապետների միության, Թատերական և Քաղաքական և գիտական դիտելիքների տարածման ընկերության Լենինականի բաժանմունքներում։

Ալեքսանդրապոլի — Լենինականի բնակչությունը ձեռներեց է, ընդունակ ու շնորհալի։ Այնտեղից դուրս են եկել ականավոր մարդիկ. դրանցից են հայ մեծանուն բանաստեղծ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ավետիք Իսահակյա-

նը, հայ նշանավոր բանաստեղծուհի Սուշանիկ Կուրղինյանը, հայագետ, պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանը, հայ ականավոր ազգագրագետ-հնագետ Երվանդ Լալայանը, արվեստի վաստակավոր գործիչ Դարեգին Լևոնյանը, Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ արվեստի վաստակավոր դերասան կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը, կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Շարա Տալյանը, Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի, Ստալինյան մրցանակի լաուրեատ Զարուհի Դոլուխանյանը, Սովետական ականավոր արվեստագիտ-քանդակագործ, ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր դերասան Սերգեյ Մերկուրովը, Գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ, ՌՍՖՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Դիմիտրի Նալբանդյանը, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ֆիզիոլոգ Խաչատուր Կոշտոյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, դոկտոր-պրոֆեսոր Արտաշես Շահինյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, դոկտոր-պրոֆեսոր Ալեքսանդր Հակոբյանը, գեներալ-մայոր Գրիգոր Գրիգորյանը, Սովետական Միության Հերոսի բարձր կոչման արժանացած Լենինականի դավակ Աշոտ Ամատունին, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Անդրանիկ Խաչատրյանը և շատ ուրիշներ։

Լենինականի բաղմահազար աշխատավորներ, ինչպես իրենց քաղաքում, այնպես էլ մեր երկրի տարբեր մասերում, ժողովրդական տնտեսության տարբեր ընագավառներում իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում մեր փառապանծ Հայրենիքում տարվող հերոսական աշխատանքներին։

1921 թ. մայիսին լույս տեսավ Հայաստանի Կոմպարտիայի Ալեքսանդրապոլի կազմակերպության և Ալեքսպոլի Ռևոլյուցիոն Կոմիտեի օրգան «Կարմիր Շիրակ» շաբաթաթերթը, որի առաջին խմբագիրն էր Հ. Գյուլիքեվխյանը։ 1922 թ. այդ թերթը լույս է տեսնում «Շիրակի ռանչպար»

անունով։ 1923 թ. հունվարի 15-ի թերթը դառնում է օրաթերթ (խմբագիր Ա. Հախումյան)։ 1923 թ. ապրիլ ամսից «Շիրակի ռանչպար»-ը դառնում է բանվորա-գյուղացիական օրընդմեջ լույս տեսնող թերթ «Բանվոր» անունով։ 1924 թ. փետրվարից «Բանվոր» թերթը դառնում է օրաթերթ[1]։ «Բանվոր» թերթն իր էջերում լուսաբանում էր Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության քաղաքականությունը, պայքար էր ծավալում այդ քաղաքականության կենսագործման համար։ Թերթը յայն կերպով լուսաբանում էր պլանների կատարման և գերակատարման, քաղաքի տնտեսական և կուլտուրական շինարարության խնդիրները, մոբիլիզացնում աշխատավորների ուժերը՝ սրված առաջադրանքների կատարման համար։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին «Բանվոր» թերթը, պարտիական կազմակերպության ղեկավարությամբ, մոբիլիզացնում էր քաղաքի աշխատավորության ուժերը գործարանների, ֆաբրիկաների, երկաթուղային հանգույցի պլանների կատարման համար։ Ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը կրկնապատկելու, վիրավոր մարտիկներին, էվակուացիայի ենթարկված և ճակատայինների ընտանիքներին հոգատարությամբ շրջապատելու համար։

Հետպատերազմյան տարիներին «Բանվոր» թերթը աշխատավորության ուշադրության կենտրոնում պահելով արդյունաբերության նոր ձեռնարկությունների շինարարության, քաղաքի բարեկարգման, պլանների կատարման հարցերը, իր էջերում մանրակրկիտ կերպով լուսաբանում է Անդրկովկասյան եղբայրական երեք ռեսպուբլիկաների քաղաքների՝ Լենինականի, Կիրովաբադի և Քութայիսիի միջև ծավալված սոցիալիստական մրցությունը, այդ քաղաքների աշխատավորության ձեռք բերած հաջողությունները։

«Բանվոր» թերթը ամենօրյա աշխատանքներում լուսաբանելով իդեոլոգիական հարցերը, ժողովուրդների բարեկա-

[1] Տարբեր տարիներ որպես «Բանվոր» թերթի խմբագիրներ աշխատել են ընկ. ընկ. Ա. Մկրտչյանը, Վ. Մովսիսյանը, Տ. Խորունին, Լ. Սիրաքը, Վ. Օհանյանը, Հ. Այվազյանը, Գ. Սահակյանը, Հ. Բազդասարյանը, Վ. Պետյանը, Խ. Բաբուհոյանը, Վ. Ամիրբեկյանը, Գ. Արեյանը և Գ. Աստյանը։

մության վեհ դաղափարները, մոբիլիզացնում է Լենինականի աշխատավորության բոլոր ուժերը ՍՄԿՊ-ի և Սովետական կառավարության կողմից տրված դիրեկտիվները կատարելու համար։

«Բանվոր» թերթից բացի, Լենինականում այժմ լույս է տեսնում տեքստիլ կոմբինատի «Մանածագործ» թերթը, որը մոբիլիզացնում է ձեռնարկությունների բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների բոլոր ուժերը՝ հանձն տրված առաջադրանքների բարձր որակի կատարման։

*

1925 թ. ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը կազմել էր Լենինական քաղաքի գլխավոր պլանի նախագիծը, բայց այն մնացել էր սնադիր վիճակում։ 1926 թ. երկրաշարժից հետո քաղաքում կատարված շինարարական աշխատանքները անհրաժեշտ պահանջ առաջացրին կազմելու քաղաքի վերակառուցման գլխավոր հատակագիծը։

1930 թ. Պետական-ճարտարապետական № 3 արվեստանոցի, ճարտարապետ Միքայել Մազմանյանի ղեկավարությամբ կազմած հատակագիծը հիմք հանդիսացավ Կոմունալ մինիստրության կառուցողական աշխատանքներին։ Բացվեցին հիմնական մայրուղիները դեպի Ստալինի անվան հրապարակը, որը կազմում է քաղաքի ճարտարապետական անսամբլը։

1940 թ. քաղաքի գլխավոր հատակագիծը կազմեցին ճարտարապետներ՝ Փ. Ս. Մանուկյանը, Գ. Ս. Մուրզան, Գ. Լ. Դավթյանը, Ս. Կ. Կարապետյանը, պրոֆեսոր Լ. Ա. Իլինի կոնսուլտացիաներով։ Քաղաքի վերակառուցման գլխավոր հատակագիծը հետպատերազմյան տարիներին լրացրին ճարտարապետներ Ռ. Գ. Գասպարյանը, Գ. Ի. Ավետյանը, Ա. Բ. Վարդանյանը։

Հետպատերազմյան հնգամյակների տարիներին Սովետական պետությունը 100 միլիոնից ավելի ռուբլի տրամադրեց քաղաքի բարեկարգման ու հետագա զարգացման համար։ Այդ տարիներին շահագործման հանձնվեցին բնակելի շենքեր՝

9 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ և մի քանի հարյուր անհատական բնակելի շենքեր՝ 13 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ։

Հետպատերազմյան հնգամյակների տարիներին Քաղաքային Սովետի և անհատական կարգով կառուցված բնակարաններից բացի, գերատեսչությունների կողմից Լենինականում կառուցվել և շահագործման են հանձնվել բնակելի խոշոր շենքեր, հանրակացարաններ, մանկապարտեզներ, ակումբներ, վարչական և արտադրական զանազան օբյեկտներ։

Լենինականում մինչև 1955 թ. վերջը պետական բնակելի ֆոնդը հասնում էր 179,1 հազար քառակուսի մետրի 1926 թ. 41,8 հազար քառակուսի մետրի դիմաց, իսկ անձնական սեփականություն կազմող բնակելի ֆոնդը հասնում էր 283,276 քառակուսի մետրի[1]։

Ամբողջովին վերափոխվեց Մ. Ի. Կալինինի անվան պողոտան, որը տեքստիլ կոմբինատի շրջանը կապում է քաղաքի կենտրոնի հետ։

Երկաթուղային կայարանից է սկսվում լայն, հարթ, ասֆալտապատված Վ. Ի. Լենինի քանվան պողոտան, հասնելով Կալինինի անվան պողոտային, նրա հետ միանում է Լենինի հրապարակում, ուր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 37-րդ տարեդարձի նախօրյակին, նոյեմբերի 6-ին բացվեց Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության հիմնադիր, ժողովուրդների մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի արձանը։

Վ. Ի. Լենինի արձանը քանդակել է ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ս. Դ. Մերկուրովը, իսկ պատվանդանը կառուցվել է Փամբակի գրանիտից՝ ճարտարապետ Մ. Գրիգորյանի նախագծով։

Լենինականում հետպատերազմյան տարիներին ստեղծվեցին բանվորական վեց ավաններ։ Տեքստիլ կոմբինատի՝ Պուրակավան, Նորավան, Երկաթուղայինների, Պոլիգոնի խճուղու, Պողպատավան և Մարալիկի ավանները։ Այդ ավանների

---

[1] Տվյալները վերցված են Հայկական ՍՍՌ Վիճակագրական վարչությունից։

5—6 հազար բանվոր-ծառայողներ, պետական վարկի օգնությամբ կառուցել են անհատական բնակարաններ։ Նրանք ունեն իրենց բանջարանոցներն ու այգիները։ Նորավանում, Պողպատավանում, Տեքստիլավանում կառավարության ցույց տված օգնության շնորհիվ, իրենց դեղեցիկ, սեփական բնակարաններն են կառուցել մոտ հինգ հարյուր հայրենադարձ հայեր։ Այժմ արագ թափով առաջ են գնում այդ ավանների բարեկարգման աշխատանքները։ Կառուցվել են դպրոցի, մանկապարտեզի, պոլիկլինիկայի, կուլտուրայի տան դեղեցիկ շենքեր, ինչպես նաև անցկացվել են ջրամատակարարման սիստեմ, էլեկտրալուսավորություն, ռադիո-հեռախոսային ցանց և այլն։

Աշխատավորների դեպուտատների Լենինականի Քաղաքային Սովետի[1] Գործկոմը ինչպես իր նիստերում, այնպես էլ տեսիաներում սիստեմատիկաբար քննարկել է կոմունալ բաժնում երկարամյա աշխատողներ Կ. Պետրոսյանի, Գ. Ժամակոչյանի, ինժեներներ Լ. Ջինանյանի և Ս. Քարամյանի վեկուցումները քաղաքի բարեկարգման աշխատանքների մասին։ Քաղաքային Սովետի Գործկոմը նշելով բարեկարգման աշխատանքներում կատարված որոշակի հաջողությունները, միաժամանակ ցույց է տվել, որ քաղաքում ինչպես անհատական, այնպես էլ պետական բնակարանային շինարարությունը դանդաղ է ընթանում, որովհետև այդ աշխատանքներում չի օգտագործվում մեքենայացումը։ Կոմունալ ցանցը չի բավարարում բնակչության աճող պահանջները։ Քաղաքում եղած կանաչ պանդվածների ծառերի նկատմամբ բացակայում է համապատասխան խնամքը։ Գերատեսչությունների դեկավարները պատասխանատվություն չեն կրում քաղաքի բարեկարգման համար։ Այս հարցերը Քաղաքային Սովետի Գործկոմը դարձրել է ամենօրյա աշխատանքների ծրագիրը։

[1] Լենինականում որպես Վագոնվետի Գործկոմի նախագահներ աշխատել են ընկ. ընկ. Ա. Նոայանը, Գ. Հանեսոգլյանը, Ա. Անանյանը, Ս. Քամալյանը, Ա. Դեվորդյանը, Ս. Աստաբելյանը, Բ. Պետրոսյանը, Գ. Գյոդակյանը, Ս. Վարդանյանը, Գ. Սահակյանը, Ա. Մարդոյանը և Լ. Քոչարյանը։

Քաղաքում բարեկարգման հետագա աշխատանքները հաջողությամբ իրագործելու, այդ ուղղությամբ եղած սխալներն ու թերությունները վերացնելու նպատակով պարտիական և սովետական ակտիվից բազմաթիվ ընկերներ մեկնեցին մեր երկրի առաջավոր քաղաքները՝ Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Խարկով, Ռիգա, Բաքու, Թբիլիսի և այլն։ Այդ քաղաքները մեկնած ընկերները ծանոթանալով շինարարական և կոմունալ ձեռնարկությունների աշխատանքներին, նրանց լավ փորձը տեղափոխեցին իրենց մոտ։

Հետպատերազմյան տարիներին Լենինականում կառուցված բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններից, վարչական և բնակելի շենքերից աչքի են ընկնում Լենինի պողոտայի վրա կառուցված դուպլա-տրիկոտաժ ֆաբրիկայի հանրակացարանի շենքը (ճարտարապետ Բ. Ս. Արաղյան), երկաթուղային տեխնիկումի շենքը (ճարտարապետ Կ. Ի. Ջավախիշվիլի), տեքստիլ կոմբինատի հանրակացարանը (ճարտարապետ Ա. Բ. Վարդանյան)։

Կալինինի պողոտայի վրա կառուցված Քաղաքային Սովետի կոմունալ բաժնի բնակելի շենքերը (ճարտարապետներ Մ. Ա. Մարտիրոսյան, Մ. Գ. Ալավերդյան, Շ. Ռ. Աղասյան) ոչ միայն հարմար բնակարաններ ունեն, այլև արտաքին և թե ներքին ճարտարապետական գեղեցիկ ձևավորում։

Գեղեցիկ և հարմարավետ են նաև ՀԿՊ Լենինականի Քաղկոմի շենքը (ճարտ. Զ. Բախշինյան), ինչպես նաև ինժեներներ Ղ. Սարգսյանի, Ա. Աստվածատրյանի, Հ. Ավետովի, Դ. Շահինյանի, Խ. Միքայելյանի կառուցած տեքստիլի արտադրական կորպուսներն ու բնակելի շենքերը[1]։

Այդ և այլ բազմաթիվ շենքերի վրա իրենց երկարամյա անբասիր կառուցողական աշխատանքով աչքի են ընկել անվանի վարպետներ, որմնադիրներ, քանդակագործներ, ատաղձագործներ՝ Մ. Լուսիկյանը, Ս. Մալխասյանը, Բ. Հեքիմյանը, Կ. Թամրազյանը, Ա. Դասսարյանը, Ա. Կարապետյանը, Հ. Գինակցյանը, Հ. Հովհաննիսյանը, Կ. Լուսիկյանը, Հ. Նազար-

[1] В. М. Арутюнян, К. Л. Оганесян, „Архитектура Советской Армении", Изд. Акад. наук АрмССР, Ереван, 1955 г.

յանը, Կ. Հովհաննիսյանը, Կ. Ոսկանյանը, Հ. Կարապետյանը և շատ ուրիշներ։

Այս վարպետները իրենց կառուցած շենքերը երևսպատել են բնական քարերով, զարդարել են սյուներով, զարդանկարներով, քանդակագործական ընտիր խոշակներով, որոնք շենքերը դարձրել են հարուստ ու դրավիչ։

Լենինականցիները սիրում են իրենց քաղաքը։ Նրանք կազմակերպվող բազմամարդ շաբաթօրյակներով անմիջական մասնակցություն են ունենում քաղաքի բարեկարգման աշխատանքներին։

Լենինականը կանաչազարդ սոցիալիստական քաղաք դարձնելու ուղղությամբ մեծ աշխատանքներ է կատարել Քաղաքային Սովետի բարեկարգման գրասենյակը, որը 100 հեկտար տարածությամբ կանաչ մասսիվներ է ստեղծել նոր ավանում, տեքստիլ պուրակում և Պոզպատավանում, 130 հեկտար տարածության վրա աճեցվում են միլիոնավոր տնկիներ, որոնք տրվում են ոչ միայն քաղաքին, այլև մի շարք շրջանների։

Յուրաքանչյուր տարի Լենինականի փողոցներում, պողոտաներում, խճուղիների վրա հազարավոր ծառեր են տնկում, թփեր են աճեցնում, կանաչ մեծ մասսիվներ, նորատունկ անտառիկներ, պուրակներ են ստեղծում։

Լենինականի Ստ. Սահումյանի անվան կինոտրոնական հանդեսյան և կուլտուրայի պարկը մեր ռեսպուբլիկայի լավագույն պարկերից մեկն է։ Բայի դրանից, քաղաքում կան Ն. Կ. Կրուպսկայայի անվան մանկական պարկը, տեքստիլի պուրակը և այլ պուրակներ՝ տարբերանարեական ձեռնարկությունների, վարչական շենքերի և հասարակական խոշոր շենքերի բակերում, որոնք ոչ միայն գեղեցկություն են տալիս քաղաքին, այլև առողջապահական մեծ նշանակություն ունեն։

Սովետական իշխանության առաջին իսկ տարիներից քաղաքի պարտիկան և սովետական օրգանների ուշադրությունը կենտրոնում է եղել բնակչության կոմունալ սպասարկման գործը։ Հետպատերազմյան տարիներին պետությունը հսկա-

յական միջոցներ հատկացրեց ջրամատակարարման ցանցը ընդարձակելու, բնակչության աճող պահանջները բավարարելու համար։ 1955 թ. քաղաքի ջրամատակարարման ցանցը և կոյուղին հասավ մի քանի տասնյակ կիլոմետրի։

Ալեքսանդրապոլի հին բաղնիքները ամբողջովին վերափոխվեցին ու վերակառուցվեցին։ Միաժամանակ տեքստիլում, կաշվարանում, մսի-պահածոների կոմբինատում շահագործման հանձնվեցին շորս նոր բաղնիքներ, որոնց կից բացվեցին մեքենայացված լվացքատներ։ Բազմաթիվ բաղնիքներ են կառուցված նաև Լենինականի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններին կից։ Քաղաքի հիմնական-ձեռնարկությունների և անձնական սպասարկման համար կապի լայն ցանց է ստեղծված։ Քաղաքն իր ավանններով ռադիոֆիկացիայի է ենթարկված։ Տասնյակ հաղորդավոր աշխատավորներ ունեն ռադիոընդունիչներ։

Բնակչությանը սպասարկելու համար քաղաքում ստեղծված է տաքսամոտորային պարկ։ Պարկն ունի մոտ 150 գիշել և թեթև մարդատար մեքենաներ։ Ավտոբուսային երթևեկություն է սահմանված քաղաքում, ռեսպուբլիկայի շրջանների և քաղաքների միջև։

Քաղաքի զարգացման և բարգավաճման հետ միասին տարեց տարի աճել է Լենինականի բնակչությունը։

1897 թ.	Ալեքսանդրապոլ	քաղաքն	ունեցել է	30.616[1]	բնակիչ
1914 թ.	»	»	»	51.326	»
1922 թ.	»	»	»	44.636	»
1926 թ.	Լենինական	»	»	54.857	»
1930 թ.	»	»	»	52.754	»
1939 թ.	»	»	»	79.476[3]	»
1950 թ.	»	»	»	94.000	»
1956 թ.	»	»	»	103,000[4]	»

[1] Первая всеобщая перепись населения русск. импер 1897 г. Эриванской губернии, 1905 г., стр. 1.

[2] Թվերը տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 16, ց. 3, էջ 11։

[3] Նույն տեղում։

[4] „Народное хозяйство СССР". Статистический сборник, Москва, 1956 г., стр. 25.

Քաղաքի զարգացման, բնակչության աճման հետ միասին բնականաբար աճել է Քաղաքային Սովետի բյուջեն։ Ալեքսանդրապոլ քաղաքի բյուջեն 1913 թ. կազմում էր 147.800 ռուբլի։ Սովետական իշխանության տարիներին հետզհետե աճելով 1955 թ. կազմում էր 53 միլիոն 70 հազար ռուբլի։

Քաղաքային Սովետի բյուջեում աճել են յուրաքանչյուր բնակչին ընկնող ժողովրդական կրթության և առողջապահության ծախսերը։ Եթե 1913 թ. այդ ծախսերը կազմում էին միայն կոպեկներ, 1954 թ. յուրաքանչյուր բնակչի վրա ծախսվող գումարը ժողովրդական կրթության գծով կազմում էր մոտ 200 ռուբլի, նույնքան էլ առողջապահության գծով[1]։ Քաղաքային Սովետի բյուջեն ոչ միայն քաղաքի զարգացման ու բարգավաճման, այլև աշխատավորների նյութական ապահովության, կուլտուրական մակարդակի բարձրացման ամենափայլուն արտահայտություններից մեկն է։

Այսպիսով, Սովետական իշխանության տարիներին պարտիայի ու Սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, բարեկարգվում ու բարգավաճում են մեր երկրի սոցիալիստական քաղաքները, այդ թվում նաև Լենինականը։ Սոցիալիստական քաղաքների առանձնահատկությունն այն է, որ նրանք հանդիսանալով արդյունաբերական կենտրոններ, բնակչության խոշոր վայրեր, միաժամանակ վարչական, տնտեսական, կուլտուրական կենտրոններ են։ Մեր երկրի սոցիալիստական քաղաքները իրենց բարգավաճման հետ առաջ են տանում նաև դյուղը, որը Սովետական իշխանության տարիներին սոցիալիստական վերակառուցման է ենթարկվել։

* * *

ՍՄԿՊ XX համագումարի հրավիրման վերաբերյալ հաղորդումը ամենալայն արձագանքը գտավ մեր երկրի բազմամիլիոն ժողովուրդների մեջ, առաջ բերեց սովետական ժողո-

---

[1] Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Ֆ. 10 գ. 8, էջ 10։

վրրդի քաղաքական ու աշխատանքային ակտիվության նոր, հզոր վերելք։ Առաջավոր ձեռնարկությունների կոլեկտիվների նախաձեռնությամբ երկրում սոցիալիստական մրցություն ծավալվեց XX համագումարի պատվին։ Այդ մրցության մեջ մտան ինչպես Հայկական ՍՍՌ-ի, այնպես էլ Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղային հանգույցի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները։

Մեր երկրի աշխատավորները դեպի ՍՄԿՊ XX համագումար գնացին տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում ձեռք բերած խոշոր հաջողություններով։ Այդ հաջողությունները է՛լ ավելի ամրապնդեցին մեր Հայրենիքի հզորությունը, ՍՍՌՄ տնտեսական կապերը ժողովրդական դեմոկրատիայի երկրների հետ։

Պարտիայի XX համագումարի կողմից հաստատված ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի գլխավոր խնդիրներն են՝ ծանր արդյունաբերության առավել զարգացման բազայի վրա ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա հզոր աճը, իրականացնել գյուղատնտեսական արտադրության շեշտակի վերելքը և դրա հիման վրա հասնել սովետական ժողովրդի նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի նշանակալի բարձրացման։ Վեցերորդ հնգամյա պլանի կենսագործումը էլ ավելի կբարձրացնի ՍՍՌՄ տնտեսական հզորությունը, կամրապնդի նրա հետագա պաշտպանունակությունը, աշխատավորների նյութական բարեկեցությունը, որը վառ արտահայտություն է գտնում հնգամյակում ազգային եկամուտի մոտ 60 տոկոսով ավելանալու մեջ։ Վեցերորդ հնգամյակում նախատեսվում է հիմնականում ընդհանուր միջնակարգ կրթություն իրականացնել քաղաքներում և գյուղական վայրերում, ավելացնել մասնագետների պատրաստումը բարձրագույն ու միջնակարգ ուսումնական հաստատություններում, բարձրացնել գիտության դերը՝ տնտեսական ու կուլտուրական շինարարության պրոբլեմների լուծման գործում։

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլի-

կայի համար վեցերորդ հնգամյակի ընթացքում նախատեսված է ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը ավելացնել մոտ 1,7 անգամ, այդ թվում ռեսպուբլիկական արդյունաբերությունը 1,6 անգամ։ Վեցերորդ հնգամյակում էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելանալու է մոտ 1,3 անգամ։ Ավարտվելու է Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանների շինարարությունը և սկսվելու է 100 հազար կիլովատ կարողությամբ Տաթևի հիդրոէլեկտրակայանի կառուցումը։ Կառուցվելու են բազմաթիվ նոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Վեցերորդ հնգամյակի դիրեկտիվները, որոնք մեր աշխատանքի մոտակա ժամանակաշրջանի ծրագիրն են, արտահայտում են մեր երկրի բազմապդ ժողովուրդների կենսական շահերը, միլիոնավոր մարդկանց խոհերն ու ձգտումները,

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի շինարարության և ճարտարապետության գործերի պետական կոմիտեի ռեսպուբլիկական նախագծային ինստիտուտը կազմում է Լենինական քաղաքի հետագա զարգացման գլխավոր պլանը, ուր նախատեսվում է կառուցել տասնյակ նոր գործարաններ։ Առաջիկա տարիներին Լենինականում կկառուցվեն ավտոպահեստային մասերի և պրիբորաշինական խոշոր գործարաններ։

Քաղաքում նոր կառուցվող գործարանների հետ միասին կընդարձակվեն երկաթուղային հանգույցը, գալպա-տրիկոտաժ և կաբի ֆարբիկաները, ինչպես նաև տեղական արդյունաբերական ձեռնարկությունները։ Այդ և ուրիշ ձեռնարկություններում լիովին կմեքենայացվեն աշխատատար պրոցեսները։

Քաղաքում ավտոերթևեկության հետ միասին կկազմակերպվի տրոլեյբուսային երթևեկություն։

Կկառուցվեն բազմաթիվ շենքեր։ Կբացվեն նոր փողոցներ, նոր պողոտաներ։ Կառուցվող բնակելի շենքերը, հասարակական հիմնարկները, կինո-թատրոնները, դպրոցները, պոլիկլինիկաները, մանկապարտեզները, խանութները նոր տեսք կտան օրեցոր բարգավաճող քաղաքին։

Կասֆալտապատվեն ու կկանաչազարդվեն փողոցներն ու բանվորական տները, կստեղծվեն քաղաքի աշխատավորության համար հանգստի և կուլտուրայի նոր պարկեր։

Այսպիսով, Լենինականը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի արդյունաբերական և կուլտուրական երկրորդ խոշոր կենտրոնը, զարգանալով ու բարգավաճելով կդառնա մեր փառապանծ Հայաստանի լավագույն սոցիալիստական քաղաքներից մեկը։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Հեղինակի կողմից 5

Գլուխ առաջին

Պատմական անցյալից 7

Գլուխ երկրորդ

Լենինականը նախապատերազմյան սոցիալիստական շինարարության տարիներին 36

Գլուխ երրորդ

Քաղաքի աշխատավորությունը Սովետական Միության հայրենական Մեծ պատերազմի տարիներին 80

Գլուխ չորրորդ

Լենինականը հետպատերազմյան հնգամյակների տարիներին 117

Գլուխ հինգերորդ

Աշխատավորության բարեկեցությունն ու քաղաքի բարգավաճումը 152

ԿՈՉՄՈ ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ԿՈՉՄՈՑԱՆ

Ա ն ց ի ն ա կ ա ն

Լուսանկարները Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Պատ. խմբագիր Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
Հրատ. խմբագիր Ռ. ՄԱՆՈՅԱՆ
Նկարչական ձևավորումը Հ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Գեղարվեստական խմբագիր Լ. ՍԱՂՈՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ Ա. ԱԼԱՆՅԱՆ

ՀՀԽ № 414 Հրատ. 1407 Պատվեր 83 Տիրաժ 2000 ՎՏ 06700

Հանձնված է արտադրության 1/III 1987 թ.։ Ստորագրված է տպագրության 26/VI 1987 թ.։ Հրատ. 8,7 մամուլ, տպագր. 11¹/₃ մամուլ + 17 ներդիր, թուղթ 84×108¹/₃₂։ Գինը կազմով 3 ռ. 50 կ.։

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Արովյան, 124

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0016728

ԳԻՆԸ 3 ռ. 50 կ.

ЦЕНА
II
9443